

Amari



83 9860P6P

9368

A.R.©

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն



- 1.- Վ. ԹԵՔԵԱՆ Մոխիրէ ծառ
- 7.- Լ. ՓԻՐԱՆՏԵՆՆԻՍ Վեց անճամարութիւններ,
որոնք հեղինակ մը կը փնտռեն
- 25.- Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Ֆոլաժ
- 27.- Յ. ՕՇԱԿԱՆ Սահակ Պարզեւան
- 41.- Յ. ՆԱԳՈՒՎԵԱՆ Երուանդ Քոչար եւ հայկական հարցեր
- 51.- Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Անաւարտ եղբի մը
«Ներքին դաշտանկարը»
- 61.- Ե. ԿԱՐԱՔԶԻՆԻՍԿԻ Հրանտը
(հայացուց՝ Է. Յովհաննիսեան)
- 72.- * * * Կարի անվայելուչ . . .
- 77.- Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Գրիշ Դաւթեանի «Կաթիլ ծով»ը
- 79.- Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Բանաստեղծական յանդուզն հանդէս մը՝
«Այլափոխումներ»
- 80.- * * * Մշակութային լուրեր

Քաղաք

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

ԲՐ. ԾԱՐԻ. ԲԻԻ 11 ԿՈՍՏԱՆԲ 1982 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վ. Թ. Ե. Բ. Ա. Ն.

Մ Ո Ւ Ի Ր Է Ծ Ա Ռ

(ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ)

Ոչ հայր երակդ չեմ
Մայր բնարդ չեմ ես

Ազաւնիները կը մեռնին ազաւնիներ շուսածով աչքերը
գիշերներու անվերջութեան հպող հանգոյցներ են

Ես ինքզինքիս համար չէ որ կ'երգեմ ինչպէս արեւելի մէջ
Արեւելի մէջ դատարկ են ազաւնետունները
Ազաւնիները չվերադարձան
Կարմիր աչք մը կ'իկոսպեա՞ն եւ հիւանդկախ
Իրմէ՛ հասող հեղուկին մէջ խեղդունցան երիտասարդ բնանկարներ
Համր միտացին ծառերը եւ մուխը խուլ ծառացաւ
Մի ներքը գաւազն որ քեզի օրօր չկրցայ երգել
որ ծովը կապոյտ պիտի չգտնես եւ միմարէ՛ները՝ կանգուն
Մի ներքը հայր որ արիւնախում ինձոյ՛ի մէջ մոխրաման դարձաւ տունդ
Մայր չմանաւ որ արցունք չունեցար քափելու

Ես ինձմէ կը փախչիմ մնացեալը — բոլորը կը հալածեն զիս
եւ տեղ մը չեմ հասնիր Ունե՛նա՛յ այս բազմերանց առանձնութիւնը
Միաներկ երկուութեան պատտանները բազմանիչ Պատերը փակ են եւ

փողոցներուն մէջ են անոմք որոնք իրենց նամբաները չեն յիշեր
 Փողոցները խնդում կ'ազեն սպրեւու համար Հիմա բոսիկ են
 մայքերը Ազրահաւաքներու երկար աւելները կանգնած են խուլերու
 դռներու ետին կ'ազէի խօսիլ ազրահաւաքին հետ որ ստողերը
 չուզեց աւել որպէսզի քաֆուն խորշերու մէջ բունած այս ցաւը
 բունեզ՝ իր երկարութիւնը լեզուիս վրայ չգալարէ նորէն

Երէ պահը չըլլար՝ կ'ըլլա՞ր անհումութիւնը
 Եւ ո՞ւր կը խանձուէր մարքը տառապանքի
 Թող սուգաւի աւագը ոչինչ յախտնական է
 ոչինչ միայն տարակոտանքի բուլէն
 որ կը խախտէ ինչ որ յախտնական է
 Անսպասուին մէջ՝ ծերայեր երկրաշարժի
 նեղանցքներէն կը սահիմ

Փաթեշիզմի նշաններ
 ոգրերգութեան կայտած օղակը կը սկսի շարժիլ
 Անարեկ ուժեր կը համալարուին այստեղ
 Լսած էի բոլոր սարսփները կ'սպրին միատեղ
 Յայտնուէ օղակ

արձանիկ կտրուած թւերով
 որուն ուժը գրեթէ անասուններու մէջ
 կը թափառի շնագայիերու ունեցով

Յուտութիւն

ուր միլիոնաւոր
 մեռած կատուներու ողջ նայուածքը կ'սպրի

Խնդուէր դեղին օղակին կը պարէ արագ-արագ
 Յիշողութիւնս կը թխմեմ ծերայերու մէջ մաս-մաս
 կը սկսիմ դառնալ շրջադառնալ վերադառնալ
 օղակին՝ ուրկէ ձայնս կը վերադառնայ
 ինչպէս մահուրնէ ետք խօսող բերան

Գունազանց երանգապակ' բերանս
 բնայեցաւի սապատ հարթող գլան
 Կը յիշեմ որ յիշողութիւնս անդին է ժամանակէն
 անդին է ինձմէ

Յարաշարժ յօդերս կ'ազեմ մտնել ներս
 օղակէն ներս

սպրիլ ձայնիս մէջ
 Ձայնիս գոր կորսնցուցիմ ձայները երկրաշարժի
 Ահա մէկ մէկ բոկեմ պիտի փաթորիկի շղթաներու
 շղթացող մատակրներու փշրող Յայտածքներէ գալարուող ձայները
 այս իւրաքանչիւրին պատմութիւնը գիտեմ

Ելիր բարձրացիր կ'ըսեմ
 արեւէն առաջ արեւէն առաջ ծնանիր
 իմացիր այլեւս

Հասկնալու կարողութիւնս այնքան մեծ էր

որ բոլոր անհաւանակամութիւնները կ'աղբիւն մէկտեղ
 Շնագայլերը՝ ոգորկ աղակիլի պէս
 մահացու ուժերուս պսակնցով
 կը բզկտէին գիշերներս
 Ըսի որ ժամանակէն անդին իջայ որպէսզի չմոռնիմ
 Պէտք է գտնէի ձայնս լեզուովս կէտադրէի վայրերս
 Արդէն կը մտնեմ օդակէն
 առասպելի պէս յաւիտեան շնչել կը քուի
 առասպելի պէս անշոշափելի
 խեղդելով ժամանակը ինչպէս գերեզմանափորի բահին
 վերայամնուած հողի գուղձ

Թող կոպերս կեղահար՝ իրենց տեսածը պատմեմ
 Աստուածներ մետաղագոյն մագրու հոնս
 զիցամարտէ ետք իջեցուցած իրենց քեւերով
 անընդհատ կը լարեն այս աշխարհը տիկնիկ
 այս աւագահատիկը ուր մեք
 անասպտներս կը բնակինք
 առանց զարմանալու
 եւ ամէնէն սեւաւորը
 առանց գայլոյթի
 Զխորտակուող վախով եւ բարութեամբ անգոյ
 առանց մեռնելու եւ մեռնելով
 բնդմիշտ
 սնանեցանք մահով

Կ'աճէր անձկութիւնը հրափաշի նման
 Պուշ պուշ աչքեր կային մանգաղաձեւ քեւեր
 Դաշեակներ ուտիմէ ձեռնացներով ծածկուած
 ետ հրեցին ճորածիներ լեզապատեան
 Մայրերու աղիքներէն հառաչանքը կուրցած ինկաւ
 Վախճըր կերպասիտեղեւան միտխան աչքերու
 Դուրս ինկան կտրատուած լեզուներ վագեցին իւրաքանչիւր տունէ
 կարուստս այս քափառումներուս մէջ
 բազմակերպ միատիպ ինքնաբեր

Քամի գիշեր
 Խաղաղութեան քուցնագգիծներ
 պատերազմի ծրարներով եկան գաղտուկ
 ու բազմակիւն լռի զծել տունին
 խննդֆենբու փրփրերախ հոնգագին ճառերէ ետք
 յայտնուեցաւ
 այս քաղաքը
 սկզուտի վրայ փռուած կապոյտ գլուխ
 Սկզուտի վրայ փռուած գլուխ կապոյտ որուն առջեւ
 բանասիրող ցանկունի մը քարիւղ բուրդ իր մտներով պիտի պարէ

Քաղաք մտքուցիդ կմայր ջարդուխուրթ
 Ընկղմեցան էոսթիք փորագրութիւններդ
 Քանի՛ հրորդ անգամ
 Լուսանկարչական մեքենաներու ճարպիկ կայծեանում
 Նարնջեմիներու շուքը՝ չորցած շեղած շող
 Կը յայտնէր դագաղներու բազմանկիւնութիւնը
 Ո՞ւր պիտի դնեմ մարմնիս ափշները
 Ո՞ր աւերի համրութեան մէջ լիարեան
 Ո՞ր ճամբաներուն որունց շնչառութիւնը
 կասեցաւ տափօտն հրասայլերով
 Ինչպէ՞ս դարձար Երկիր շամփուր բացողեայ
 Գիւղի՛ լճուած մահակ ու կապանակ հովիւի
 Եւ քաղաքի՛ խուլ հերձտուած հրապարակ
 Կսկիծներու մամուկ
 Երկնակամարը արդէն կը ճգնուի իբրեւ դեղափռչի
 Եւ լեռները կը դասարկուին երկաթէ կեղծ բազուկներէ
 Կը սրսփայ մորթոգ այստեղ սկուտեղի վրայ փոռած կապոյտ գլուխ
 Ե՞րբ ո՞ր կիզանողի վրայ յանկարծ
 Երիտասարդ ջուրը՝ երգի պարկը ուտին կորսուեցաւ
 Քարեր մանկան ձեռքեր էին
 Վերուհին տակ լուսախոյտը ջրվէժներու
 կանաչ լեզուաքաղցնիւն տակ շնչող ձայներ կը փնտռէին
 Հովուական տիկեր՝ ծակտակէն
 Զքատտաններ՝ ոտնակախաւած
 Երկիւնք մը մորթահամ եղաւ
 արեան ճապաղիքը ծածկելու
 Կայսարը ցատկոտեց մալիֆիւլներու ճման
 Մանուկներ խիունջներու պէս անեցան
 Հալած փլագմա եւ տաք կմայրքներ
 Աշխարհին ռզնուր տրտմութիւն
 տրտմալիւր տրտմալար տրտմասաց
 ախտաժամիդ մէջ ձայնս մարթոգ կը քերէ

Եւ հիմա
 Ո՞վ պիտի ապրի միւսէն աւելի ո՞վ ապրի կ'ուզէ

Բան մը կայ Երկիր չկալա վիրաւոր խաղաղութեանդ

Վերադարձայ ադամաժութի մոխիրներուն մէջէն
 Այս սուգ արշալոյսը խմելու
 Տերեւներու կմայրները լուս դիտեցին
 ու լեռներու մկանուհիքը թուլցեր էր
 ոչ ազոյց ոչ կապ ու կշկուտ
 Որքատուկը՝ մանրակարիք իր ասիքուն
 բոցի փտը բռներ էր

Վերապրողներ ներմակ շրթումքներով
 Փրթած խոզովակներ քով քովի կը բերէին
 կու գային մրտալով կու գային հաստակով
 ու ծիծաղի կամարները կը քակէին
 Վարը՝ կայծակնածու նեղներու կողքին
 ձայնս իր արձագանգը երկարօրէն խնամեր էր
 չանկեր կային աւագին վրայ երբ դուրս եկայ
 լեզուս՝ ներմակ թուղթի նման ուռուցեցաւ երախին մէջ
 որ կլանեց երկիսմ գիմին գոյգ նզեռնի
 Շրթներս կը սրսփային ամուհիդ մէջ
 երբ որ կը փշրէի ճնարս կամուրջներուդ վրայ

Թերեւս այդ թերեւս այդ բառը չկա՛ր

Արեւը անդարձօրէն կ'ընկղմէր գեղնած խաղաղութեան մէջ
 Մութնակախին
 կախցի նայուածքս պարաններու ծառին ուր մշուշը ծաղկած տեսայ
 Քառին լոյսը իջաւ աչքերուս որոշեց յայտնուիլ
 իր յայտնումով՝ թերեւս անցեալդ ամբողջամար
 Յիշողութիւնս սկսաւ ուռիլ
 եւ գանկիս մէջ երեքսուսի ինկաւ բառը
 այդ բառը որ չկա՛ր

Ու վազեմի որքը նքռած
 նգապատրոյս նոր յոյսերով կանգնած էր
 Հնունն փայտէ տուններու քով
 տուրակներով կախ մածունը կը ծլծլթար
 ու նաւերը կը ծկթէին հաւկիթներէն
 եւ քարերու թարթիչներէն լուս կը դիտէր ծոթրինն երկչոտ
 ծխափողներ կը նգնէին կանաչ ձայնով
 երկառեսեան ազրիւրները կ'երգունէին խանգով մտի
 ու կախաւը կա՛ր կախաւ դեռ կարկնչելով
 դուրս կը բերէր հին արեւը ծիրանածայր

Վերադառնալ բնագանցակնօրէն
 միջանցնիլ արտանցնիլ յարանցնիլ

Արեւը սայլի երկու առեղներու միջեւ
 հասաւ հողիդ վրայ
 ուր ոչ ծովը կեցաւ
 ոչ յայտնուեցաւ սիւնը հրագօծ

Դիւակած ժամիդ բարձրացայ քեզի ծեփուած աչքերով
 բայց որտե՞ր գնեմ երախնած գլուխներս
 ինքնախնդդ ձեռքերս պիտի լուսմ ինչս'վ

Աչքերու երակները դարձան ջիզ բառի
 կռուի ուղտափուշէ դարձան երափուշ
 եւ վերածուեցան մոխիրէ ծառի
 Մոխրածուծ դրէ՛ք ձեր մարմիններուն
 Դրէ՛ք մոխրածուծ ձեր մարմիններուն

Երկար քամբայ մը ունի՛մ որ պէտք է անցնի ինձմէ
 Աղօթեցէ՛ք ինձի համար

Մեռած մանուկ մը ծնայ

Գրկեցի գայն ցաւերու արեւափառ շուշիայով

Սենեակին մէջ ուր ապրեցայ հողէ յատակին հետ
 Սենեակին մէջ ուր ապրեցայ բոլոր սպաննուած հայրերու կորուստով
 յարատեւ շօշափելով գանկերը անո՛ք
 եւ երկրաշարժի ծերպերուն իջայ ու վերադարձայ աչքերով մայրացած
 Գետնին վրայ երփնագրումն է սնուններուդ բոլոր
 Անունդ ծայրփեցնել ստուերներուն մէջէն
 Երկիր Ծննդոց անել ու անելից
 անխակտելի հանգոյցներով խրած է մաշկիդ
 սկաննուած լեզուս

Տուր ինձի բառը այդ բառդ որ ծնայ
 Մեր բառը որ հասաւ արիւնամերժ սրտով

Խ ազ ազ ու թիւն Երկիր
 Խաղաղութի՛ւն հագիւիդ
 Խաղաղութիւն դարեր հողմահալած Մտտիդ
 Խաղաղութիւն դարեր հողմահալած Սարիդ
 Գարեր արմափրփուր եւ խռոված Հացիդ
 Մայրիներու լանջիդ եւ անտառիդ Սօսեաց
 Ատրուշան եղէգներուդ Լիճիդ երկարավիզ
 Վահագնի ծնունդիդ սէրիդ Աշտարութի
 Մեհեաններուդ ինքնատա արեւամուլ Մովիդ
 Խոր վերքերու ցանցիդ բռն լայր իջնէ վիրակապ փափուկ
 Ընդերքներուդ Երկիր անափ Խաղաղութի՛ւն

ՎԵՆԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

Լ. Փ Ի Բ Ա Ն Տ Ե Լ Լ Օ

Վ Ե Ց

ԱՆՁՆԱՌՐՈՒԹԻՒՆՆԵՐ,

Ո Ր Ո Ն Ք

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Մ Ը

Կ Ը Փ Ն Տ Ռ Ե Ն



Հայացուց՝
Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

(Միջնարարի գանգը կը ծանուցանէ փորձին վերսկսումը: Բեմադրիչի գրասենեակէն, աղջնակին եւ տղեկին հետ դուրս կու գայ խորք աղջիկը: Ան կը պռոայ գրասենեակին ուղղութեամբ)

ԽՈՐՔ ԱՂՋԻԿԸ. — Ո՛չ, ո՛չ: Կարդի բերէք գուք ձեզ: Ես ոչինչ կ'ուզեմ հասկընալ այդ խառնաշփոթութիւններէն: (Աղջնակին, զոր վազելով կը փաշտէր թեմին վրայ): Եկուք, Թողէ՛ք, վազե՛ք, վազե՛ք:

(Տղեկը, շուարուն, կը հետեւի ամենց, աւելի դանդաղ՝ հեռուէն)

ԽՈՐՔ ԱՂՋԻԿԸ (կանգ առնելով, հակելով դէպի աղջնակը, որուն դէմքը կ'առնէ ձեռքերուն մէջ). — *Ոնկճուկս, խուճապահար կը նայես ինձի քու*

մեծ ու գեղեցիկ անջերով... Ինքզինքիդ կը հարցնես, թէ ո՞ւր ես: Բեմի մը վրայ ենթ, գիտես... (Այնպէս, որ իբր թէ պատկիյն մէկ պահանջին կը պատասխանէ): Ի՞նչ է բեմ մը: — Կը տեսնես... բեմը տեղ մըն է, ուր մարդիկ խաղ մը կը խաղան ճշմարտութեան համար: — Կը խաղան կատակերգութիւնը: Մենք պիտի խաղանք կատակերգութիւնը: Ճշմարտութեան համար, գիտես: Դուն եւս: (Կը գրկէ ազգնակը, կը սեղմէ կտրծֆին պատկիյն գլուխը, մեղմօրէն օրօրելով գայմ): Օ՛հ, սիրելիս, սիրելիս, ի՞նչ անպիտան կատակերգութիւն մը պիտի խաղաս դուն: Ի՞նչ ահարկու բան երեւակայած են զեզի համար: Պարտէզ մը... աւազան մը... նայէ, հոն են... Կը հարցնես ինծի՞ ո՞ւր: — Հոս, հոս, բեմին մէջտեղ... Անոնք տեքորները պիտի ըլլան: Դժբախտութիւնը, աղուտբոս, ա՛յն է, որ ամէնը տեքոր է, ոչ մէկ բան իրական է հոս... Աւելի լաւ պիտի ըլլար երեւակայել... Բեմին վրայ ամէն բան պիտի ըլլայ ներկուած խաւաքարով, շուրջի ամբողջ քարը խաւաքարտէ պիտի ըլլայ, ջուրը՝ խաւաքարտէ, տունկերը եւս... Բայց թերեւս ներկուած խաւաքարտէ աւազան մը աւելի հաճելի պիտի ըլլար, քան իրական աւազան մը, սիրելիս, կարենալ անոր մէջ խաղալու համար... Բայց՝ ո՛չ, ասիկա պիտի ըլլայ ուրիշներուն համար խաղ մը, ոչ թէ զեզի համար, դժբախտաբար, սիրելիս, դուն՝ որ իրական էս, որ իսկապէս պիտի խաղաս իրական աւազանի մը եզրին, կանաչ մեծ աւազան մը, պամպուկներու շուքին, բաղիկներով լեցուն, որոնք կը լողան հոն, տեղափոխելով շուքը... Դուն պիտի ուղես բունը զիկնիքին մէկը, եւ այն տուն... Ո՛չ, պզտիկ Թողէթն, մայրիկը պիտի չհսկէ վրադ անոր պատճառաւ: Ես, ես պիտի ըլլամ զո՛ւր իմ սեւ թիթեանիկներու... Եւ այն միւսը... (Կը ձգէ ազգնակը եւ իր սովորակամ գէշ տրամադրութեամբ կը դառնայ դէպի տղիկը): Դուն հոս ի՞նչ կ'ընես՝ քու մուրացիկի երեւոյթովդ: Գու սխալիդ հետեւանքով է, որ այս պզտիկը պիտի խեղդուէր, քու կեցուածքիդ պատճառով, ինչպէս եթէ ես վճարած չըլլայի բոլորին համար՝ զեզ առնելով այս տունէն ներս: (Թոնելով քուէն՝ ձեռքը գրպանէն հանելու համար): Ի՞նչ ունիս գրպանիդ մէջ: Ի՞նչ կ'ըսես: Դո՛ւրս հանէ ձեռքը: (Կը հանէ ձեռքը գրպանէն, կը նայի մէջը եւ ատրնանակ մը ճշմարելով): Ա՛հ... Ո՞ւր, ինչպէ՞ս հարած ես զայն: (Տղիկը, շատ տծգոյն, կը նայի անոր՝ առանց պատասխանելու): Ապո՛ւշ, եթէ քու տեղը ըլլայի, զիս մեռցնելու փոխարէն՝ կը մեռցնէի այդ երկուքէն մէկը կամ երկուքն ալ, թէ՛ հայրը, թէ՛ դաւակը:

(Հայրը կ'իլլէ գրասենակէն, անոր կը յաջորդէ բեմադրիչը, սկսած աշխատանքէն խանդավառուած)

ՀԱՅՐԸ.— Օ՛ն, այս կողմ եկուր... Ամէն ինչ պատրաստած ենք:
ԲԵՄԱՅԻՆԸ (իբր կարգին ոգեւորուած).— Ո՛նչքեմ, օրիորդ, եկէ՛ք, որ վերջնականօրէն քանի մը կէտեր ճշդենք:
ԽՈՐՔ ԱՂՋԻԿԸ (հետեւելով անոնց, դէպի գրասենակը).— Բայց քանի որ ամէն ինչ պատրաստ է...

(Հայրը, բեմադրիչը, խորթ ազգիկը վայրկեան մը կը մտնեն բեմադրիչին գրասենակը: Տղան դուրս կ'իլլէ, մայրը կը հետեւի սպուն)

ՏՂԱՆ (դիտելով իօրը, բեմադրիչին եւ խորք ազդեան մուտքը գրասենեակէն ներս) — Ա՛հ, ի՛նչ հաճոյք: Ի՛նչ հաճոյք: Եւ ըսե՛լ, որ կարելի չէ հեռանալ:

(Մայրը կը փորձէ հայիլ անօր, քայց ան անմիջապէս կը խճարիէ տչ-
քերը, որովհետեւ տղան գլուխը կը դարձնէ ու կը հեռանայ: Մայրը կը նըս-
տի: Ազգնակը եւ տղեկը կը մօտենան անօր: Ան դեռեւս կը հայի տղուն, խո-
նարեաբար, յուսալով կարենալ խօսիլ անօր հետ)

ՄԱՅՐԸ — Եւ ճակատագիրը, որուն ես ինքս դատապարտուած եմ, յոռեղոյ-
նը չէ՞: (Եւ իբր տղան յտակօրէն ցոյց կու տայ, որ զինք մտիկ ընել
չ'ուզիր, ան կը ճշայ): Ա՛հ, Ատտուած իմ, ինչո՛ւ ստեղծել տայիսի
դաժան տեսարան մը: Ուրեմն չի՞ բուեր, որ մարդ մը երեւակայած
ըլլայ ապրիլ նման վիշտ մը: Հիմա պէտք է յանձնել զայն հանդիսա-
տեններու ճարակին:

ՏՂԱՆ (մեկուտի, քայց մօրը կողմէ լսուելու դիտումով) — Ներկայացնել տ-
սիկա... Եթէ դոնէ պատճառ մը ըլլար: Բայց ան (ցոյց տալով հայրը)
ուրիշ հանած է իրեն հաճելի թուացած իմաստը: Ամէն անգամ, որ բան
մը տեղի ունենայ, իւրաքանչիւր մարդ զայն կը մեկնաբանէ իր ուզա-
ծին պէս. ճշմարտութիւն՝ այս կողմը, սխալ՝ այն կողմը: (Կարն լը-
նուրիւմ մը): Կը դանդաղի՞ դոնուած ըլլալով տեղ մը եւ դիւրքի մը
մէջ, ուր պէտք չէր երեւեր, իր կեանքի մէկ վայրկեանին, որ պէտք
էր գաղտնի մնար, օտար՝ այն անձնաւորութեան, զոր պէտք էր ցու-
ցադրել ուրիշի աչքերուն... Բայց ո՞ն: Ան չվարակեցա՞ւ այնպէս, հար-
կադրելու համար ինծի գտնել ա՛յն՝ որ ոչ մէկ գաւակ երբեւիցէ պէտք
չէ դանէ: Գիտնալ, որ իր հայրը եւ մայրը կ'ապրին իբրեւ մարդ մը եւ
կին մը, ունին իրենց յատուկ կեանքը, հետու՛ հօր եւ մօր անձնաւո-
րութենէն, զոր անոնց կը վերադրեն զաւակները... Հազիւ երեւան հա-
նած ենք, որ անոնք այր եւ կին են, մեր կեանքը այլեւս անոնց կեան-
քին կապուած է բացառաբար մէկ կէտով, — կէ՛տ մը, որ կընայ իրենց
միայն սմօթ պատճառով:

(Մայրը ձեռքերուն մէջ կը պահէ գլուխը: Օքեակներէն եւ խորքի զու-
նէն տեսարան կու գան դերակատարները, բեմայարգարը, առարկաներ տե-
ղադրագը, յուշարարը եւ, նոյն ատեն, բեմադրիչին գրասենեակէն՝ հայրը
եւ խորք ազդիկը)

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Դէ՛, զէ՛, պարոններ: Ո՞ր է մեքենավարը:
ՄԵՔԵՆԱՎԱՐԸ — Ներկայ:
ԲԵՄԱԴՐԻՉԸ — Իջեցաւ ճերմակ ծաղիկներով դահլիճին տեղը: Երկու
սիւններ, եւ խորք մը՝ դուռով. այդքանը կը բաւէ: Աճապարեցէ՛ք,
խնդրե՛մ:

(Մեքենավարը դուրս կ'ելլէ վազելով, մինչ տնօրէնը կը խօսակցի բե-
մայարգարին, առարկաներ տեղադրողին, յուշարարին եւ դերասաններուն
հետ, բեմադրույեան փորձը տեղի կ'ունենայ)

ԲԵՄԱԴՐԻՉԸ (առարկաներ տեղադրողին) — Գնա՛ նայէ, որ պահեստին մէջ
մահճակալ մը կա՞յ, որուն վրայ կարելի ըլլայ նստիլ, տիւտն-անկո-
ղին մը:

- ԱՌԱՐԿԱՆՆԵՐ ՏԵՂԱԴՐՈՂԸ.**— Այս, հարկաւ, պարոն բեմադրել, կայ կանաչ տիւան մը :
- ԽՈՐԹ ԱՂՁԻԿԸ.**— Ի՞նչ կը դեղդեղես : Տիւանը կանաչ չէր : Մաղկաւոր դեղին էր, թաւշանման, շատ լաթն, իրապէս հանդստաւէտ :
- ԱՌԱՐԿԱՆՆԵՐ ՏԵՂԱԴՐՈՂԸ.**— Այդպիսին չունինք մենք :
- ԲԵՄԱԴՐԻՉԸ.**— Ատիկա հարց չէ : Տուր ինձի ինչ որ ունիս :
- ԽՈՐԹ ԱՂՁԻԿԸ.**— Ինչպէ՞ս թէ հարց չէ : Այնպէս էր, ինչպէս ըսի ձեզի :
- ԲԵՄԱԴՐԻՉԸ.**— Այս պահուս, փորձ մըն է, որ կ'ընենք : Խնդրեմ, մի խառնելուք ատոր : (Առարկաներ տեղադրողին) : Պէտք պիտի ըլլար ցուցաբերել մը, աւելի երկար եւ ցած :
- ԽՈՐԹ ԱՂՁԻԿԸ.**— Եւ միտոանի սեղան մը, մահակոնիկ սեղան մը, կապոյտ պահարանին համար :
- ԱՌԱՐԿԱՆՆԵՐ ՏԵՂԱԴՐՈՂԸ (քիմադրիչին).**— Կայ ոսկեզօծ պղտիկ սեղան մը :
- ԲԵՄԱԴՐԻՉԸ.**— Շատ լաւ, ստիկա բերէք :
- ՀԱՅՐԸ.**— Գաւաթ մը :
- ԽՈՐԹ ԱՂՁԻԿԸ.**— Եւ փարաւանը, կ'աղաչեմ : Ինչպէ՞ս պիտի ընեմ ատանց փարաւանի :
- ԱՌԱՐԿԱՆՆԵՐ ՏԵՂԱԴՐՈՂԸ.**— Այո, սիկին, բնաւ հոգ մի ընէք :
- ԲԵՄԱԴՐԻՉԸ (խորթ աղջկան).**— Քանի մը հանդերձակալ եւս, այդպէս չէ՞ :
- ԽՈՐԹ ԱՂՁԻԿԸ.**— Շա՛տ... կոյտ մը հանդերձակալներ :
- ԲԵՄԱԴՐԻՉԸ (առարկաներ տեղադրողին).**— Բեր ինչ որ գտնես :
- ԱՌԱՐԿԱՆՆԵՐ ՏԵՂԱԴՐՈՂԸ.**— Հասկցայ, պարոն բեմադրիչ :

(Առարկաներ տեղադրողը կ'իյլ վագրով եւ, մինչ քիմադրիչը կը խօսի յուշարարին, ապա՝ անճամարութիւններուն եւ դերասաններուն հետ, կը փախադրէ մտոմանշուած կահկարասիները եւ կը տեղադրէ իր յարմար դասած ձեռով)

- ԲԵՄԱԴՐԻՉԸ (յուշարարին).**— Դուք անցէք ձեր տեղը, հրամայէք, ահաւստիկ սենարին, արար առ արար : (Կու տայ անոր քանի մը քերթիկ) : Բայց պէտք է, որ դուն կիրարկես դժուար բան մը :
- ՅՈՒՇԱՐԱՐԸ.**— Սղաղբի՛ :
- ԲԵՄԱԴՐԻՉԸ (զոհուծակութեամբ անակնկալի եկած).**— Ինչպէ՞ս, սղաղբել զիտէ՞ք :
- ՅՈՒՇԱՐԱՐԸ.**— Քիչ մը, պարոն բեմադրիչ :
- ԲԵՄԱԴՐԻՉԸ.**— Բայց ատիկա լուսադոյններէն լուսադոյնն է : (Դիմելով գործարներէն մէկուն) : Վազէ իմ խուցս եւ բեր հոն գտնուած բոլոր ձերմակ թողթերը :
- (Գործարը գուրս կ'իյլ եւ գրեթէ անմիջապէս կը վերադառնայ տըրցակ մը թուղթով, զոր կը յանձնէ յուշարարին)
- ԲԵՄԱԴՐԻՉԸ (յուշարարին).**— Դուք պիտի հետեւիք տեսարաններուն, անոնց խաղարկութեան ընթացքին եւ պիտի ջանաք արձանագրել պատուախանները, գոնէ՛ ամէնէն կարեւորները : (Ինքսաններուն) : Դե՛հ, պարոններ, տեղ բացէք : Այս կողմ կեցէք (ցոյց տալով իր ձախը) եւ լաւ ուշադրութիւն ըրէք :
- ՊՁՆԱՎԻՐ ԴԵՐԱՄԱՆՈՒՂԻՆ.**— Բայց թող ռուէք... :
- ԲԵՄԱԴՐԻՉԸ (կամիսելով անոր դիտարարիւմը).**— Մի՛ մտահոգուիք, յանպատրաստից պիտի չխաղաք :

- ԱՌԱՋԻՆ ՄԵՍ ԳԵՐԱՍԱՆԸ.**— Եւ ի՞նչ պիտի ընենք մենք:
- ԲԵՄԱԴՐԻՉԸ.**— Ոչինչ: Այս պահուն, մտիկ ըրէք եւ դիտեցէք: Ապա ձեզի պիտի յանձնենք արտագրուած դերերը: Հիմա պիտի կատարենք փորձը: (Յայց տալով անձնաւորութիւնները): Պիտի փորձեն:
- ՀԱՅՐԸ** (կարծես երկինգէն ինկած ըլլար, ետքքակից վրայ տեղի ունեցած անցուդարձերուն մէջ).— Մենք, փորձել...
- ԲԵՄԱԴՐԻՉԸ.**— Այո, փորձ մը (ցայց տալով դերասանները), ցոյց տալու համար ջիշ մը անոնց:
- ՀԱՅՐԸ.**— Բայց քանի որ մենք տրամին անձնաւորութիւններն ենք:
- ԲԵՄԱԴՐԻՉԸ.**— Այո, դուք զանձնաւորութիւններն էք, եթէ կ'ուզէք, բայց բեմի վրայ, սիրելի պարոն, զանձնաւորութիւնները չեն, որ կը խաղան, այլ՝ դերասանները: Գիտէ՞ք ուր կը գտնուին անձնաւորութիւնները: (Յայց տալով յուշարարին ծակը): Անոնք բանտարկուած են ձեռագրերին մէջ, երբ կայ ձեռագիր մը:
- ՀԱՅՐԸ.**— Հակառակ չեմ պնդեր: ... Բայց, վերջապէս, թոյլ տուէք, դերասանները չեն... կ'ուզեն ըլլալ... անոնք կը ձեռագրեն ըլլալ անձնաւորութիւններ, այնպէս չէ՞: Բայց քանի որ այսօր դուք բախտը ունիք ձեր աջիւ ունենալու իրական անձնաւորութիւններ...:
- ԲԵՄԱԴՐԻՉԸ.**— Մտքերնիդ կը հասկնամ... Դուք պիտի ուզէիք խաղալ փիկսը հանդիսատեսներուն աւջեւ:
- ՀԱՅՐԸ.**— Այո, մեզ ներկայացնելու համար այնպէս՝ ինչպէս որ ենք:
- ԲԵՄԱԴՐԻՉԸ.**— Դէ լա՛ւ. զեղեցիկ պիտի ըլլար ատիկա:
- ԱՌԱՋԻՆ ՄԵՍ ԳԵՐԱՍԱՆԸ.**— Այն ատեն, ինչի՞ պիտի ծառայէիք մենք՝ դերակատարներս:
- ԲԵՄԱԴՐԻՉԸ.**— Դուք կը կարծէք, որ մարդիկ այսպէս կը խաղան թատերադուրիներ: Միծաղս կը շարժէք: (Դերակատարները կը խնային): Հիմա նայեցէք անոնց, ինչպէս կը խնայեն: (Մտաւարձ մը յիշելով): Բայց, ի դէպ, չբաժնեցինք դերերը: Նայեցէք, ինչպէս բարդ չէ: (Խնամակալութիւն): Դուք, տիկին, կը ստանձնէք մօր դերը: (Հօրը): Պէտք է անուն մը գտնել անոր:
- ՀԱՅՐԸ.**— Անունը Ամելի է:
- ԲԵՄԱԴՐԻՉԸ.**— Ամելին անունն է ձեր կնոջ: Իր իսկական անունը պիտի չտանք իրեն:
- ՀԱՅՐԸ.**— Ինչո՞ւ չէ: Երբ այդ է անունը: ... Բայց իսկապէս, եթէ այս տիկինն է, որ... (Նշան մը կ'ընէ խնամակալութիւնն ուզուածամբ): Ինչո՞ք համար Ամելին (ցայց տալով մայրը) ինքն է: Բայց ըրէք՝ ինչպէս կ'ուզէք... (Մոլորածի պէտ) Ձեմ պիտի ալլեւ ինչ բեմ ձեզի... Կը սկսիմ... Ձեմ կրնար բացատրել միտքս, բարեբէն իւրաքանչիւրը ուրիշ կը չնչէ, կը հանէ տարբեր ձայն մը...:
- ԲԵՄԱԴՐԻՉԸ.**— Մի՛ մտահոգուիք... Պիտի դտնենք ճի՛շտ թոնը... Ինչ կը վերաբերի անունին, եթէ անպայման կ'ուզէք Ամելի ըլլայ, թող Ամելի ըլլայ: Կամ ալ անոր պիտի տանք ուրիշ անուն մը: Առայժմ, մենք անձնաւորութիւնները պիտի ճշդենք հետեւեալ ձեւով... (Երիտասարդ առաջին դերակատարին) դուք կ'անձնաւորէք աղան: (Պէնսիեր դերասանուհիին) իսկ՝ դուք, օրինո՞ւ, բնականաբար, խորթ ազգիկը:
- ԽՈՐՈՒ ԱՂՋԻԿԸ** (բարձրաձայն խնայելով).— Ինչպէս ես, անոր:
- ԲԵՄԱԴՐԻՉԸ** (բարկութեամբ).— Տարօրինակ ի՞նչ կայ ատոր մէջ:
- ՊՋԵԱՍԷՐ ԳԵՐԱՍԱՆՈՒՂԻՆ** (ցատումով).— Դեռ մինչեւ հիմա ո՛չ ոք համար-

ձակած է խնդալ վրաս : Եթէ դադարին զիս յարգելէ՝ կը նախընտրեմ ձը-
դել-հեռանալ...

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ — Բայց ոչ, ներողամիտ կ'ըլլաք, ձեր վրայ չէի խնդար...
ԲԵՄԱԴՐԻԶԸ (խորք աղջկան) — Եստ պատուըւած պէտք է զգայիք դուք
ձեզ, անձնաւորուելով...

ՊՁՆԱՍԻՐ ԴԵՐԱՍԱՆՈՒԼԻՆ (ընդմիջելով, սրտմտած) — Ատոր կողմէ...
ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ — Բայց ինչ որ կ'ըսէի՝ ձեր մասին չէր, է՛մ մասին էր...
Ինքզինքս բնաւ «ձեր» մէջ չեմ տեսներ, ահա՛ ամէնը... Ձեմ գիտեք...
Դուք... Դուք բնաւ ինձի չէք նմանիր :

ՀԱՅՐԸ — Ահաւասիկ, ճիշդ այդ է... Մտիկ ըրէք, պարոն, ձեր արտայայ-
տութիւնը...

ԲԵՄԱԴՐԻԶԸ — Ձեր արտայայտութիւնը... Բայց դուք ձեզ կը համարէք
արտայայտութիւն ունեցող մը : Երբե՛ք :

ՀԱՅՐԸ — Ինչպէ՛ս... Մենք ձեր արտայայտութիւնը չունի՞նք :

ԲԵՄԱԴՐԻԶԸ — Երբեք : Ձեր արտայայտութիւնը պարզապէս հուժ նիւթ մըն
է, որուն մարմին մը եւ զէժ մը, ձայն մը եւ շարժումներ պիտի տան
դերակատարները, որոնք (զիտցէք) զիտցան արտայայտել ասիկէ տար-
բեր որակով բաներ : Նիւթը, զոր դուք կը բերէք, այնքան չնչին բան
է, որ եթէ յաջողի ոտքի մնալ բեմին վրայ, ամբողջ արժանիքը, հա-
ւատացէք ինձի, պէտք է վերադրել իմ դերակատարներու :

ՀԱՅՐԸ — Ձեմ համարձակիր հակաճառել ձեզի, պարոն, բայց իսկապէս, ա-
տիկա անմարդկային տառապանք մըն է մեզի համար, որ ծնած ենք,
ինչպէս կը տեսնէք, մարմինով եւ զէժով, սահմանուած...

ԲԵՄԱԴՐԻԶԸ (ընդմիջելով գայն, անհամբերութեամբ) — Բայց կը ծպտը-
ւին, սիրելի պարոն, դերակատարները կը ծպտուին...

ՀԱՅՐԸ — Այո, բայց ձայնը, շարժումները...

ԲԵՄԱԴՐԻԶԸ — Ա՛լ վերջացնենք : Բեմին վրայ դուք չէք կրնար դու՛ք ըլլալ
այնպէս՝ ինչպէս էք : Բեմին վրայ պիտի ըլլայ դերակատար մը, որ
խաղայ հոր դերը : ահաւասիկ ամէնը :

ՀԱՅՐԸ — Եստ լուս կը հասկնամ, պարոն : Բայց նաեւ կը կուսնեմ թերեւս,
թէ ինչու ձեր հեղինակը, որ մեզ կը տեսնէր կենդանի եւ այնպէս՝ ինչ-
պէս որ էինք, չէ ուզած գրել իր արամը : Ես պիտի շուշէի նախատել
ձեր դերակատարները : Աստուած մի արասցէ : Բայց կը կարծեմ, թէ
զիս ներկայացուած տեսելով... Ձեմ գիտեք որուն կողմէ...

ԿԱՐԵՒՈՐ ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐԸ (խորխտաբար) — Ի՛մ կողմէս, եթէ ա-
տիկա ձեզ չի նեղիր :

ՀԱՅՐԸ (խոնարհ, քաղցրացած, բարեւելով) — Եստ պատուըւած եմ, պա-
րոն... Այո, ահաւասիկ, կը մտածեմ, որ ի՛նչ ալ ըլլայ բարեկամեցո-
ղութիւնը եւ ամբողջական արուեստը, զոր կ'ընծայէ պարոնը՝ զիս իր
մէջ բնորոնելով...

ԿԱՐԵՒՈՐ ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐԸ — Ամբողջակա՞ն, ի՛նչ ըսել է ամբողջա-
կան, ձեռք քաշէ, ձեռք քաշէ :

ՀԱՅՐԸ — Այն մարմնաւորումը, զոր պիտի ընէ իմ անձիս, նոյնիսկ իր ծըպ-
տումով, ինձի նմանելու համար...

ԿԱՐԵՒՈՐ ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐԸ — Ատիկա բաւական դժուար պիտի ըլ-
լայ :

(Գերակատարները կը խնդան)

ՀԱՅՐԸ — Արդարեւ, դժուար պիտի ըլլայ ինձմէ տալ անձնաւորում մը, որ

զիս ցոյց տայ այնպէս՝ ինչպէս որ եմ: Հարցր զէ՛մքը տայուն մէջ չէ, քան այն եղանակին, որով պիտի մեկնարանէք իմ ինքնութիւնս, եւ ղեռ զիս զգալու ձեռ եղանակին, որ երբեք պիտի չըլլայ ա՛յն եղանակը, որով կը զգամ ինքզինքս: Եւ ինծի կը թուի, թէ մարդիկ, որ կոչւած են մեզ դատել, պարտաւոր են հաշուի առնել այս հանգամանքը...

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Ա՛հ, դուք հիմա կը մտահոգուիք քննադատութեամբ, քայքայէք քննադատները, որ ըսեն իրենց ըսելիքը: Մենք աւելի մտահոգւի՞նք տրամը ոտքի կեցնելու հարցով, եթէ կարենանք: (Նայելով շարքը): Նայինք սմէն ինչ պատրաստ է: (Գերակատարներուն եւ անձնատրուքիներուն): Տեղ բացէք: Թո՛ղ տուէք ինծի տեսնել ժամանակ չկորսնցնենք: (Խորք ազլիան): Ասիկա լաւ կը թուի՞ ձեզի:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ — Պիտի խոստովանէի ձեզի, որ ինքզինքս երբեք սնոր մէջ չեմ գտներ:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Բնականաբար: Դուք պիտի չուզէիք բնաւ, որ այս բնիկն վրայ եղածին պէս կոտորեն տիկին Փաշէի խանութին նստի սենեակը, զոր դուք կը ճանչնայիք: (Հօրը): Դուք ինծի ըսիք ծաղկաւոր պերտիկ դահլիճ մը:

ՀԱՅՐԸ — Այո, պարոն:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Դէ լաւ, ուրեմն... Կահարապիներուն համար եղածը բաւարար է: Միտասնի սեղանը, քիչ մը աւելի տառ... (Մեքենայարները կը հնազանդին: Բեմախաղարին): Գտէք ինծի պահարան մը, կապոյտ՝ եթէ կարելի է, եւ տուէք զայն պարոնին:

ԲԵՄԱՅԱՐԴԱՐԸ — Պահարան մը... Նամակի՞ համար:

ՏՆՕՐԷՆԸ ԵՒ ՀԱՅՐԸ — Նամակի համար, այո, նամակի:

ԲԵՄԱՅԱՐԴԱՐԸ — Անմիջապէս:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Ուրեմն, սկսի՞ք: Առաջին տեսարանը օրիորդին տեսարանն էր: (Մեծ պլանսերը քայլ մը առաջ կու գայ): Ո՛ր, ոչ գուր. ըսել կ'ուզէի՞ օրիորդը (ցոյց տալով խորք ազլիկը) դո՛ւք, դիտեցէ՛ք:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ — Պիտի տեսնէք, թէ ինչպէ՞ս կ'ապրիմ այդ տեսարանը: Մեծ ՊՁԵԱՍԻՐԸ (վիբաւորութի նման) — Ես ալ կրնամ զայն ապրել, եթէ ուզեմ:

ԲԵՄԱԴՐԻՉԸ (գլուխը ձեռքերուն մէջ առած) — Խնդրեմ, կը բաւէ, ա՛լ չնստախօսենք: Տեսարան առաջին, օրիորդը ու տիկին Փաշէն: Ա՛հ (պահ մը շուրթած) իսկ տիկին Փաշէն...

ՀԱՅՐԸ — Մեզի հետ չէ, պարոն տնօրէն:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Ինչպէ՞ս ընենք ուրեմն:

ՀԱՅՐԸ — Սակայն ան գոյութիւն ունի, դիտէ՞ք. կա՛յ, գոյութիւն ունի:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Լաւ. սակայն ո՛ւր է ինք:

ՀԱՅՐԸ — Թո՛ղ կու տա՞ք: (Խօսքը ուղղելով դերասաններուն): Եթէ տիկինները բարեհաճին իրենց գլխարկները պահ մը ինծի տրամադրել...

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆԵՐԸ (յաջորդաբար քիչ մը անկնկալի եկած, քիչ մը խընդալով, գրեթէ միաբերան) — Ինչո՞ւ. մեր գլխարկներ՞ը: Ի՞նչ կ'ըսէ: **ԲԵՄԱԴՐԻՉԸ** — Ի՞նչ պիտի ընէք տիկիններուն գլխարկները:

(Դերասանները կը խնդան)

ՀԱՅՐԸ — Ոչինչ, ոչինչ. պարզապէս դանտեք պահ մը պիտի դնեմ հանդերձակալներուն վրայ... Եւ եթէ տիկիններէն ո՞մանք բարեհաճին տալ նստել իրենց վերարկները...

ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ.— Միայն վերարկունե՞րը...
— Մասանան տանի, Ի՞նչ պիտի ընէ...
— Խենթ է...

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆԵՐԸ.— Ինչո՞ւ կ'ուզէք վերարկունեքն ալ...
— Վերարկունե՞քն ալ:

ՀԱՅՐԸ.— Պահ մը գտնո՞ք եւս հանդերձակալներուն վրայ կարելու համար...

Կը խնդրե՞մ, որ բարեհաճե՞ք ընդառաջել խնդրանքիս, եթէ կարելի է:
ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆԵՐԸ (գլխարկները հանելով, ումե՛ք մտել վերարկունեքը եւ զամո՛ք հանդերձակալներուն վրայ անցընելով).— Եթէ այդպէս կը փոփոքե՞ք, լա՛ւ:

— Ահաւաստիկ, եղաւ.

— Մի՞նչո՞ւ է այս բոլորը.

— Գրաւի՞ պիտի դնենք մեր վերարկունեքը:

ՀԱՅՐԸ.— Այո, ցուցափեղկին մէջ դրած ըլլալու պէս... ահա, ա՛յսպէս:

ԲԵՄԱՆԻՐԻՉԸ.— Սակայն կրնա՞ք հասկնալ, թէ ինչո՞ւ:

ՀԱՅՐԸ.— Ահա թէ ինչու, պարո՞ն... այս ձեռով՝ ամբողջացնելով կահաւորումը, տեքորները այն սենեակին, ուր տիկին Փաչէն, հաւանաբար, իր առեւտուրի առարկաներէն հրապուրուած՝ յանկարծ ինք եւս երեւայ մեր մէջ: (Յայց տալով խորքի դուռը): Նայեցէ՛ք, նայեցէ՛ք, ահա...

(Խորքի դուռը կը բացուի ու տիկին Փաչէն կ'առաջանայ: Գիրուկ, մտքորոշեալ եղած եւ ուռեցում, մետախէ սնու շրջագոյնս մը հագած, դէմքը շարժում, մէջքին արծաթէ երկար շղթայ մը, ուրկէ մկրատներ կախուած են: Գերատաններուն գարնամքին, ասիւրերան վիճակին մէջ, խորք ազդիկը կը վազէ դէպի տիկին Փաչէն)

ԽՈՐԹ ԱՂՁԻԿԸ.— Եկաւ, եկաւ:

ՀԱՅՐԸ.— Ձեզի չըտի՞... ահա՛, ինքն է:

ԲԵՄԱՆԻՐԻՉԸ (սկզբնական գարնամքով յաղթանարած եւ ընդվզած վիճակով մը).— Ի՞նչ է այս խաղը:

ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱՍԱՆԸ (գրեթէ միաժամանակ).— Ծուարեցանք մնացի՞նք. մարդ չի գիտեր ուր է, ինչ կ'ընէ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱՍԱՆԸ.— Աս ուրկէ՞ եկաւ:

ՊԱՐՁԱՄԻՏԻ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ.— Երեւի պահեստի պահած էր:

ՄԵՍ ՊՁՆԱՍԻՐԸ.— Կատարեալ անպարարութիւն է, հաւատա՛:

ՀԱՅՐԸ (ընդամենը տիրապետելով).— Ներեցէ՛ք, ներեցէ՛ք. յանուն հասարակ էջմարտութեան մը ինչո՞ւ կ'ուզէք սպաննել իրականութեան մը այս հրաշքը, որ կը ծնի ոգեկոչում, ներգրաւում, կազմաւորում իր նիւթէն իսկ, եւ որ աւելի իրաւունք ունի ապրելու այս բնին վըրայ, քան դուք բոլորդ... որովհետեւ ան աւելի կենդանի է, քան դուք բոլորդ... Ո՞վ է այն զերտասանահին, որ տիկին Փաչէի դերը պիտի խաղայ. թող լաւ մը գիտէ տիկին Փաչէն, որ ահաւաստիկ... Ձէք կըբռնար շնորհունիլ, թէ այն զերտասանահին, որ զինք պիտի ներկայացնէ, նուազ իրական պիտի ըլլայ, քան նոյնինքն տիկին Փաչէն: Տեսէ՛ք, աղջիկս արդէն ճանչցաւ զայն ու մտակցաւ իրեն: Տեսէ՛ք, թէ Ի՞նչ տեղի պիտի ունենայ:

(Այս խօսակցութեան ընթացքին, տիկին Փաչէի եւ խորք ազդկան միջոցի սեղանի վրայ տեսարանը սկսած է արդէն ցած ձայնով, ինչ որ բնական է)

բանի մը քեմին վրայ չի կրնար ըլլայ: Այնպէս որ, երբ հորք պահանջին վրայ, դերասանները կ'անդրադառնան ու կը դառնան ճայելու, քէ ի՞նչ տեղի կ'առնենայ, տիկինն Փաչէն արդէն ձեռքը դրած է աղջկան կրակին տակ ու գլուխը վեր առնել կու տայ: Գերասանները, պահ մը, շատ կեղծամտացած ուշադրութեամբ մտիկ կ'ընեն՝ լսելու համար տիկինն Փաչէի խօսքերը: Բայց որովհետեւ ան կը խօսի շատ մեղմ ու հազիւ լսելի ձայնով, իր քսածները չեն հասկըցուիր):

ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Յետո՞յ:
ԱՌԱՋԻՆ ՄԵՇ ԴԵՐԱՍԱՆԸ.— Ի՞նչ կ'ըսէ:
ՄԵՇ ՊՉՆԱՍԻՆԸ.— Բան մըն ալ չի լսուիր:
ԵՐԻՏԱՍԱՐԳ ԼՈՒԱՋԻՆ ԴԵՐԱՍԱՆԸ.— Աւելի բարձր, աւելի՛ բարձր:
ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (հետամուլով տիկինն Փաչէին, որուն դիմէին յաղթանակած ժըպիտ մը կը գծագրուի, ու մտնելովով դերասաններուն) — Բարձր... բայց այնպիսի բաներ են ըսուածները, որ բարձր չեն ըսուիր: Եթէ ես կրցայ բարձրաձայն ըսել, պոռալով ըսել այդ բոլորը (հայրը ցայց տալով) դինք ամէջնելու համար էր: Վրէժս ասնելու ձեռք էր: Տիկինը համար, սակայն, պարագան նոյնը չէ. եթէ իր ըսածները բարձրաձայն ըսէ, կրնայ դատարանները քաշկուտուի...
ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Այս մէկը նշանաւոր էր արդէն...: Քատրոնին մէջ սակայն, օրերորդ, պէտք է լսելի ըլլայ: Եթէ մենք, որ բեմին վրայ ենք, բառ մը իսկ չենք լսեր, արահին մէջ գտնուող հանդիսականները ինչ ընեն: Պէտք է խաղալ այս տեսարանը: Դուք կրնաք բարձրաձայն խօսիլ իրարու հետ. մենք հիմակուան պէս բեմին վրայ պիտի չըլլանք, դուք առանձին պիտի ըլլաք, խանութի հետեւի առանձնաբանին մէջ: Ո՛չ կրնայ ձեզ լսել:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (ժողովուն, շարանին, պլանսֆով, մտառով «Ո՛չ» կը պատասխանէ):
ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Ինչպէ՞ս թէ ոչ:
ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (կիսաձայն ու խորհրդաւոր) — Մեզ լսող մը կայ, եթէ (մտառով ցայց կու տայ տիկինն Փաչէին) բարձրաձայն խօսելու ըլլայ:
ԲԵՄԱԴՐԻՉԸ (յուսահատ շեշտով մը) — Ուրիշ անձնաւորութի՛ւն մըն ալ կայ, որ մէջտեղ պիտի ելլէ:

(Գերասանները կը խնայան)

ՀԱՅՐԸ.— Ո՛չ, ո՛չ, պարոն. ինձի կ'ակնարկէ: Ես դրան հասնեմ եմ, եւ կը սպասեմ. ու տիկինն Փաչէն գիտէ, թէ հոն եմ: Եւ, եթէ կ'արտօնէք, երթամ հոն, որպէսզի ներս մտնելու պատրաստ ըլլամ...
ԲԵՄԱԴՐԻՉԸ (կեցնելով) — Ո՛չ, ո՛չ, սպասեցէք քիչ մը: Յարգենք Քատրոնի պահանջները: Նախ քան ձեր պատրաստ ըլլալը...
ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (ընդմիջելով) — Ի՞նչ կարեք կայ. անմիջապէ՛ս, անմիջապէս...: Շատ կը փափաքեմ, խնայի մը պէս կ'ուզեմ վերապրել այդ տեսարանը: Եթէ ինք պատրաստ է, ես ալ պատրաստ եմ:
ԲԵՄԱԴՐԻՉԸ (պառալով) — Սակայն անհրաժեշտ է նախ տեսարանը ունենալ: Անհրաժեշտ է, որ յստակ տեսարան մը գոյութիւն ունենայ ձեր եւ (Փաչէն ցայց տալով) անոր մէջեւ: Կ'ըմբռնէ՞ք, ի վերջոյ:
ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ.— Բայց, պարոն. ան ինձի ըսու ա՛յն՝ ինչ որ գիտէք, աշտի՛նքն՝ թէ մամային աշխատանքը անգամ մը եւս որակաւոր գործ չէր,

պէտք եղածը չէր. թէ՛ ջուրը նետուած կերպաս էր... թէ՛ պէտք էր
— եթէ կ'ուզէի, որ ինք շարունակէ մեզի ունել, մեր թշուառութեան
մէջ — ես համակերպէի...

ՏԻԿԻՆ ՓԱՉԷ (յառաջանալով, ինքզինքին կարեւորութիւն տուող կեցուածքով
մը) — Բնականաբար սեղիոր, փորձէ իօ, ոչ ուզել արանքամ...

ԲԵՄԱԴՐԻՉԸ (շշմած) — Ի՞նչ, ի՞նչ... այսպէ՞ս կը խօսի:

(Դերասանները բարձրաձայն կը խօսան)

ԽՈՐԹ ԱՂՁԻԿԸ (խնդալով) — Այո, պարոն, կէս մը սպաներէն, կէս մը ֆը-
րանսերէն, իրապէս ծիծաղ առաջացնող ձեւով մը:

ՏԻԿԻՆ ՓԱՉԷ — Ա՛հ, մատանա, խելացի բան մը չէք ընել, խնդալով վրաս,
իօ փորձել սորիլ ֆրանսերէն, սէնիոր:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Ձեր վրայ չենք խնդար, բնա՛ւ հրբեք. կը խնդրեմ, խօսեցէք
ինչպէս որ կ'ուզէք. եւ ձեր խօսքերը վստահաբար տպաւորութիւն
պիտի դործեն հասարակութեան վրայ: Կացուցեան կոպտութիւնը կա-
րելի չէր աւելի յաջող ձեւով մերձացնել. ԲԱՐԷ պատիկ կացութիւն
մը, ու... Խօսեցէք, ա՛յդպէս խօսեցէք: Ծառ լաւ է:

ԽՈՐԹ ԱՂՁԻԿԸ — Ծառ լաւ է, շատ լաւ է... Հարկաւ պարոն. երբ կը լսես
նման լեզուով մը արտայայտուած որոշ առաջարկներ, առաջանալիք
տպաւորութիւնը յստակ է, որոշ է՝ կատակ մը կը թուի ձեզի: Կը սկսեք
խնդալ, երբ կը լսէք, թէ կը խօսինք «ձերուկ սէնիորի մը մտախն», որ
«կ'ուզէ քիչիկ մը գուարճանալ»... այնպէս չէ՞, տիկին:

ՏԻԿԻՆ ՓԱՉԷ — Այո. քեզի համար աւելի լաւ. եթէ ոչ հաճելի. խոհեմու-
թիւն կը բերէ:

ՄԱՅՐԸ (յարձակելով տիկին Փաչէի վրայ, մինչ դերասանները անկնկալի
կու գտն, որովհետեւ ո՛չ ոք ուշադրութիւն կը դարձնէ իրեն, պռաւով
կ'ըսէ, երբ, միւս կողմէ, դերասանները կ'աշխատին զինք գապիլ, բըռ-
նիլ, չքողով, որ հասնի տիկին Փաչէին) — Ազտտո, պառաւ կախարդ:
Իմ խեղճ ձագուկս...

ԽՈՐԹ ԱՂՁԻԿԸ (մայրը խօսելով) — Ո՛չ, մամա, ո՛չ. կ'աղաչեմ:
ՀԱՅՐԸ (որ միաժամանակ վագած է կնոջ մօտ) — Հանդարտէ, խնդրեմ, հան-
դարտէ, ետե՛՛:

ՄԱՅՐԸ — Ձեմ ուզեր պինք տեսնել. ա՛յլ չեմ ուզեր տեսնել զինք, կը բաւէ:
ԽՈՐԹ ԱՂՁԻԿԸ (րեմադրիչիւն) — Մայրս չի կրնար հոս մնալ, կարելի չէ:

ՀԱՅՐԸ (րեմադրիչիւն) — Կինս ու այդ տիկինը չեն կրնար միաժամանակ ներ-
կայ ըլլալ. առօր համար է, որ սկիզբէն միասին չեկան... երբ երկուքը
միաժամանակ ներկայ են՝ ամէն ինչ չափազանց արագ տեղի կ'ունեն-
նայ. կ'ըմբռնէք անշուշտ:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Վնաս չունի, վնաս չունի. առայժմ սկզբնական ուր-
ազո՞ում մըն է միտքն, որ կը կատարենք: Ամէն ինչ կ'օգնէ, որ տրա-
մին ցանազան տարբերը, հոգ չէ թէ խառն ի խուռն մէկտեղուին: (Խօս-
քը մօրը ուղղելով ու գայն կրկին իր տեղը նստեցնելով): Լաւ, տիկին,
լաւ, կը բաւէ, հանդարտեցէք, նստեցէք խնդրեմ:

(Աղջիկը, որ բեմին մէջտեղը վերադարձած է, խօսքը տիկին Փաչէին ուղղելով)

ԽՈՐԹ ԱՂՁԻԿԸ — Օ՛ն, տիկին, չարունակէնք...

ՏԻԿԻՆ ՓԱՋԷ (վիրաւորուած) — Ա՛հ, ո՛չ, մերսի, իօ, մամայիդ ներկայու-
թեան, ոչինչ ընեւ:

ԽՈՐՔ ԱՂՋԻԿԸ — Օ՛ն, ներս մտնուցէք զծերուկ սէնիորը, զի՛նչի մը զուար-
ճանալ ուղղ...: (Հրամայական): Անհրաժեշտ է, որ այդ տեսարու-
նը հոս խաղցուի...: Օ՛ն: (Տիկինն Փայլինն): Դուք զուրս ելէ՛ք:

ՏԻԿԻՆ ՓԱՋԷ — Իօ, երթամ, իօ սուրբման երթամ:

(Ջղայնացած դուրս կ'ելլէ)

ԽՈՐՔ ԱՂՋԻԿԸ (հօրը) — Կարգը ձերն է. դուք ներս պիտի մտնէք հիմա:
Մի դառնաք այն կողմ. հոս պիտի դաք, մօտեցէ՛ք. հիմա արդէն ներս
մտած էք: Ես հոս կանգնած եմ, զլուխս կտխած, համեստ: Խօսեցէ՛ք.
բուրովին նոր ձայնով մը ըսէ՛ք ինձի, դուրսէն եկողի մը պէս. չթա-
րեւ, օրինորդ:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Ներողութիւն. ե՛ս է, որ կը դեկավարեմ, թէ դուք: (Դառ-
նալով հօրը, որ շփոթած իրեն կը նայի): Այո, ես դացէք, մինչեւ խոր-
քը դացէք, ստանց ամբողջովին բեմէն դուրս ելլելու. հիմա նորէն
եկէ՛ք:

(Հայրը կ'ենթարկուի բեմադրիչին երամանին գիշերաշրջիկի մը պէս:
Չափազանց գունատ է. սակայն իր տեղի վրայ իր արկածներէն տար-
ւած՝ կը ժպտի, մինչ բեմին խորքէն կ'առաջանայ դէպի աղջիկը. կարծես
ամբողջովին անծանօթ է ա՛յն ողբերգութեան, որ պահ մը սոսք իր վը-
րայ պիտի խուժէ: Դերասանները, բոլորն ալ, մեծ ուշադրութեամբ կը հե-
տեւին տեսարանին)

ԲԵՄԱԴՐԻՉԸ (ցած ձայնով, յուշարարին, որ իր ծակին մէջն է) — Ա՛յստեղ
դքի առնել ի՛նչ որ կրնաս, որքան որ կրնաս:

ՏԵՍԱՐԱՆԸ

ՀԱՅՐԸ (կ'առաջանայ ու տարրեր ձայնով մը) — Բարեւ, օրինորդ:

ԽՈՐՔ ԱՂՋԻԿԸ (գլուխը կախած, գոպուած պծգանքով մը) — Բարե՛ւ:

ՀԱՅՐԸ (պահ մը կը դիտէ աղջկան կրած գլխարկը, որ դէմքը կը ծածկէ, կը
նայի ու կը նշմարէ, թէ շատ երիտասարդ է, ու կը քաղցածանէ, մա-
տամբ հրեռանքով, մասամբ վախճալով, թէ կրնայ վտանգաւոր ար-
կածախնդրութեան մը գոնը դառնալ) — Ա՛հ...: Ըսէ՛ք, ինչո՞ք, կը
յուսամ առաջին անգամը չէ, որ հոս կու գաք... այնպէս չէ՞:

ԽՈՐՔ ԱՂՋԻԿԸ — Ո՛չ, պարոն:

ՀԱՅՐԸ — Ուրիշ տեղում ալ եկած էք: (Աղջիկը գլխով «այո» կ'ըսէ): Բար-
ձի՛ց...: (Պահ մը կը սպասէ, որ պատասխան մը ստանայ. կրկին աղ-
ջկան դէմքին կը նայի, գլխարկին տակէն. կը ժպտի ու կ'ըսէ): Հաւ,
այն ստեն պէտք չէ այսպէս ըլլաք... Թոյլ կու տա՞ք, որ ես ինքս հա-
նեմ ձեր փոքրիկ գլխարկը:

ԽՈՐՔ ԱՂՋԻԿԸ (արագ-արագ, աշխուստանց ծածկելու իր պծգանքը) — Ի՛նչ
սի, ես ինքս կը հանեմ. անմիջապէս: (Գլխարկը կը հանէ, զգային ա-
նտառանքով մը: Մայրը եւ միւս երկու փոքրերն ու տղան մէկ կողմ
բաշուած են. դերասաններուն գտնուած կողմին դիմացը ու կը թաւիմ

փուշերու վրայ նստած ըլլալ: Մայրը տեսարանին կը հետեւի տեսարար, փոփոխուող արտայայտութիւններով՝ ցաւ, զայրոյթ, անգիւրքիւն, արհամարհանք: Հօր կամ աղջկան արտասանած նախադասութեանց ընթացքին, երբեմն ղէմքը կը ծածկէ ձեռքերով, երբեմն վայրիւն մը, հեծեծանք մը կ'արձակէ):

ՄԱՅՐԸ.— Ա՛խ, Աստուած իմ, Աստուած իմ:

ՀԱՅՐԸ (կնեան հայր փութկառուքեամբ).— Տուէք, տուէք ես կախեմ: (Գլուխարկը կ'առնէ աղջկան ձեռքերէն): Սակայն ձեր ազուրը գլխուն վրայ ես պիտի ցանկայի տեսնել շատ աւելի ազուրը գլխարկ մը...: Կը փափաքե՞ք արդեօք, որ վերջը, տիկին Փաշէին մօտէլեբուն մէջէն հասնա՞նք ընտրենք ձեզի համար: Ո՞չ:

ՊԱՐԱՄՄԻՏԻ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ.— Հէ՛յ, մեր գլխարկներն է կը գործածէ: **ԲԵՄԱԴՐԻՉԸ** (բարկութեամբ).— Լոռիքի՛ն, ի սէր Աստուծոյ...: Սրամուտիկան կարիքը չկայ. հետեւեցէք տեսարանին: (Աղջկան): Շարունակեցէք, խնդրեմ:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (յարձակողական տրամադրութեամբ).— Ո՛չ, պարոն. չնորհակալ եմ:

ՀԱՅՐԸ.— «Ոչ» մի՛ ըսէք, այլայլէս կը նեղուիմ... պէտք է ընդունիք: Նայեցէք, ինչ ազուրը գլխարկներ կան: Տիկին Փաշէն ալ գո՛հ պիտի մընայ, կ'ըմբռնէ՞ք. ան արդէն դիտումնաւոր կերպով գլխարկները եւս կը ցուցադրէ. կ'ուզէ, որ ծախուին:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ.— Ենտրհակալ եմ, պարոն. ոչ է պատասխանս. նման գլխարկ մը դուրս չեմ կրնար դնել:

ՀԱՅՐԸ.— Որովհետեւ կը մտածէք, թէ ի՞նչ պիտի ըսեն տունէն, եթէ նոր գլխարկով մը տուն դառնալու ըլլաք...: Ես կը սորվեցնեմ ձեզի, թէ ի՞նչ պէտք է ըսել տունը:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (այլիս առանց ինքզինք գտնելու).— Այդ չէ պատճառը, պարոն: Չեմ կրնար նման գլխարկ մը դնել, որովհետեւ, կը տեսնէք արդէն (ցոյց կու տայ սգաւորի իր հագուստները) պէտք է արդէն նշմարած ըլլայիք, թէ...

ՀԱՅՐԸ.— Սղաւոր էք... ճիշդ է... ներողամիտ եղէք... ճիշդ է, հիմա կ'անդրադարձնամ, ներողութիւն կը խնդրեմ ձեզմէ... Իրայլէս կը ցաւիմ:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (համարձակութեան թիզ մը ընկելով, որպէսզի իր պծգանքն ու գայրոյթը կարեւայ յաղթանարի).— Կը բաւէ, պարոն: Ես պէտք է ձեզի շնորհակալութիւն յայտնէի, եւ ոչ թէ դուք ցաւ յայտնէիք կամ իրար անցնէիք: Ըսածներուս ուշադրութիւն մի դարձնէք...: Ես ալ, կ'ըմբռնէ՞ք: (Կը փորձէ ծպտիլ): Իւելի լաւ է, որ ես ալ չմտածեմ այս հաղուտին մասին...

ԲԵՄԱԴՐԻՉԸ (ընդհատելով ու յաշարարին դիմելով).— Վայրկեան մը, վայրկեան մը: Մի՛ գրեք, այս վերջին պատասխանը մի նոթագրեք: (Հօրը եւ աղջկան): Շատ լաւ, շատ լաւ էր: (Հօրը միայն): Այստեղ դուք պիտի ըսէք ա՛յն՝ որուն մասին ներսը խօսեցանք ու համաձայնեցանք: (Դերասաններուն): Ազուր էր, ազուր պատկեր է գլխարկ մը նուիրելու առաջարկը:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ.— Սակայն հիմա է, որ տեղի կ'ունենայ ամէնէն ազուրը. ինչո՞ւ չենք շարունակեր:

ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Քիչ մը համբերութիւն: (Դերասաններուն): Բնականաբար հարկ պիտի ըլլայ աւելի թեթեւ ձեւով խոզալ:

ԱՌԱՋԻՆ ՄԵՆ ԴԵՐԱՍԱՆԵՐԸ.— Քիչ մը աւելի դիւրաստեցութիւն պէտք է մըտ-
ցընել, այո :

ՄԵՆ ՊԱՐԱՍԻՐԸ.— Այո, անշուշտ, մեծ բան մը չէ : (Առաջին մեծ դերասա-
տանին) : Կ'ուզէ՞ք իսկոյն փորձենք :

ԱՌԱՋԻՆ ՄԵՆ ԴԵՐԱՍԱՆԵՐԸ.— Ինչու չէ. կթէ կ'ուզէք : Երթա՞մ խորքը, որ-
պէտքի կարենամ մուտքի տեսարանէն սկսել :

(Կ'սկիւն դուրս, եւ կը պատրաստուի խորքէն իր մուտքը գործելու)

ԲԵՄԱԴՐԻՑԸ (մեծ սլորակով) .— Պարզ է, թէ ուր ենք, չէ՞... ձեր եւ տի-
կին Փաշէի միջեւ տեսարանը նոր ուարտած է... : Այդ տեսարանը ես
ինքս պիտի գրեմ : Ա՛լ մի շարժի՛ք... ո՞ւր կ'երթաք :

ՄԵՆ ՊԱՐԱՍԻՐԸ.— Գլխաբկա դնեմ :

(Հանդերձակալին վրայէն կ'առնէ գլխարկը ու կը դնէ գլխուն)

ԲԵՄԱԴՐԻՑԸ.— Եստ լաւ : Հիմա գլուխը ծռեցէ՛ք ու սպասեցէ՛ք :

ԽՈՐՔ ԱՂՋԻԿԸ.— Բայց սեւ հագած չէ :

ՄԵՆ ՊԱՐԱՍԻՐԸ.— Սեւ հագած պիտի ըլլամ. եւ քիչ մը աւելի լաւ, քան
դուք :

ԲԵՄԱԴՐԻՑԸ (ազգիան) .— Լաւ թիւն, կ'աղաչեմ : Լա՛ւ դիտեցէ՛ք, ու ազուոր
գաս մը պիտի առնէք : (Ձեռքով կը ծափէ) : Մէկ, երկու, երեք. մտէ՛ք :

(Խորքի դուրս կը բացուի եւ կարեւոր առաջին դերակատարը կ'առա-
ջանայ : Իր կեցուածքը, խօսուածքը փորձառու սիրողի մը, ուրիշներում սիր-
տերը գրուելու վարժաւթիւն ունեցող մարդու մը ազատ ու յազթակամ կեց-
ւածքն է : Դերասաններում կողմէ այս տեսարանին խաղարկութիւնը, առա-
ջին իսկ բառերէն պիտի թողու ամբողջովին տարբեր քանի մը տպաւորու-
թիւնը, սակայն առանց կասկածի, առանց նմանողութեան մը տպաւորու-
թիւնը ձգելու. ու տեսարանը կարծես թէ յանկարծօրէն գեղեցկացած պիտի
ըլլայ : Բնականաբար, ազգիկն ու հայրը ինքզինքնին չեն գտնար խոզուած
դերերում մէջ, երբ իրենց նախադասութիւնները կը լսեն արտասանուած ամ-
բողջովին տարբեր ձեւով, տարբեր ապրումով. եւ շարժումով մը, ժպիտով
մը, կամ բացէ ի բաց քողովելով՝ պիտի արտայայտեն իրենց գարմանքը, ցա-
ւը, յուսախաբանութիւնը, գար պիտի գգան, ինչպէս պիտի տեսնենք քիչ անդին)

ԱՌԱՋԻՆ ՄԵՆ ԴԵՐԱՍԱՆԵՐԸ.— Բարեւ, օրիորդ :

ՀԱՅՐԸ (չկարենալով ինքզինք գտնել) .— Ո՛չ, ո՛չ, չեղաւ :

(Ազգիկը, կարեւոր առաջին դերակատարի մուտքին հետ բարձրաձայն
կը խնայ)

ԲԵՄԱԴՐԻՑԸ (կատարած) .— Լաւ թիւն, խերն անխճած. կը բուէ՛ : Ու գուց
ալ լաւ մը ինչացէ՛ք անգամ մը եւ ա՛լ վերջացուցէ՛ք, անտանելի է այս-
պէս :

ԽՈՐՔ ԱՂՋԻԿԸ.— Եւ սակայն շատ բնական է, պարոն : (Յոյց տալով մեծ
սլորակով) : Օրիորդը անշարժ կանգնած է, ամբողջովին պատշաճ ձե-
ւով մը. սակայն եթէ ան իմ տեղս կը խաղայ, կրնամ վստահեցնել ձեզ,
թէ լսելով բարեւ, օրիորդը, այնպէս՝ ինչպէս ըսուեցաւ, ինծի պէս
ինքն ալ ինչպէն պիտի մտնի :

ՀԱՅՐԸ.— Հայաս^ո, այդ շեշտը, այդ կեցուածքը...
 ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Այդ կեցուածքը... այդ շեշտը... այդ բոլորը մէկդի դրէք,
 ու ձգեցէք, որ ես զեկամարեմ իմ փորձս:
 ԱՌԱՋԻՆ ՄԵՆ ԴԵՐԱՍԱՆԸ.— Բայց չէ՞ որ ես կը ներկայացնեմ տարբերոս
 մէկը, որ կասկածելի տուն մը կ'այցելէ...
 ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Ուշադրութիւն մի դարձնէք իրենց ըսածներուն: Լաւ էր,
 շատ լաւ էր վերահսկեցէք: (Ու կը սպասէ, որ դերասանները վերսկը-
 սին): Յետո՞յ...
 ԱՌԱՋԻՆ ՄԵՆ ԴԵՐԱՍԱՆԸ.— Բարեւ, օրիորդ:
 ՄԵՆ ՊԶՐԱՍԻՐԸ.— Բարեւ:
 ԱՌԱՋԻՆ ՄԵՆ ԴԵՐԱՍԱՆԸ (հօրը ըրած շարժումը կը կրկնէ, գլխարկին տա-
 կէն նայելով աղջկան դէմքին ու սպա, երկու, յստակօրէն իրարմէ տար-
 բերող մասերով կ'արտա-այտէ նախ գոհունակութիւնը, ապա՝ վա-
 խը).— Ա՛հ, բայց, ըսէք խնդրեմ, կը յուսամ առաջին անգամը չէ, որ
 հոս կու գաք:
 ՀԱՅՐԸ (չկարենալով ինքզինք զսպել՝ կը սրբագրէ).— Ո՛չ, ոչ թէ՛ «կը յու-
 սամ», ա՛յլ՝ «այնպէս չէ՞», այնպէս չէ՞»:
 ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Այո, ինք «այնպէս չէ՞» ըսաւ, հարցական բնոյթով:
 ԱՌԱՋԻՆ ՄԵՆ ԴԵՐԱՍԱՆԸ (յուշարարը ցոյց տալով).— Ես «կը յուսամ» լը-
 սեցի:
 ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Լա՛ւ, լա՛ւ. միեւնոյնն է «կը յուսամ» կամ «այնպէս չէ՞»...
 շարունակեցէք, շարունակեցէք... քիչ մը նուազ շեշտաւորելով թե-
 բեւ: (Ու իմք կը կրկնէ): «Ա՛հ...: Բայց, ըսէք խնդրեմ, առաջին ան-
 գամը չէ, որ հոս կու գաք, այնպէս չէ՞»: (Մեծ պըրաստերին): Դուք
 ըսէք «ո՛չ, պարոն»:
 ՄԵՆ ՊԶՐԱՍԻՐԸ.— «Ո՛չ, պարոն»:
 ԱՌԱՋԻՆ ՄԵՆ ԴԵՐԱՍԱՆԸ.— «Ուրիշ անգամ ալ եկա՞ծ էք: Մէկէ աւելի՞ ան-
 գամներ»:
 ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Ձեզաւ. ժամանակ տուէք իրեն, որ գլխով «այո» ըսէ: «Ուրիշ
 անգամ արդէն եկա՞ծ էք հոս»:

(Մեծ պըրաստերը թեթեւ մը գլուխը կը բարձրացնէ, աչքերը կիսախուփ,
 կարծես պժգանձով, եւ երկու անգամ գլխով «այո» կ'ըսէ)

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (չկրնալով ինքզինք զսպել).— Աստուած իմ: (Ձեռքով բե-
 րանը կը ծածկէ, ծիծաղը խեղդելու համար):
 ԲԵՄԱԴՐԻՉԸ (դառնալով աղջկան).— Ի՞նչ կայ:
 ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ.— Բան չկայ, բան չկայ:
 ԲԵՄԱԴՐԻՉԸ (առաջին մեծ դերասանին).— Կարող ձերն է:
 ԱՌԱՋԻՆ ՄԵՆ ԴԵՐԱՍԱՆԸ.— «Բազմի՞ցս»... Լաւ, այն տունն այնպէս ըլլա-
 լու կարիքը չկայ...: Կ'արտօնէ՞ք, որ ես ինքս հանեմ ձեր պզտիկ դըժ-
 խարկը:

(Առաջին մեծ դերասանը այս նախադասութիւնը այնպիսի՝ շեշտով մը
 կ'ըսէ եւ անոր կ'ընկերացնէ այնպիսի՝ շարժում մը, որ աղջիկը, որ բերանը
 ծածկած է ձեռքով, շխնայալու համար, ա՛յ չի կրնար ինքզինքը զսպել եւ բարձ-
 րածայն կը խնդայ)

Մեն ՊԶՐԱՍԷՐԸ (իր տեղը վերագառնալով) — Ա՛լ կը բաւէ, ա՛լ չեմ կրնար շարունակել խամաճիկի դերը խաղալ:

ԱԲԱՋԻՆ ՄԵՆ ԴԵՐԱՍԱՆԸ — Եւ ոչ ալ ես:

ԲԵՄԱԴՐԻՉԸ (աղջկան. ռաճալով) — Պիտի վերջացնէ՞ք, թէ ոչ:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ — Ներողամիտ եղէք, ներողութիւն:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Անքաղաքաւար մըն էք... ահա թէ ի՞նչ էք... մեծամիտ մը:

ՀԱՅՐԸ (փորձելով միջամտել) — Այո, պարոն, ճիշտ էք, ճիշտ էք. սակայն ներեցէք իրեն...:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Ձեզ կրնար ներել, անվայել է իր ընթացքը:

ՀԱՅՐԸ — Այո, պարոն, իբրևուճ ունիք: Սակայն չէք կրնար դիտնալ, թէ ասիկա ինչ տարօրինակ տպաւորութիւն կը դարձէ մեր վրայ...:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Տարօրինակ... ինչպէս թէ տարօրինակ... ինչո՞ւ տարօրինակ:

ՀԱՅՐԸ — Հաւատացէք... կը հիանամ ձեր դերասաններուն: (Առաջին մեծ դերասանը ցոյց տալով): Պարոնը (մեծ պըրասէրը ցոյց տալով) եւ օբիտորը, սակայն անոնք «մենք» չեն:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Պարզ է, որ դուք չեն. դերասաններ են:

ՀԱՅՐԸ — Այո. դերասաններ են: Կը խաղան եւ շատ լաւ կը խաղան մեր դերը: Սակայն մեզի համար, ատիկա բոլորովին տարբեր տպաւորութիւն մը կ'առաջացնէ, շատ տարբեր բան մը, որ կ'ուզէ նոյնը ըլլալ, ինչ որ մենք ենք, սակայն նոյնը չէ:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Նոյնը չէ, ի՞նչ է հասկա:

ՀԱՅՐԸ — Բան մըն է, որ իրենց կը պատկանի, մեզի չի պատկանիր:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Բայց հարկաւ, հարկադրաբար... արդէն ըսի անգամ մը:

ՀԱՅՐԸ — Այո՛, այո՛, կ'ըմբռնեմ, կը հասկնամ...:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Այն ատեն՝ վերջացուցէք: (Ներսիսաւարմերում): Մենք յետոյ կը փորձենք այնպէս՝ ինչպէս պէտք է, եւ ատենց իրենց: Ինծի համար միշտ ալ դժոխային բան մը եղած է Հեղինակներու ներկայութեան փորձեր վարելը: Բնաւ դո՛ւ չեմ մնար: (Հօրը եւ աղջկան ռաղբելով խօսքը): Պիտի շարունակենք ձեր կատարումով եւ յուսանք, որ պիտի դարձնէ խնայէ:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ — Օ՛հ, ա՛լ չեմ խնայար: Ահա կու գայ իմ ամէնէն ազուոր պահա:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Լաւ ուրեմն. երբ կ'ըսէք՝ «Ըսածիս ուշադրութիւն մի՛ դարձնէք...» ես ալ, կ'ըմբռնէ՞ք: (Հօրը): Պէտք է անմիջապէս պտտասխանէք՝ «Կ'ըմբռնեմ, օ՛հ, կ'ըմբռնեմ» եւ պէտք է անմիջապէս հարցընէք իրեն...:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (ընդմիջելով) — Ի՞նչ պիտի հարցնէ:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Ձեր սզաւորութեան պատճառը:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ — Ո՛չ, ո՛չ, պարոն: Երբ իրեն ըսի, թէ պէտք չէ մտածէր իմ հազուատի մասին, գիտէ՞ք ինչ ըսաւ ինծի: «Ա՛հ, լաւ ուրեմն, իսկոյն հանենք այս հազուատը»:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Հոյակապ... կ'ուզէք, որ սրտը տեղէն ցատկէ...:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ — Բայց, ճշմարտութիւնն է:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Հանգիտ ազգեցէք զիս ձեր «ճշմարտութեամբ»: Հոս թատրոնն է: Ծշմարտութիւնը, անչուտ, ճշմարտութիւնը... սակայն մինչեւ որոշ տեղ մը:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ — Ուրեմն, ի՞նչ կ'ուզէք ընել:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Պիտի տեսնէք. կը տեսնէք, թո՛ւք տուէք, որ շարունակեմ:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ.— Ո՛չ: Ձեմ կընար ձգել, որ իմ գարշանքէս, իմ ներկայ վիճակիս պատճառներէն, մէկը միւսէն աւելի ահաւոր, մէկը միւսէն աւելի ստորին պատճառներէն ոտմանթիք, լուսնի լոյսով տեսարան մը հանէք, որուն մէջ ինք ինծի պիտի հարցնէ, թէ ինչո՞ւ սգաւոր եմ, ու ես, արտասուելով՝ պատասխանեմ իրեն, թէ երկու ամիս կ'ընէ, որ հայրս կորսնցուցած եմ...: Ո՛չ, հազա՛ր անգամ ոչ. չեմ ընդունիր: Պէտք է ինծի ըսէ՛ր ա՛յն՝ ինչ որ ըսու. «Լաւ ուրեմն, այն ատեն իսկոյն հաննէք այս հազուստը...»: Ու ես, իմ վիշտս սրտիս մէջ, դասցի հոն, կը տեսնէք, չէ՞, սա փարաւանին ետին, եւ այս մասնորո՞վ, որոնք կը դողային ամօթանքէն ու գարշանքէն, ես քակեցի Էդրստն, փէշս:

ԲԵՄԱՆԻՐԻՉԸ (մագերը փետելով).— Կ'աղաչեմ, կ'աղաչեմ:
ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (կուտաղութիամբ պոռալով).— Ժշմարտութիւնն է, ճշմարտութիւնն է, պարոն:

ԲԵՄԱՆԻՐԻՉԸ.— Հակառակը չեմ ըսեր ու կ'ըմբռնեմ, կը հասկնամ ձեր ամբողջ գարշանքը, օրիորդ. սակայն դուք ալ կ'ըմբռնէք անշուշտ, որ կարելի չէ այդ բոլորը բեմ հանել:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ.— Կարելի չէ՞. լա՛ւ, շնորհակալութիւն. ես ալ չեմ խաղար:
ԲԵՄԱՆԻՐԻՉԸ.— Օրի՛որդ:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ.— Ձեմ խաղար, չեմ խաղար: Այն ինչ որ կարելի է բեմ հանել, իրեն հետ համաձայնարար որոշեք էք. մերսի... կը հասկնայ, մի՛ կարծէք չեմ հասկնար... կ'ուզէ արագ մը հասնիլ իր գուղեղային ըրարդ տրամին, իր խիղճի խալթիրուն, իր շարժարանքներուն բեմադրումին. ես ալ կ'ուզեմ իմ տրամս ներկայացնել. ի՛մս, ի՛մ տրամս:

ԲԵՄԱՆԻՐԻՉԸ (ա՛լ ձանձրացած, ուսերը վեր առնելով).— Ձեր տրամը... Սակայն ի վերջոյ հասկցէք, թէ միայն ձեր տրամը չէ, որ գոյութիւն ունի: Միւսներուն տրամն ալ կայ: (Յոյց տալով հայրը): Իբր, ձեր մօր տրամը: Ընդունելի չէ, որ անձնաւորութիւն մը ինքզինք առաջ քշէ եւ ամբողջ բեմը գրաւէ՝ ի վնաս ուրիշներու: Անհրաժեշտ է անձնաւորութիւնները հաւաքել ներդաշնակ համագրութեան մը մէջ ու խաղալ ա՛յն՝ որ կարելի է: Ես ալ ձեզի շփոք գիտեմ, թէ իւրաքանչիւրը ունի զաղանի կեանք մը, որ կ'ուզէ հրապարակել: Գոյութեանը կը կայանայ միւս անձնաւորութեանց հետ կուպակցարար անհրաժեշտը միայն բեմ հանելուն մէջ, եւ ցոյց տրուած փոքր մասերով հանդիսատեսին դուշակել տալու մնացեալը, ցոյց չտրուածը: Շատ դիւրին պիտի ըլլար, եթէ իւրաքանչիւր անձնաւորութիւն կարենար, ազուր մենախօսութեան մը մէջ — ինչո՞ւ ոչ — դասախօսութեան մը ընթացքին, հանդիսատեսներուն առջեւ պարզել ամէն ինչ, զոր իր մէջ կը զգայ: (Հեզ ու հաշտարար): Պէտք է շփաւորէք դուք ձեզ, օրիորդ: Հաւատացէք, թէ ձեր իսկ լա՛ւը ալ կը պահանջէ: Պէտք է խոստովանեմ, թէ ամէն ինչ քանդող ձեր այդ կատաղութիւնը, այդ դաշտազին գարշանքը, որ դուք կը խոստովանիք, երբ կ'ըսէք, թէ այլ մարդոց հետ, բազմիցս եղած էք տիկին Փաշէի մօտ, կրնայ վատ տպաւորութիւն առաջացնել հանդիսատեսներուն մէջ...:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (գլուխը կախելով եւ խոր ձայնով մը՝ կ'ընդունի ըսուածին արդարացիութիւնը).— Ժիշդ է: Սակայն հասկցէք, թէ միւսներն ալ, ինծի համար ինքն է:

ԲԵՄԱՆԻՐԻՉԸ (չհասկնալով).— Ինչպէ՞ս թէ միւսները... ի՞նչ ըսել կ'ուզէք:
ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ.— Սայթաքող կեանք մը համար, պատասխանատուն առաջին

անգամ էր անկումը առաջացնողը չէ՞ միթէ : Ինծի համար՝ ինքն է . ես դեռ չմտած նոյնիսկ : Մտածեցէք զիչ մը եւ պիտի տեսնէք, թէ ճշմարիտ չէ՞ ըսածս :

ԲԵՄԱՆՐԻՁԸ .— Ծառ լաւ կը հասկնամ : Եւ նման պատասխանատուութեան մը ճանրութիւնը ձեզի ոչի՞նչ կը թուի... Ժամանակ ու կարելիութիւն տուէք իրեն , որ արտայայտէ առիկա :

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ .— Ներողութիւն , ներողութիւն... Ինչպէ՞ս պիտի կարենայ դուրս բերել «ազնուական» այդ բոլոր խղճի խալթերը , այդ բոլոր զբոսայգիներն տառապանքները , եթէ կը խնայէք իրեն , դեղեցիկ օր մը , իր սուգի հազուատները հանել առաջարկելէ ետքը , այն փոքր աղջնակը , որուն կը սպասէր դպրոցի ելքին , իր թեւերուն մէջ դանելու դարձուբանքը . այն ալ , արատաւոր կնոջ մը վերածուած վիճակի մէջ :

(Ազգիկը յուզուած է : Մայրը , լսելով ազգիկն այդպէս խօսիլը , ցուէն պարտուած՝ կը սկսի արտասուել : Ընդհանուր յուզում մը կայ : Պահ մը , քահանայն երկար պահ մը լռութիւն կը տիրէ)

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (երբ մայրը քիչ մը ինքզինք կը վերագտնէ) .— Հոս մենք մեղի ենք : Հանդիսատես հասարակութիւնը չկայ : Վաղը դուք կրնաք ներկայացնել ձեր ներկայացումը , ձեր ուղածին պէս : Սակայն , կ'ուզէ՞ք իրական տրամբ տեսնել : Կ'ուզէ՞ք տրամբին պայթիլը տեսնել , այնպէս՝ ինչպէս պատահեցաւ :

ԲԵՄԱՆՐԻՁԸ .— Անուշտ կ'ուզեմ , որպէսզի կարենամ օգտագործել ա՛յն՝ ինչ որ կարելի է :

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ .— Այն ատեն սա խեղճ մայրը դուրս հանեցէք :

ՄԱՅՐԸ (տափի ելլելով եւ օտնոցով մը) .— Ո՛չ , ո՛չ : Թոյլ մի՛ տաք , պարոն , որ շարունակէ , թոյլ մի՛ տաք :

ԲԵՄԱՆՐԻՁԸ .— Սակայն , պարզապէս տեսնելու համար է , թէ ի՞նչ դուրս կու գայ :

ՄԱՅՐԸ .— Չե՛մ կրնար , չե՛մ կրնար :

ԲԵՄԱՆՐԻՁԸ .— Բայց չէ՞ որ այս բոլորը արդէն տեղի ունեցած բաներ են :

ՄԱՅՐԸ .— Ո՛չ . տեղի կ'ունենան ա՛յս պահուս , ու միշտ : Իմ ցաւս ձեռակերպութիւն մը չէ , պարոն : Ես կ'ապրեմ ու ներկայ եմ շարունակ , իմ դժբախտութեանս բոլոր պահերուն ալ , որ կենդանի է ու շարունակ ներկայ : Այս երկու փոքրերուն խօսիլը լսեցի՞ք : Ա՛լ չեն կրնար խօսիլ , կը կտուչին ինծի , իմ դժբախտութիւնս յաւիտենականացնելու համար . սակայն իրենք իրենց համար զոյսութիւն չունին , այլեւս զոյսութիւն չունին : Ու սա աղջիկը , պարոն , արդէն փախած է տունէն , զիս լքած է , եւ կորսուած կին մըն է : Եթէ այս պահուս կը տեսնեմ զինք , միշտ վերանորոգելու համար է , միշտ սպրոզ ու միշտ ներկայ ա՛յն ցաւը , զոր ինք սուած է ինծի :

ՀԱՅՐԸ .— Յաւիտենական պահը : Ատիկա է , որ արդէն ձեզի ըսի , պարոն : (Ցոյց տալով ազգիկը) : Ինք հոս է՝ զիս բռնելու , զիս դամբելու համար , եւ յաւիտենականօրէն կախուած պահելու համար այդ խարուսիկ պահէն ու վայրկեանէն , կեսնքիս ամօթալի միակ վայրկեանի ամօթանքի սիւնէն : Ձի կրնար հրաժարիլ ասկէ . ու դուք , պարոն , չէք կրնար , կարողութիւնը չունիք խնայելու ինծի այդ պահը :

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Ես չեմ ըսեր շնորհայացնե՞ք զայն. առաջին արարին հիմնական մասը պիտի ըլլայ աստիկա, կորիզը, որ պիտի յանչի տիկնոջ կողմէ՛ ձեր անակնկալի բերուելուն: (Յոյց կու տայ մայրը):

ՀԱՅՐԸ — Այո. իմ դատապարտութիւնս է, պարոն. մեր գողգոթան է աստիկա, որ պէտք է յանդի արարի վերջաւորութեան պայթած իր ճիշդին: (Յոյց տալով մայրը):

ՔՈՐԹ ԱՂՋԻԿԸ — Այդ ճիշդ դեռ կը շարունակէ լիցնել ակահնկերս: Այդ հիշը զիս խնեմացուց: Կրնաք զիս ներկայացնել այնպէս՝ ինչպէս կ'ուզէք, պարոն. մինչեւ անգամ կրնաք հաւուած ներկայացնել, նշանակութիւն չունի, միայն թէ թեւերս մերկ ըլլան, միայն թեւերս... Նայեցէ՛ք, երբ այսպէս կ'ըսած եմ (կը մտնեմայ հորը եւ գլուխը կը դնէ անոր կուրծքին) գլուխս յնա՞ծ այսպէս, թեւերս իր վզին շուրջ: Թեւիս վերայ կը տեսնէի Երակի մը բարսիումները, եւ այդ ապրող երակը զարհուրանք կը պատճառէր ինձի, ատոր համար ալ այժերս գոցեցի եւ գլուխս մխրճեցի իր կուրծքին մէջ: (Դառնալով մորը): Պոռա՛, պոռա՛, մայր: (Գլուխը կը պսակ հորը կուրծքին վրայ եւ աստիկա վեր ըրած, կարծես ճիշդ չլսելու համար, խնդրով ձայնով մը կրկին կ'ըսէ): Պոռա՛, այնպէս՝ ինչպէս պոռացիր:

ՄԱՅՐԸ (տապ կը նետուի, զիրենք իրարմէ գտնելու համար) — Ո՛չ, աղջիկս, աղջիկս: (Ձիրենք գտնելէ ետք իրարմէ) Դժբախտ տրարած, աղջիկս է, չե՛ս տեսներ, անկի՛մթ, որ աղջիկս է:

ԲԵՄԱԴՐԻՉԸ (այդ ճիշիմ դիմաց ետ-ետ երթալով՝ մինչեւ բեմին բարձրէք, դերասաններուն ընդհանուր յուզումին մէջ) — Շատ լաւ է, շատ լաւ, ու վարագոյր, վարագոյր:

ՀԱՅՐԸ (կը վազէ բեմադրիչիմ ետ) — Ահա, այո, ահա թէ ինչպէս տեղի ունեցաւ:

ԲԵՄԱԴՐԻՉԸ (հիսցակամ եւ համոզուած) — Այո՛, այո՛, եւ ուրիշ ոչինչ, ու վարագոյրը, վարագոյրը: (Բեմադրիչիմ կրկնակի պոռոցիմ վրայ, մեքենավարը վարագոյրը վար կ'իջեցնէ ու բեմադրիչիմ աւ հայրը կը մընամ բեմին դուրսը վարագոյրիմ առջեւ): Թխարե՛բը. «վարագոյր» ըսի, ըսել ուզելով, թէ այդտեղ կ'աւարտի արարը. ու՛ վարագոյրը ինչեցուցին: (Մէկ կողմէ վարագոյրի մէկ եզերքը վեր առնելով, ետ բեմ մտնելու համար, կ'ըսէ հորը): Այո՛, այո՛. շատ լաւ էր: Մեծ տպաւորութիւն պիտի գործէ: Այդ տեղ ալ պէտք է աւարտել: Այս առաջին արարը կ'ապահովեցնեմ ձեզ, կ'ապահովեցնեմ... (ու բեմ կ'անցնի՝ հոր անձնաւորութիւնը ետին ձգած):

ՀՈՒՒՃԻ ՓԻՐԱՆՏԵԼԼՈ

(Շար. 3 եւ մնացեալը յաջորդիւ)

Յ. Պ Է Ր Պ Է Ր Ե Ա Ն

Ք Ո Լ Ա Ճ

Վտառ մը ամբողջ կարմիր ձուկերու,
կանաչակապոյտ այս բարեբուն մէջ,
իր շարժումներով մարմինդ կը յաւշէ:

Խնձորեմիներ՝
սիւնով ծածկուած բարձունքներու վրայ,
հիմա սպիտակ դող մը կը ձգեն:

Փանդուած կամ շիկուող կտորոցներու տակ՝
համդարս կը մնչէ քաղաքը նախկին:
Հոգերու մէջ են անցած դարերու վկաները հին,
որոնք քանակի մամ կը մնան
այդպէս քնացած:
Պէտք է համ քամայ, յստակացնել
ազէտը ծովի կամ երկրաշարժի,
սակայն ո՞վ մեզմէ կրնայ դարձանել
ազէտը մարդու...:

✱

Ազէտի հետեւին յստակ են այնքան
քու բառերուդ եւ
ներաշխարհիդ մէջ:

Ջրվեժներու տակ՝ սորվիլ սարսալ:
Թուղ բարբ տանի հետեւը հողի,
հետեւը մարդոց...
Դիմադիծներէն մեր միշտ կը փորձեմ
խաւ մը վերցնել՝
զտնելու հետեւին կորսուած աշխարհին:

**

Թերաճ անուամուած երկիրներու մէջ՝
 պատանիներում պատուաստի դասեր
 կու տային ճրի.
 թէ՛ ինչպէ՞ս պէտք է
 տարբեր ուստերով
 օրերը գալիք նարագիլ անդուլ
 եւ պատուաստուած՝
 քալիլ ... Ապահով:

Ջրվէժներու տակ՝
 մարմինները մեր կը լուացուէին:
 Ջուրերու հոսքով կը ջնջուէին
 հետքերը հոգի,
 ցաւերը ներքին:
 Ներկայիս՝ պահ մը միասին էինք
 եւ պահ մը մոռցած
 աշխարհն արտաքին:

●

Քերթուած, լեռած իւզամերկի պէս,
 քու հոգիդ հիմա մթուփեան մէջ է:
 Մշտեցնած ու բիրտ յանախ կը նայիս
 օրերում գալիք, ինչպէս՝ անցեալին —
 Նոր փերեզակներ՝ չորսդին դեզերով,
 վաշկատում մարդիկ՝ ծակ վրաններով...
 Ճամբաներու մէջ՝ հին ոտնահետքեր,
 բազմաթիւներում՝ կորսուող դէմքեր
 առանձնաշատուկ եւ ոչ մէկ գծով...:

Քու հոգիդ միշտ ալ պիտի փնտռէ
 առաւօտներու այն լոյսը թեթեւ,
 մարմինդ միշտ ալ պիտի պահանջէ
 այն միւսը ժպտում, կշռոյթով վայրի,
 որ թեզարումէն այս անժամանակ
 դուրս բերէ քեզի...

Քերթուած, լեռած իւզամերկի պէս,
 քու հոգիդ հիմա տիրութեան մէջ է:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐՆԱՆ

Թ. ՕՇԱԿԱՆ

ՍԱՀԱԿ ՊԱՐԳԵՒԵԱՆ

— Գիտէ՞ք, թէ ով է Անգա Մերովնան։
 — ...։
 — Սրտառուչ է պատմութիւնը։ էր։ Սկսած ատենն ալ, աբսինճն՝ քսանը՛հինգ տարի առաջ։
 — Պարոն Պարզեւեանին երիտասարդութեանը անուշտ։
 — Գիտէ՞ք ուրեմն։
 — Ոչ որոշ։ Բայց...
 Ինչո՞ւ կը կեղծէր։
 — Սրտառուչ է տակաւին չիմա, քսանը՛հինգ տարի ետքը։
 — Հիմա՞։
 Անձկագին այդ հարցականը, որ չվրկպեցաւ Տիրանեանին ըզգայարանքներէն։ Կան պահեր, երբ միեակ մեր ականջը չէ, որ կ'ընէ մտիկ։

Սոնայի աչքին գծուեցաւ յստակ Անգա Մերովնան։ — Կինն է անիկա, որուն մէջ հանգած էր ընդմիշտ սրբազան մայր սեռին, այնքան պարզ, գիւրաւոր՝ լաթին ու միսին փաթաթէն։ Ուրե՛մն։ Տարիքը զգարձողն ամէն կին, երբ կ'սուր մը չէ հարսի մը գլխուն, կամ փոռասէր մը, տանելի է այդ իսկ կնիքով։ Սեռէ սեռ ճակատում մը միայն կ'ընէ անողոք հանդէպ իրարու։ Տեսաւ անոր հանգչած մորթը ու կնիկուններուն գորշերանգ ցանցը։ Ու տեսաւ թարթիչներուն տակ խաղաղութեան կիսաղեղները, որոնք կ'ուռին, երբ սեռը կ'իջնէ։ Այդ իսկ թափանցումով՝ անիկա զինաթափ էր նկարչուհիին առջեւ։ Բայց այս խելամուտը ըրաւ զինքը նոյն ատեն խորապէս նկուն։ Ուրեմն կը խաբէ՛ր ինքզինքը, երբ իր զգուանքին զրօշին մէջ ինքզինքը վարչամական՝ կը կարծէր փախչել իր ամօթէն։ Արո՛ւն։ Կիսուելի՛քը։ Այս մտքի տակնապը մեղմացաւ ինքնին։ Ու եղաւ քաղցր։ Բարութեանը աւելի իմացական առաքինութիւն է, քան նկարագրի։ Մարդիկ, զրեթէ միշտ գերի իրենց բնագոնիւն, կը տիրակալեն սակայն յաջողութեամբ իրենց ուղեղին։ Բարեբի, զազցրութեան անտուկու-

թիւն մը բարոյախօսական ներքին զոհացում մը չէ, որ կարգ մը տկարներու պատմութեան կու սայ, այլ՝ իմացական հզօր երեւոյթ մը:

- Ի՞նչ բանի կը մտածէք:
- Ուղղակի՝ ոչ մէկ բանի:
- Անուղղակի՞:
- Շատ բանի:
- Անշուշտ՝ Արմանին ալ:
- Որ անոր տղան է:

Բաւը գող ունէր Սոնային բերնէն ելած առնելը:

Այս խօսակցութիւնը կը թուէր անջրպետուած թիթեւ բանէ մը: Անոնք պէտք չունէին իրարու բաժնեկր լրացնելու նաեւ աչքին հեղումովը, պաշտպանութեամբ: Իմարու նայուածք շանդուրժեղու համար, զօրաւոր ազգակներ կը միջամտեն: Բանաստեղծը կը թուէր խորացած ըլլալ յուշերու դիմէն ու տրամբլ քիչ մը: Այս խաթարումը մեր մէջ սիրական պատկերի մը՝ մեզ կը յուզէ մենկ անկախ, այսինքն՝ զանկազ կը ծուծով: Անիկա, քաջածանօթ Պարզեւեանին հեռաւոր անցեալին, վախին տակն էր, գեռ շորս-հինգ տարի առաջ, Սոնային վտանգին: Հիմա: Իր աւելան ունէր զմայլելի փթթումով մարմնեղէն կատարելութիւն մը: Իժուարահաճ՝ ամբոխէն յօրինուած ամէն երակէ հեքիաթներու, ստուգութեան ժօտնալու իր մեւին մէջ կը գործածէր այդ թռչունն տրակեկտիկը, պզտիկ շերտերու տարօրէն ուշադիր, որոնք հոգիին ճանաչումը կ'ընեն կարելի: Անկէ անդին՝ հոն արմատացած մեղքը այդ լոյսին տակ ինքնին կը դառնայ պարզ ու հասկնալի: Հոգեբանական մեթոտ մը չէր ասիկա իր ժօտ, այլ՝ իր սեղծութիւն տիրական մեւը: Այդ ճամբով է, որ անիկա զբաժ է մեր բանաստեղծութեան այն քերթուածները, որոնք կը մեկնին պզտիկ լոյսերէ, ու կ'առաջանան դէպի հոգեկան անձանօթը, վերջին տողերուն մէջ ըլլալու համար հոգեկան արիւնտ, վշտազին փորձարկութիւն մը: Հոգիին ստոյգ դիտութիւնը ամէնէն տխուր անկումն ալ կը գերազանցէ: Հարցո՞ւց, թէ ըսաւ:

- Գիտնալու համար չ'արժեր տառապիլ:
- Այսի՞նքն:

Նայեցաւ հանդարտ: Թափանցիկ էր Սոնային դէմքը, ինչպէս խաղողի մորթ մը, որմէ լոյս ըլլայ անցած:

- Մանօթ էք ամէն բանի:

Պատասխանի փոխարէն, անիկա առած էր դուխը արիւնտն մէջ: Վա՞խը, հո՞ղը: — Մանկեց աչքերը, որոնք ասեղուեցան: Անիկա կը սարոսիէր արցունքէն: Ինչ արագութեամբ հարցումը ըրըլըեցաւ անոր մէջ: «Մանօթ էր ամէն բանի»:

- Անոր պնդումով է, որ եկաւ Եգիպտոս:
- Որո՞ւ:
- Տղուն:

Ինչո՞ւ անունը չէր տար: Բայց հարցումն իսկ ցաւ մըն էր Բորեն: Այնքա՞ն տեղ, սոտ օտարականին, զոր հինգ վայրկեան ալ չէր դիտած:

- Ի՞նք:
- Երկդիմի հարցումները ուղիղ պատասխանով կը զիմաւորուին:
- Կ'ըսէ, թէ մոռցած է բոլորովին:
- Մոռնա՞լ:

Ու բառին հետ իբր կաթողիկէի կամար մը ուրուացաւ տնձը Սահակ Պարզեւեանին, որ իր անցեալը կը կրէր իր ուսերուն, շոր-ցած, քարի կտորի մը նման, բայց երբ տառադէր, գայն կ'որհւորէր ու քարէն կը ստեղծէր ինչ որ արիւնն ու համը կազմէր էր այդ օրե-րուն: Իր երիտասարդութիւնը ողբալը աղքատութեան հոմանիչ չէ միայն, այլեւ՝ վատութեան: Զայն վերակազմելը:

- Բայց ուզածը այդ աղուն:
- Ինչո՞ւ չէք հասկնար:
- Ինչպէ՞ս, սակայն: Սիրտ ըսուածը այնքան մութ բան է յա-ճախ:

Տաքցած էր ու կիսակորմիր: Բարոյութիւն, յուզում, ան-ծանօթ ի՞նչ հով, որ կ'ընէր զինքը տղայէս անկայուն, վախկոտ: Երբեմն հպտար կ'անցնի մեր շիղերէն այնքան արագ, որ ասին չու-նինք շարժք սեւեւելու: Անցքին արդիւնք սարսուռը միայն կը մնայ մեր առջին:

Տխարիկը կը խորանար:

- Ուզածը պարզ է սակայն:
- «Պարզ բաները անմատչելի են», գրողը դուք էք ասիկա, Պարզեւեանին, նամակի մը մէջ:
- Ուզած է «հայրը» տեսնել:
- Իր հո՞յրը:
- ...: Անդան չէ ամուսնացած:
- Մականո՞ւնը:
- Փոխած է:
- Ինչո՞ւ է:
- Կիները անուններու նախապաշարուած ունին:
- Այո՞ր՞նքն:

— Վարժութիւնը արեգեբական օրէնք է, Օրիորդ, ու գծրախ-տութիւնը՝ բաւական յաճառ ու սեւ թռչուն մը, որ իր սորված թա-ռին չի դաւաճաներ: Իր կեանքին անդրանիկ ու հօրադոյն պատրան-քը տնիկա կրեց առաջին մականունով: Գեթ այս է իմ դատելու կեր-պը: Վասնզի չէ ամուսնացած:

- Բայց ինչո՞ւ:
- Իրեն պէտք է հարցնէք:
- Երիտասարդ եղած է այդ կիներ:
- «Ով երկնային պարզատութիւն», ինչպէ՞ս կ'ըսեն զաղիացի-ները: Այնքան ճի՛շդ է, ուրեմն, որ մենք մինակ ենք, բոլորովին մի-նակ սա աշխարհին մէջ:
- Գեղեցի՞կ:
- ...:
- Բայց ինչո՞ւ չէք պատասխաներ:
- Գիտէ՞ք ինչ կը յիշեմ: Կը յիշեմ մեր գրահանութեան ու-թուցիչը, որ գեղեցկագիտութեան վրայ դատը սկսելէ առաջ, թատե-րական անկեղծութեամբ մը, կը հարցնէր ինքն իրեն:
- «Ի՞նչ է գեղեցիկը»: Ու կը պատասխանէր ինքն իրեն.— «Հարցումն տարսրինակ»:

Կառք մը կեցաւ պարտէզէն դուրս: Թշուառական՝ վարողը: Աւելի թշուառ՝ աւանակը: Մէջէն յատակ կը տեսնուէր պղնձադոյն արարած մը, ծածկուած գլուխէն անճշդելի, բայց՝ պա՛րզ՝ թեւե-

բուն մորթովը: Մոցին մանուկ մը, նոյն գոյնէ: Երջանկութիւն: Այդքան էր ըլլալու, քանի որ անբացատրելի ժպիտ մը ցաթեր էր մանկան երեսին: Հաւանաբար մօրմէն անդրադարձած: Աորս քայլ անդին այդ պատկերը պատասխան մըն էր հարցումին:

- Դուք միշտ կապ պահած էք հետը:
- Ո՛չ: Գառորդ դար կայ, որ անիկա հեռացաւ Փարիզէն:
- Չաւա՞հը:
- Հե՛տը:
- Հե՛տը:

Բանաստեղծը յուզուած էր յայտնապէս:

Անոր աչքին ինկեր էր աշնային ցուրտ, ցեխոտ առտուն, երբ սեւ մանթոյի մը մէջ փաթթած ինքզինքը, ծոցին՝ նորածինը, բացեր էր դուռը մանսարտին: Անիկա գրած էր պատկեր աթոռին, սանդուխենքէն հեռապատ, շունչ առնելու համար, հեւալով տակաւին քանի մը վայրկեան: Յետոյ աղաչե՛ր՝ որպէսզի ըլլար բարի, ըլլար դժած կանչելու, «բերելու» անոր (ցոյց տալով պատկեր) հայրը: Թէ ինչպէս անծրելին մէջէն վազեր էր ինքը սենեակը Պարզեւեանին ու լալով խնդրե՛ր անկէ, որպէսզի զար միտսին, դոնէ վերջին համարոյով մը ճամբու դնելու «զաւակը»: Այդ սրտապատու ոգոր՛ումը մարմարին ու կրանիթին դէմ: ...Դարձած էր մինակ, սրտի այդ անըմբռնելի սեւութեան վրայ խննթեցած գրեթէ: Ու լացած կրկին «ժամային» հեռ: Անիկա, արամադրած էր իր սենեակը, յօժարած առնել այդ տղան: Բայց մայրը գրկած էր պատկերը, յետոյ երկարած «բարեկամին» համարոյին: Ու դեռ չէր ջնջուած իր շրթներէն կազուղ այդ սրտմութիւնը, երբ պազնելէ յետոյ դորովով ու արցունքով «հայու այդ կտորիկը», սեղմած էր սրտին: Ամուրի բանաստեղծը «իր դասակը» առաջին ու վերջին անգամ կը սեղմէր: Այդ կնոջ վի՛շտը: Երբ իջեր էր վար, արգիլելով հետեւի իրեն, որպէսզի չկորուէր իր սրտումէն ու ազատէր մանկիկը իր հօրը շարժէն: Գացեր էր իր երկիրը: Ու կը դառնար քառորդ դար կտրը, բանաստեղծին զգացական կեանքի խորագոյն յուզումը այդ տեսարանը, որ կը բռնուէր աչքերուն դէմ ամէն անգամ, որ տարուէր կնոջ մը հրապոյրէն ու կը քաշուէր ընդոտտ, մախնալով կեանքէն, որուն աչքերուն մէջ զժնդակ պատկերներ, կծիկ-կծիկ, պահ էին դրուած, քաշուելու համար իր ջիղերուն հատողութեան:

- Ինչո՞ւ խոնարան ձեր աչքերը:
- Այսպէս:
- Կառքը կլաւ ճամբայ: Դազա՞ղ մը: Ոչինչ դիտնար:
- Հիմա՞:
- Այս իրիկուն պիտի գայ ձեզի:
- Միե՛նակ:
- Տղուն հեռ:

Կառքը ջնջուած էր կամուրջին եզրացանկերուն մէջ: Ու գոցուած ինչ որ կեանք կը կոչենք:

- Դո՞ւք:
- Կը ստիպէ, որ ընկերանամ իրեն:
- Ինչո՞ւ:

Կրկին մանաստեղծան տեսի՛լը, իր խոր, անջնջելի ողբերգականութիւնը:

— Ո՞վ սակայն այդ ստեղծողը :
 — Մայրը :
 Սոնան թօթուեցին :
 — Ինչո՞ւ :
 — Պարզ է : Ձէ տեսած շատորդ դարէ ի վեր :
 — Ձէ՛ տեսած : Անչո՛ւշտ : Բայց շարունակած է...
 — Ի՛նչը :
 — Միբեւ :
 — Թշուառ է ատ բառը, Օրիորդ, երբ դարնենք սիրտերուն :
 Ու անծանօթ է անիկա : Ի՞նչ՝ մեր զիտութիւնը, որպէսզի այդպէս
 վճռական բանաձեւենք մեր եզրակացութիւնը :
 — Իմ զիտութի՛ւնը : Խեղճ է անիկա, նման նոր ծնող ժանու-
 կի մը շրթներուն :
 — Այո՛ :
 — Բայց յստակ : Գանի որ այդ տարիքին իսկ մէկը կ'ուզէ իր
 հետը :
 — Ի՞նչ կ'ապացուցանէ տակիկա :
 — Թէ կը վախնայ :
 — Վա՛խը :
 — Բայց վախը սէրն է, մանաւանդ մարմինէն հտքը :
 Խորունկ մելամաղձութիւն մը ողողեց երկուքն ալ :
 Բանաստեղծը կտորեց մեռիքի փոքր ոտար, մէջքէն երկուքի ու
 դրաւ ծունկի զագաթին : Ամէն մարդ ունի այս տեսակ ընազդական
 շարժումներ, որոնք իրենց ներխուժումովը մտածման կամ յուզու-
 մին յորդ հոսանքը կը ղեկավարեն : Յաղաղութիւնը երբեմն կը վար-
 ձատրէ այս անիմաստ միջամտութիւնները :
 Տրամահար երա՛նգը, որով եղաւ պահը տարբեր անմիջական
 առաջին : Սոնան կը վախնար : Մտնեա՞ծ ինքզինքը :
 Լուսիթիւն :
 Նեղոսի վրայ սիւն մը : Նուր ինչո՞ւ չէր տեսներ : Անոր կա-
 տարին մօտիկ, երիտասարդ մը, որ հանդարտ, իրր թէ ըլլար սըր-
 ճարան, աթոռի մը վրայ, ոտքին մէկը հիւսած սանդուխին, կը ծխէր
 առատ : Մուխը տարաւ անոր միտքը ծխատան վարիչին : Արտակ Գառ-
 պարեանին : Ունինք «ճեպընթաց» մտածումներ, որոնց պնացքին մէկ
 կարեւոր մասը կը խուսափի մեզմէ : Անոր միտքը ռասհած էր երի-
 տասարդէն, տարածուելու համար բանաստեղծին : Չարօրուած հող
 անոր իմացականութի՛ւնը, որ Պարզեւեանէն բառ ու զգայութիւն էր
 սմբարեք, ու չէր արտադրած : Իմացական ազերսը մարմնականէն
 կը զատուի անով, որ փոխազարձ է, այսինքն՝ ստեղծիչ : Սոնային
 մարմինէն ուրիշին հաշուոյն զգայութիւններ միայն հանուեցան ու
 անոր միտքը մնաց կոյս : Կու գայ վայրկեանը, երբ մեզի ծանօթ,
 բայց չխըրացուած եղելութիւններ մէկէն կը դառնան պարզ ու մեզի
 յատուկ : Կարդացած էր Տիրանեանի քերթուածները ու անցած ա-
 ռանց ապաւորութեան : Գանի մը ժամուան աղերսը բաւ պիտի ըլլար
 քակելու դժնիկին ցանցերը անոր ջիղերուն ճամբաներէն ու զգալու
 անոր քերթողութիւնը այնպէս՝ ինչպէս որ էր անիկա, խորունկէն
 եկող եւ որուն ամէն մէկ սողը կը կրէր կոյր ու անորբարեի տրրա-
 մութիւնը հոգեկան մեր աշխարհին, այնքան քիչ ծանօթ մեր բա-
 նաստեղծութեան : Մերինները մարմինը կամ անոր վրայ կամարուող

ջերմ ու խոշոր հոսանքները տեսած են, բայց ոչ հողին։ Մերած, արամութեան այս ասպետը, Հարցուց անիկա ինքն իրեն։ Յետոյ անիկա խորհեցաւ, բայց արտաշին դորովով անոր աղնուական իմացականութեան, որուն լայնքը, անտովոր մեր ժողովուրդին համար, կը կորսուէր մշուշին մէջը մեր շկամութեան ու ապօրինութեան։ Պարզեւեանը սիրելի կրնայլը, անոր հետ տարիներ ապրելէ ու դիտանալէ ետքը, մեծութիւն մըն է ինքնին։ Անոր նամակները, ուղղուած Պարզեւեանին, փաստ էին նոյն ատեն սիրտի ալ աղնուականութեան ժը։ Մեղքով համեստութիւնը մեղք մըն է, երբ սիրտի ուժով չի պաշտպանուիր։

- Ուրե՛մն։
- Ուրե՛մն, կ'երթաք տուն, կը պատրաստէ՛ք ձեր մայրը։
- Պէտք կա՞յ ատոր։
- Կայ, Օրիորդ, վասնզի ամէնէն ուշ ծերացող մասը մարդոց, սիրտն է կ'ըսեն։
- Մեր ծնած սիրտե՞րը։
- Անոնք ուրիշ բան են։ Երջագատի ահաութիւն մը կայ, բայց դեռ ատեն կ'ունենանք խօսելու։ Հիմա կարեւոր բաներ կան ձեր առջեւ։ Պիտի աշխատիք, որ չյուզուի ձեր մայրը։
- Չեմ յուսար։
- Մի դատէք պատկերին կեղեւէն։ Կինեքը ատած ոտեննին, ըսել կ'ուզեմ՝ այդպէս կարծած ատեննին, ամէնէն խորը կը սիրեն։ Աւ պէտք է մասնականը չյուզուի Պարզեւեանը։
- Ատոր վստահ եղէք։
- Կրկին մտնական կը խօսիք։ Վերջին չեւած՝ բնութքը չ'ելլիրն կ'ըսէ ժողովուրդը եւ իրաւունք ունի։ Այդքան դիւրին մի տեսնէք տեսարանը, որուն երկու եղբրը անջրպետուած են քառորդ դարով։ Պարզեւեանը ատանմանպէս պէտք ունի խնայուելու, վասնզի զօրաւոր յազումները աղէտալի կրնան դառնալ իրեն։
- Իսկ ուրի՞նչ դիտէք այդ ամէնը։
- Իր նամակները։ Յետոյ՝ ծանօթութիւնները, որոնք քաղերիմ հոս գալէս ասդին։
- Մոնան կարմրեցաւ։
- Շատե՞ր ահաք։
- Մարդիկ շատ են, երբ խելք չունին։
- Հտութիւն։
- Ի՞նչպէ, ինչո՞ւ չէք իջած Մարանին պանդոկը։
- Չեմ ախորժիր այդ մարդէն։
- Նո՞ր։
- Ոչ. առաջ ալ։ Յաճախ նեղուած եմ Պարզեւեանէն, որ չկրցաւ ուզտակ ինքզինքը դռնէ այդ աղտոտութենէն։
- Ո՞ր աղտոտութենէն։
- Կեանքեր կան, որոնք դժուար թէ իյնան ուրիշ որակումի առակ։ Մարանին համար դեռ մեղմ է բառը։
- Հանած էր ահնոցը ու չփած փեղեկերուն հետքը քիթին թափերուն։ Յետոյ սրբէր պիտի ապակիները։ Մանր որոշումներէ առաջ անոր անպիտակիտ շարժումները ատոնք, որոնք միտքը կը հանդերձէին գալիքին։
- Ատի՛թ է, որ ըսեմ ձեզի մէկ մասը իմ մտածումին։ Զգո՛յշ

եղէջ այդ պատուական ազգայինէն, որ իրեն յատուկ, մութ ծրարներն որով ծրարով ունի իր ուղեղին տակ :

— Մտիկ կ'ընեմ :

— Նոյնպէս հարկ է զգոյշ ըլլալ ցաւազար իշխանէն, որ, մեր մեղքերուն համար, ձեռքի մեռնն է այսօր : Ու մա՛նաւանդ զգոյշ ըլլալ այդ դիւթաւանդէսին մեղքամանէն, որ կրնայ ճարտար ծուղակ մը ըլլալ :

— Ձեռ հասկնաք ձեզ :

— Քիչ հասկցէք :

— Պարոն Տիրանեան, անտորձ տղայ չեմ ես :

Կը փոխանորդեմ խօսակցութիւնը ու կու տամ ամփոփումը :

Երբ պարտէզէն ելան դուրս, Սոնան համոզուած էր, որ Արտակ Գասպարեանը տեսած էր ճիշդ : Թերուս իշխանուհին, իսկական իշխանուհի, ու կարելի է մեծ արուեստագէտ, չէր դադար պատկանելէ նոր դասակարգի մը, որ Պատերազմէն ասպին անուձի էր ելած Աշխարհի Վեցերորդ մասին մէջ ու անկէ դուրս, բայց անոր տարրերովը : Այդ մարդերը, դեռ Պատերազմէն առաջ, կեանքը դաստիարակութեան կերպ ունէին : Ու ուր իսկապէս մեծ ժողովուրդին մեծութիւնը պայմանաւոր էր իր զգայնութեամբ : Սոսակցութիւնը, անդամ մը այս դատիթափը դտած, քալեր էր աւելի բարդ ընդհանրացումներու : Պատերազմը նիւթական իր կորուստէն աւելի խորտակած էր ազգերու քարոյսլիանիս հիմունքները ու շրջած շատ մը տախտակներ : Ինչ որ տասը տարի առաջ, անքաւելի ոճերի մը պէս պիտի խոցէր խղճմտանքները, տասը տարի ետքը, կր դպէր մարդոց միայն իրողութեան, փաթեթիւնի դերացոնց օտիթ մը ընծայելով անոնց, ինչպէս կ'ըլլար ատիկա հազարամեակներ առաջ, Հոովմի կրկնները հանդիսատարող ամբոխին մէջ : Ազգեր էին ջնջուեր, որոնց ողբերգութիւնը անցաւ անզոտի : Ու մարդիկ, կրնային, առանց խղճահարութեան, որտակին հաճոյքով նոյնիսկ, ձեռն սանդուխի վրայ արքել վայելքներ, անտիպ կամ հաղուադէպ տարրերով : Կինը առաջին իսկութիւնն է գայելին : Ու աղջիկը՝ անոր թունդը : Սեռային մարդէն զանցուած արձակութիւնը — ճակատագրական անդրադարձ մը հոգեկանին վրայ դործադրուող ճնշումի — ամէնէն աւելի ցայտուն արտայայտութեան կը հասնէր այն «թաւայուն» հեշտանքին, որով պարտեր էին այդ վաւերանշան սզնուուհիները, թաղաքէ թաղաք ու աշխարհէ աշխարհ, սկիզբները հացին սարսափով հայտնական, հետադիմակ հեշտանքին մէջ զիտեղելով արուեստին այ շքեղութիւնը, արբուանքը, ու «թաւայուն» տաղանդով ու յուզումի իշխանագուն դեղեղեղութիւնները իրենց մարմիններուն, այդ իսկ շարժումին մէջ ընդունելով տեսակ մը դեղթափ, տեսակ մը փոխմբէժ, որով հանդուրժէին իրենց քանդուած, այրուած, անհնցած ճիշտանգնութիւնը», փոխադրելով օտար ոլորտներէ, առանց նուազման իրենց զգայնութիւնները, իրենց հետաւոր հայրենիքին անբաւ թախիծին» մէջ խորատոյգ, անկէ մշտահալած, զղլխուած ու մտալլկանքը հակադրուելու համար իրենց դիրքնը օսեմանած, կամովին, մարմնալլկանքին, ծախելով (բառին սուէջ դիրքերուն իմաստը, վասնդի ընթացիկը հասարակ է արդէն) իրենց մարմինները անսպառ ծարաւով, արելով Արեւելքին ու Արեւմուտքին դեռ չփտած հոգեհիւսքը : Յետոյ, այս աղաւաղումներուն արահետէն, Տիրան Տիրանեան իջեր էր մերթնե-

րուն, մանաւանդ գայթակալ իրականութեան ամէնէն թիփիկ կեդրոններուն: Փարիզէն, ուրկէ կր բերէր մեր ազլիկներուն հետախազաղ նուաճումը տժգունութեան եւ աննշանութեան աւազուտին մէջ, քանի որ մեր երկառարդները օտարուհիներուն խոռոչովը կարթըւած՝ կը մոռնային զանոնք, ու Գահիրէին, ուր մեր ազլիկները պատրաստ ու հրապուրիչ մարմիններ էին ամէնազգի օսկեխոյզ ու ապիկար ցոփերուն: Բայց ազլիկներէն առաջ, միւսները, այրե՛րը, միշտ մերիններէն, որոնք Փարիզի երկառարդներուն դերը կը կատարէին շրջուած իմաստութեամբ մը: Ո՞վ չէր դիտեր, թէ անհորձ ազլիկներ, աղքատիկ ու զեզանի, հեռուներէն մարձուած, կը պատրաստէին հզօրացող անդէսներու, ներկայացումներու: Ու կը հանէին գլխէ, առանց դժուարութեան, փորձերու իսկ ընթացքին, պարզ՝ ջուրհաններուն բղձախճ բուրումնով, աւելի զժուար պարագային, տափանաւորու խորը, անմեղ ու ճարտար խժիշքներով, մատուցուելու համար այս կամ այն հաստուտին, իշխանազունին, լորտին կամ փաշայի բարի վայելումին: Բարքերը փոխուած էին, թէ շտապած՝ այն դէպքերը, որոնց մէջ ծերացած մարդիկ, անյազուրդ ախորժակներով, ճիւղ դառնային կտ, գարնան վարդերուն: Զգե՛րով այդ ընդարձակութիւնը կիրքերուն ու տիպարներուն ու մնալով սահմանափակուած մարմիններուն փոքրութեան, խեղճութեան, կարելի չէր մեծ ստուգութեամբ դատել զսպանակները Մարաններուն ու Արժբունի Իշխաններուն: Բայց մեր անցեալը զարապ խեփոր մը չէ միշտ, զոր թանգարան ենք նետելու: Ու մարդերը եթէ երբեմն զետեղելի չեն իրենց օր մը լքած խորխորուն մէջը, չեն ալ կրնար Վերքել խորթը, զոր կրած են տարիներով: Բանաստեղծին թափանցումով — Տիրան Տիրանեան տարիներով թերթ ու կուսակցութիւն վարած, վարժուեր էր մարդոց թաքուն ճէնքերուն, դատելու ամէնորեայ հարկը լայնցնելով ընդհանուր զաղափարներու դէպի նուաճումը, մարդոց արարքները տեսնելու հասար իրական երանգով — կատարուածը, աւելի ճիշդ՝ կատարուելիքը ճարտար, բայց հասարակ ռազմախաղ մըն էր, որուն հանդոյցը կը կազմէր, հայկական խեղճութեամբ, ամուսնութիւն մը: Մարանեան դրամով ոտքի՝ ծխախոտի նորահաստատ տունին վարիչը հեռաւոր, բայց իրական գրան էր այդ խաղին. Տիրան Տիրանեան, մեծ յստակութեամբ, վերլուծեց պատահարները, առնելով զանոնք բաւական հեռուներէն, լուսաւորելով զանոնք Մարանին յարալուք ու դոճակի նկարագրովը, օտար ափերու վրայ մեր մեծութիւններուն ցանցառ փառքին քով այս վատախտարակ արարածներուն հետզհետէ տիրական դառնալու տխուր իրողութեան վրայ ափսոսալով: Ուրիշ ժողովուրդներու մէջ, այդ մարդերը արժանաւոր մեկուսացումով մը, միշտ այնպէս քեթիւն դրուելու արդար պատուհասումով, կը դադրէին փառք ու մեծութիւն հռչակուելէ: Մեր մէջ այս Sanctionին պակասը կարելի կ'ընէր անոնց զերազանցութիւնը: Մանաւանդ Եգիպտոսի մէջ քիչ-քիչ ընկերակող պետական արահետէ բարձրաստիճան տգեղութիւնները տխուր օրինակները կը ձգէին այս բույրիկ զեղացիներուն, որոնք դրամին համար չորս օտքով ապրելու փառքը պիտի չզիջէին ոչ մէկ դնով: Մասնաւորուելով վերջին եղելութեանց, անիկա վեր հանեց դէպքերուն ընդհանուր ուղղութիւնը, անոնց իւրաքանչիւրին մէջ ճշգրտով Մարանին մէկ ու մեծական նպատակը — տունի ազլիկը, Մելինէն ճեռ-

ղաւորել: Ու անղաւորել լաւագոյն երկասարգին, որ յետ-պատե-
 րագմեան սերունդին մէջ զեղեցիկ բացառութիւն մըն էր, յանդուզն,
 պործօն, բայց խորապէս պարկեշտ: Որուն միակ թերութիւնը ըլլալն
 էր սիրահարուած Օրիորդ Սոնային: Այս Հիմնակէտէն մեկնելով՝ բա-
 նաստեղծը կը կարծէր Հասկնալ ռազմախաղին երկրորդ ծրագիրը, որ
 ճարտար յարգարուձով մը անմատչելի էր առաջին նայուածքին: Ար-
 տակ Գասպարեանը — այդ ականակր, ինչպէս կ'որակէր զայն Մինաս
 Մարանը — մեղաւոր էր դարձեալ, առանց իր դիտութեան, Հրապու-
 բած ըլլալուն Օրիորդ Մելինէ Մելինեանը: Բայց լայնօրէն քաւելի
 այդ մեղքը անիկա կ'ուրանար — կը քուսպատկէր ատով — մնալով
 հաւատարիմ ճանորակելի արարածի մը, ինչպէս կը փոփսային մար-
 դիկ (Մարանէն թելադրուած ու քիչիկ մըն ալ Պարզեւեանէն քայտ-
 լերուած, անշուշտ տնուզողակի ազդուած տնոր սրբազան ապարտո-
 յութեանէն) ամէն տեղ, Սոնային մտտին: Ու կը մնար Հերոսական ե-
 դանակը այդ «աւանակը» իր մտերին բերելու: — Անպատուել Սոնան,
 բայց հրապարակաւ, տնկանդնելի կերպով: Անշուշտ ամէնուն աչքին
 սա փարկաբեկումը պիտի անդրադառնար նաեւ Արտակ Գասպարեա-
 նին: Միջոցը: Մարանը թանգարան մըն էր: Այդ մասին ոչ մէկ կառ-
 կած: Ու ահա քովնիս տարբեր: — Ամէնէն առաջ Իշխան Պողոս Ար-
 ծրունին: Պարզ էր այդ շուրթով հետադիմուած ծրագիրը, Իշխա-
 նին տխարը, ա'լ ջնջուելու վրայ, տարօրէն, «զիպող» էր Պատե-
 րագմէն յետոյ: Իշխանները, արդարացնելու Համար իրենց տխորո-
 ները, կ'իջնէին կրկէս, խելքով ու դրամով, ծառայելու ազգային դա-
 տին, ոմանք գրաբար ոտանաւորներն ալ անօգուտ չէին սեպեր այս
 ցեղին ապագայ ընդունակութեանց փաստուէին: Ազգային լուսապը-
 սա՛կ: Ի Հարկէ՛: Պատմական «մոմենտին» անմահ առաքեալները:
 Արծրունի՞ն: Ըրին զայն ալ մեր եռանդուն ազգայինճիւղները ու պար-
 ըող, տափակ, ուրիշական որակումով՝ «խոցապատել» մարդուկ մը
 քչեցին աստեղաստութեանց, միթիւնիկերու, պայտօնական այցելու-
 թեանց, դիւանագիտական բանակցութեանց, մինչեւ որ տխարը,
 յոգնաբեռն ու անկարող, թօթափեց ինքզինքը ու իջաւ իր ճամբան,
 մեռին ու խմբէին Հնձանները: Ընչեղ սպրտղի, իմաստէն անժառանգ
 յիմարի իր յանդուզն առաքինութիւններով՝ անիկա օգտագործուե-
 ցաւ միջազգային արիկաներու շքախումբէ մը: Ջայն կարելի էր դիւ-
 բաւ առաջնորդել զեղեցիկ խնթութիւններու, մարանեան ոճի, ինչ-
 պէս դժուար անզգածութիւններու: Պարզեւեանին Հետ իր յարաբե-
 րութիւնը սկսած էր թշնամական խտուրթեամբ: Անիկա ամէն տեղ
 առիթը չէր փախցներ «աւտելու» անոր Հոյակապ տաղանդը ու թըք-
 նելու անոր աղբահիւս նկարագրին վրայ, կրկնելով հասարակաց դա-
 տաստանի մը ա'լ տափակցած սրամտութիւնը: Յետոյ մօտեցած: Վա-
 սրնդի «մեղրին» Հոսը առնող արջու կը նմանցուէր անիկա իրաւամբ:
 Ազգաստութիւնը դժուարագոյնն էր քաւելի մեղքերուն: Արիւնդատէի
 երեւումը տարած էր իր լըումին ինչ որ գրողի լըում, թլուստու-
 թիւն, կարճ՝ անթութիւն կ'անուանենք: Քաղաք մը շատ-շատ մէկ
 մեծապատիւ մուրացկան կը հանդուրժէ: Բախտը կ'ախորժի նորէն:
 Ու դուք գիտէք ուրացումը, որով պարուերուեցա՛ւ արեւմտահայ մե-
 ծաստաղանդ արձակագիրը: Աւելորդ չէր ուրեմն զրազիլ ձիվանդատէ-
 Պարզեւեան գօտեմարտով, ուր, առանց արժանիքի ու առանց հիգի,
 արեւելահայ միպագիրը զգեսանց իր հակառակորդը, զայն քշելով

հրապարակէն, ինչպէս ըլած էր ինք, ատենին, իզմիրեան պոռնկա-
դիրը գէպի Ծէտի-Գուլէի հիւանդանոցը: Աւելի նուազ աստիճանով
կարելոր Ռիթա-Սոնա միջադէպը, որ յանդուժ մըն էր, զան թէ
սկիզբ մը: Տիրանեան դառն ծիծաղով դատեց իշխանական ամուս-
նութիւնը երկու աղջիկներուն ալ ձուածիրէն: Կերպուորուած՝ այս:
Բայց երբեք իրացած եւ իրանալու: Ինչ տեղը կար սուտը սուտով
պտակելու անխելք յամառութեան: Տիրանեան եղաւ բաւական թա-
փանցիկ Ռիթային պալիկ Աւոյին մասին: Կարգ մը դարավերջիկ օ-
րերոգներ պարտաւոր են նկատի առնելու իրենց «պալիկներ»ը, երբ
կը հրաւիրուին ամուսնութեան ու ձեւը դտնել զանոնք հարկադրելու
իրենց կրկններուն: Անոնք շատ էին ուսական բարքերու մէջ: Յի-
շել նոյնիսկ այլապէս դժուար ամուսնութիւններ, պաշտօնական, ու-
րոնց մէջ սկզբնական ամուսինը տեղի կու տայ, առանց նախնիներու,
հացի հարցին առջեւ զիջելով կիներ տւելի հացալատի մը: Տիրանեան
ոնցաւ լուս, Ռիթային շուրջ փոփոխած միւս մեղքէն ու ասով խո-
րապէս կրտստագէտ ձգեց թշուառ աղջիկը, որ սպասած էր այդ շը-
շուկին ալ հրապարակ դրուելուն բանաստեղծին վերլուծումովը:
... Ազամադը, դիւթահանդէս, իշխանուհիներ, բուրն ալ կը զիմէին
նոյն ծրագրին, — տապալել Սոնան: Անիկա, դադրած գիծերով,
բայց ըմբռնելի ուրուացումով զպացուց այդ տապալումին կարելի
միջոցները, ձեւերը, զաղելով տիպարային դրուագներ այդ իշխան-
ներուն ու ուհիներուն «թաւալուն» բարքերէն:

Անոնք իրարմէ բաժնուեցան, իրիկուան կրկին տեսութեան
խոստումով: Պիտի ըլլար ատիկա, Հելուան, Սոնայեկն տունը:
Առանձին:

Անիկա յոգնած էր շատ, երբ հասաւ Հելուանի կայարանը:
Օրը՝ անցած կէսէն, ու շոգը՝ անասնելի: Թեթեւ մը անհանգիստ էր,
հակառակ անոր, որ պայծառ էր միտքը, նման դաշտի մը, ուրիշ
մուշին պատանքը վերցուցած ըլլան: Մոռցուած բանի մը տարտամ
մտահոգութիւնը, որ կաթիլ-կաթիլ կ'իջնէր ու կը նստէր: Փնտեց
ու գտաւ, — չէր խօսած Արմանին վրայ: Թեթեւ, ամչցաւ այս յա-
պագած շարժին համար ալ: Յետոյ, ճարտար շրջումով ազատեց իր
ամօթխածութիւնը: Ո՞վ էր: Ի՞նչ կ'արժէր անոր դաշնակը: Այս հար-
ցումները զինքը թեթեւեղելով հանդերձ, իր նկուն ճնշումէն, խան-
դավառեցին քիչ ետքը: Մեծ արուեստագէտ մը: Կանգնեցաւ մտքին
տաղանդը Պարզեւեանին, որուն արիւնէն...

Վազոնին մէջ, իրեն հետ եղաւ պատկերը մելամաղձոտ բանաս-
տեղծին: Անկամ մը յիշատակ, այսինքն՝ հետու, այդ պատկերը կը
ստանար իր խոր ու մութ թախծութիւնը, միտքին ազնուական լայն-
քը ու իմացական այն հմայքը, որով կը ճաճանչաւորուին հոգեկան
լատիկութիւնները ու կը տպուորեն: Գետափնեայ պարտէզին մէջ,
անոր վերլուծումին ամբողջ տեւողութեանը անիկա մնացեր էր հիւ-
ցական զգացումի մը մէջ ու այդքան: Հիմա, ըսվ ըսվի դրաւ Պար-
զեւեանն ու Տիրանեանը, առանց կարիքի, պարզ բարդատուութեան
մը համար: Արդիւնքը արում էր շատ: Անիկա անտարբեր էր բանաս-
տեղծին համար, քանի որ կը գտնուէր դուրս անոր մեղքին ոլորտէն,
բայց կը տառապէր միւսին համար, որուն մարմինը, հակառակ իր
սկսած քայքայումին, մշտաւոր աղբիւր մըն էր խոսվորի: Ա՛յրը՝ այդ
երկուքէն, Պարզեւեանը նորէն, նայելու, ողորդելու, թաքուն լարե-

րուն դպիւ կրնալու սահայէլեան իր թեքելքով, որ կը զգեանէր միւսին առաքինութիւնները: Յաւիտենական ու անլոյծ այդ առեղծուածքը սեռին, որով կը բացատրուին, այսինքն՝ բացատրել կը ջանան վիպողները, բոլոր մեր մեղքերը ստուարագոյն տոկոսով՝ հարկատու սեռային աւագանին: Կիները, սորո՞նապաշտ, յաջողութեամբ կը ջանան լուծած ըլլալ առեղծուածը, իրենց յարգանքն ու հիացումը նուիրելով մէկուն, ու իրենց մարմինները՝ միւսին: Մեր քաղաքակրթութեան խոր արամներէն մէկն է ասիկա ու սերունդին արիւնին մէջ թափանցած է: Կար ատեն մը, երբ իմացականութիւնը վիճելի չէր ու կիները զայն կ'անգիտէին: Հիմա: Երկու դար առաջ, շնորհալի արհեստաւոր մը մեռնելիք երիտասարդը, այսօր ինքզինքը սուրացուած արքայ մը, նուազագոյն տաղանդ մը կը դաւանի, երբ կը զբէ երկու լեզու կամ կը ստորագրէ երկու սիւնակ: Ու այս պիծով՝ իր պահանջը, բաժինը սեռէն: Կիները, աւելի ուշ փոխուող տարրեր, աւելի հարազատ են անցեալին, երբ կը զոհեն մէկը միւսին: Այս կէտին վրայ անմիջապէս իրենց զգալարանքը պիտի չ'ընկրկեր նոյն կարելի արամէն: Տխուր է անշուշտ, որ երբեմն պարզ մարմին, երբեմն պարզ շողոմ ու սուտ, երբեմն հիւլէական հրատարակ, ըսել կ'ուզեմ՝ մորթի, դէմքի յարդարանք այնքան խոր ազդեն կիներուն զգայնութեան ու մղեն նժարը զէպի վերի պայմանները, անտեսելով միտքը, հոգին, արուեստին կամ գիտութեան խոշոր-խոշոր ու յաճախ անփոխարինելի տուրքերը: Յիշեցէք մեծ մարդոց կիները ու անոնց ճարած սիրահարները:

Սոնային շրթներուն ուրուացաւ Տիրանեանի մէկ քերթուածը, ուր, «պատրանքէ գերծ» բանաստեղծը հիմնախելքն էր ըբեր զգացական այս ոգրերգութիւնը, վերջնիւով անոր մէջէն գոհակիկ, անմեկնելի գրականութիւնը «միտին ճաշակէն» ու տարածելով զգացումը աւելի հեռուն, քան փոքր պատահարը երկու մեծ բլթիներու, տրուին եւ էզդեն ընդմէջ թաւարով: Անկէ կ'առնէր ներս աղուորներն ու շաղուորները, որոնք օր մը անցնին պիտի բլթիին պարունակէն, նային ըտպէ մը միւսին, զծեն զինքը ու ա' շաղունան պիտի: Բայց որոնք, կը լրացնէր Սոնան, երբ անցնին պարունակէն Պարզեւեաններուն, նայած ասանն իսկ պիտի բռնուին ու պիտի չկրնան ազատել զիրենք կախարդ շրջանակէն ու պիտի մնան կապուած լարերուն մէջ անոր առանցքին, մինչեւ որ քալէ կառքը ճակատադրին ու դառնայ անոնց վրայ: Այս չէ՞ ճակատագիրը կիներուն մէկ մասին, անոնց՝ որ ամէնէն աւելի բարձրաձայն կը պահանջեն իրենց բաժինը միտին հանդէսէն ու կը տառապին, մտնելի իրենց սայլը կ'անցնի ամալի վայրերէ: ...Ինչ ողորմելի էր երիտասարդ աղջիկը պատկերներու սաժապաւէնին դէմ: Անիկա կը մեղքնար բոլոր Տիրանեաններուն, որոնք պիտի չափուին ու պիտի չհասկնան ինչո՞ւն: Ու կ'ափսոսար միւսներուն, Պարզեւեաններ՝ որոնք պիտի տառապին հարստութեանը ձեռքը իրենց ջիւղերուն:

Երկրորդ կայարանէն իր դէմը նստած էր կին մը, դալկադէմ, բայց հաստած գրաւորութեամբ, հաւանաբար հիւանդ: Անիկա չկրցաւ հանդուրժել կիսակարմիր նայուածքը այդ կնոջ, որ թեթեւակի հեւալով, ով գիտէ ի՞նչ կը մտածէր առատ պատկերին առջեւ, որ Սոնային առաջնութիւնն էր ու մարմինը այդպէս: Պատկերին հետ անոր ներսը խուժեցին իրենց տունը, Հեռացող Պարզեւեանը, դէմը պար-

տէզը, թոքախտաւոր մայրը ու անոր «հրեշտակի պէս նուրբ» գաւակները: Ո՞վ մեր յիմարութիւնը, որ յանկարծակի «կը հրազինուի» այսպէս հրեղէն հարուածներով ու մեզ հետամուտ կ'ընէ այնքան խոր բաներու: Սոնային առջեւ վերջապէս, բաւարար յատակութեամբ իմաստի կ'ըլլէր կեանքին ընդարձակ տառայելը, զոր կը յօրինեն մեր ամէնուն հոգիները ու կը պահպանեն անխախտ: Այդպէս է, որ կեանքը պիտի փուռի մեր մէջ ու շուրջը ու պիտի զգանք զինք մեր պատրանքին: Ինքզինքը սպաննելը առասպելը լուծելուն ամէնէն հասարակ ձեւն է նորէն: Պարկեշտ է կեցուածքը, երբ չի յաւակներ հանդոյցը քակել: Մէկ հատիկ կին, չափաւոր շրջանի մը վրայ կեանքի, կ'ապրի այնքան շատ, որ հազար զիրքեր պիտի գային քիչ այդ ողբերգութիւնը արձանագրելու: Ու տառապանքը միլիոն է, միլիառ է: Ու ժամանակին իւրաքանչիւր ատմել բիւբ անգամ բիւբ սիրտերը կը կախէ իր կեռէն, բուրբն ալ Սոնային կուրծքին տակ դողացող բանին նման: Ո՞վ անհաս, անպարագիծ մեր ողբերգութիւնը: Մտածելն իսկ պտոյտ կու տար անոր զլխուն: Այդ կինն ալ անցեր էր ճամբաներէն, որոնց վրայ Սոնային ծունկերը արիւններ էին ու կ'իջնար իր փոսը, այցուած հաւանական պատկերախումբովը այն օրերուն, որոնց մէջ հեւք մը չէր ապրելը, ու սէրը՝ պժշակն էր: Կարանէ կարան, տեսարաններու փոփոխութիւնը, բայց զանոնք շրջանակող երկաթին նոյն ժանգը, մանաւանդ զանոնք զուլաւորող շուշին նոյն կողուն ու թունոտ մամուլը զինքը կ'ընէին տեսլալառ ու արտում: Կեանքին կտա՛ւը, որուն վրայ մարդերը կը տապալակէին անուշի մէջ բռնուած ճանճերու նման: Ու անզոյց զեղնութիւնը զաշտաւայրին, զոր կ'եղերեն ժանտաղէմ փշենիներ ու անխելք եղէզներ, անկարող՝ պարտկելու ծառերուն անբարձիկ ածօթը, այդպէս զլիւհակ, նման խաբուած ազլիկներու, որոնք իրենց կորանքը կու լան: Ու քամոտ շուրջպարը, ներքին, դանկային տեսարաններուն, որոնք վերաւորեցին իր իմաստութիւնը: Անկայուն էր ամէն բան, զէ՛մը կտուրն: Ու խախուտ՝ ամէն բա՛ն, ներսի պատերուն: Քանի կը մօտենար Հելուսինին, այնքան ընդարձակ տրամազնէ՛ն այս հայեցողութիւնները կ'ընկրկէին ու փոխարէն առաջին փրլանի, կը մտնէին ուրիշ բաներ: Դէպքեր ասոնք, հետզհետէ ամբարջող անոր ուղեղին տակ, ազատուելով իրենց միզամածային անդարտութենէն, հագնելու համար շրջապիծ, աննելու համար ապրուած կամ իրականութեան կնիքը: Ու դէ՛մքե՛րը: Ամէնէն տիրականը Միլիէն: Երկուեցաւ անոր աչքին (բայց այս անգամ իմաստէն պարզ) հեղնող ու դաժան անոր ժպիտը, օր մը առաջ, դասի պահուն, երբ կը ծաղրէր երիտասարդ անօրէնը, անոր շունեցած, բայց իր կողմէն բռնաբարձար թերութեանց կրկնէն: Եստ գոհակի այդ լուացողակո՛նը: Աղջիկները աւելի շուտ կ'աղոտտին իրենց բարեբէն, իրենց՝ քան թէ լուացուելիքին հաշուոյն: Անկա չէր կրցած զսպել իր ազտոտութեան ժայթքը ու թէքեր երիտասարդին հաշակին, իր սիրուհիները ընտրելու մէջ ցոյց տուած այդքան «վարնոց» ասոր՝ ժակին համար, զայն երդումով հաւաստելով «բռնուած» Հալէպէն զաղթական ընտանիքի մը մէջ, վարակուած գէշ հիւանդութիւններէ, ուր մայր ու աղջիկ, երկուքն ալ «պէշնոց»ներէ վերցուած (գէշը առնելով պուլսական իմաստով), կը պարկէին երեքով՝ զայն առնելով մէջտեղերէն: Աւանա՛կը՝ որ կը պատկէր այդ հոտին ու

ողջիկն մէջ: Ե՛ղբ: Արտակ Գասպարեա՛նը: Սոնան եղած էր լուռ, զարմանալով լրբութեան սա սասիճանին: Արտակին վրայ խօսիլը, իր ներկայութեան, արդէն նեղութիւն էր անոր: Ու եղաւ անոր աչքին մայրը այդ աղջկան, լեզուէն մեկը ու շաբար, որ իր երեք աղջիկները «ծախիւր էր» մատաղ-մատաղ, սկսելով թաղին սասիկանէն, հացի փոխարէն, մինչև Գրաւման բանակի դունաւոր տասնապետները, որոնք Պոլսոյ մէջ արթնցուցեր եզիպտական ուխորժակներ, կիներու մարդէն: Որ կը դուրդուրար իր վրայ, զգուշաւոր ու թեւաբաց, վազցնելով լալ ուսերուն, քրտինքին համար, կոխելով անոր փոքր ձեռնապայուսակին մէջ սուղնոց շոքուաներ ու պարաստելով անոր, որպէսզի աղէկ նայի իր «սրբին», տասին մէջ ճառանց տունին, որ մը իրեն պէս «հացի՛» ճամբայ մը սորվեցնելով դըժբախտ աղջկան: Ո՛վ մեր կեղծաւորութիւնը, երբեմն մեզ տուի՛ կը վայլես, քան վաւերական ճշմարտութիւնը: Անոր աչքին եղաւ Մարանը, «հոյակապ» իր «ծրազրով» ու «աղագային վարկի» ոսկի նշաններով, որ կարգադրեր էր իր մասնակցութիւնը դի.թաւանդէսին, ու այդ ճամբով՝ վերջնական «կարգադրութիւնը» Իշխան Արծրունի ու Սոնա... ամուսնութեան, ինչպէս միամիտ իր հաւատքին մէջ փոփոսցեր էր մայրը, «Սուրբ Ստեփաննոս» զօրութիւնն ալ ուղեկցելով: Եղաւ «մարդանման» Իշխանն ալ իր անաւոր զէ՛մքին ամբողջ աւերակովը ու լոնտոնեան զգեստին անհաւասարելի արդուկովը (քանի որ Իշխանը Լոնտոնէն կը ստանար իր ամուսնային զգեստը): Ու անգամ Միքովան: Ու անոր տղան, ամէնէն տարօրինակը իրեն այցելող սա պատկերներուն մէջ, խորախորհուրդ ու բունաւոր, որ կու գար պաղանեկ իր ձեռքը ու ինք տակաւին հիմա զաղտագողի ակնարկով կը փնտռէր այդ շրթները ծունկին դողա՛տը հանդիպ ձեռքին վերայ...

Ելան դիւղ: Մութացիկ ու վաճառորդ: Հիւանդներ ու աղջիկներ: Կիները, այսինքն՝ իրենց սեւին խոր արտածորումը, ու այրե՛ր՝ որոնք կը «թափառէին» այդ ԶԱՅԻՆ մէջ:

Անոր առջին, վազոնի հիւանդը: Կը քայլէր իրմէն արագ, հակառակ հեւքին: Ո՛ւր կը վազէր: Ու ինչո՞ւ: Մա՛յր: Ո՛վ դիտէ: Որ իր տղոցը կը փութար: Ինչ յստակ էր կորագիծը անոր կունակին. դրեթէ՛ ճշգրտ էր իմաստը, որով կը զատուին կուրծքով հիւանդները մարդոց երամէն: Ուսերուն նեղութիւնը:

Առանց անդրադառնալու, որ շեղած էր ճամբան, հեռակեցաւ կընեկին: Մարաննեց վիլա՛ն:

Գուռին առջեւ Մեկինէ՛ն, սպասողական, շունի մը դուրսը շեփելով ու ժպտուն: Որո՞ւ: Հարցուց ինքն իրեն ու աչքին ինկաւ դէմի շալէին պատշգամը: Քսանմանայ իտալացի աղա՛ն, որ շուքակի կը նուազէր, բայց ճպտուն աւելի մագիբուն փայլը կը հսկէր: Սոնան տեսնելով ժպտեցաւ ու դիտեց: Մինչ այդ վիլային դուռը փակուեր էր շանգալից: Ապտակի մը ուրիշ կերպ պիտի չէր ընէր Սոնային երեսին:

Այս շարժումը, զուցէ՛ առանց իմաստի, դուցէ՛ անդիտակից, «կրակի մէջ» դրաւ Սոնային արդէն գերազրդուած ջիւղերը: Բան մը, խիստ ու վճռող, ներսէն, վամեց դինքը վիլային առջև: Տիրաբար, դրեթէ՛ վայրագ, ափ առաւ դրան կոճակը ու կոխեց: Հիւսնդ կի՛նը՝

նայեցաւ խոր. ձայնէն հետաքրքիր, թէ այդպէս առանց պատճառի,
ու սպասեց, քիչիկ մը վարանոտ Յետոյ, դիմու շարժումով մը, սր
մութ էր ընողին ալ հատար, ինչպէս իր ճամբան:

Դուռը կը մնար փակ:

Գրեթէ խելագար, Սոնան շարունակեց կոխել կոճակը: Տու-
նը կը հնչէր վերէն վար ու բաց պատուհաններէն ձայնի զիւ անձրեւ
մը կը հոսէր դուրս, թրթռադին, կճող, անտաններէ: Շու՛նք, որ իր
կաղկանձը կ'որոտար:

Դուռը տեղի տուաւ:

Անիկա մտաւ ներս, փակելով փեղկը ետեւէն: Բակին մէջ դէմ
դէմի: Շունք, որ փութաց լսել Սոնային ոտքերը:

Հոն տնոնք ըրին կտիւր: Պարունակութեամբ ձեղի ծանօթ այդ
կտիւրին մասին չուներ խօսելիք:

Անոնք իրար բղկեցին, անդթութեամբ մը, որ զարմանք կու
տար, ամէնէն առաջ, իրենց իսկ սիրտին: Այդքան լեցուած՝ իրա-
րու դէմ սա աղջիկները, երկու օր առաջ, դաշնակի մը վրայ, իրա-
րու մպտող:


Նօթաներուն տրցա՛կը, որ նետուեցաւ Սոնային երեսին:

Սրբ դուրս ելաւ, անոր հողին չոր էր, կրակէ անցած ապա-
ուածի մը նման:

ՅԱՅՈՒԲ ՕՇԱԿԱՆ

(Շար- 17)

(Վերջ Ե. մասին)



Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ



Ստորև տրված մեր աշխատակիցին յոգուածը, որ կաներազանայ քաջամիկ չղացումներու ու գորութեան սեր նրուանդ Քոչարի կեանքին ու դորին, նշանաւոր արուեստաշէտին Հայրենադարձութեան առիթով կատարած է շարք մը ջրգրահարցումներ, որոնց էջմարտութիւնը առնուազն ինչքական կը մնայ: Օտար անդաստաններն իբրև օրինակ յիշուած մէկ-երկու քաջատարիները քնաւ հիմք չեն տար մտածելու, որ Հայրենիքէն դուրս եկած արուեստաշէտ մը, այդ իսկ հանգամանքով, կրնայ Համաշխարհային ժողովրդակներու հասնել եւ իր բարձունքէն նպաստակ մեր ժողովուրդին ու դասին ճանաչման: Ընդհակառակն, դուրսը քանքարին շատը վերջն'ը իրականութիւն եղած է ջախջախիչ սովորով, մինչ Հայրենիքը՝ զիջը աննշող անփոխարինելի գորութիւն: Կմտնելու եւ թեւաւորելու իր ուժէն տնդին, նախ աշխարհի վրայ արտոնուելու տուածով՝ Հայրենիքը աւելի վստահելի կուտան է, քան օտար միջավայրը:

Ոնդրոյ առաջիկայ Հարցին մասին, զմտցնելի մէջ կը խօսուի յաւանիկային, աւելի լայն շափի մը վրայ, հիմնաւոր փաստերով:

ԵՐՈՒԱՆԴ ՔՈՉԱՐ ԵՒ ԶԱՅՎԱԿԱՆ ԶԱՐԳԵՐ

Իւրաքանչիւր արուեստաշէտ կը սկըսի իր դլուխ-դործոցը սանդղազորմել սկիզբէն մինչև իր մահուան օրը, ինչզդինքին ապացուցած ըլլալու համար, որ

իր տաղանդը, իր գործերուն դնահատումն ու արժեւորումը պատահականութեան մը արդիւնք չեն, այլ՝ անձնական զգացումներու շարժապատան պտտիկումը,

և Երկունջ՝ որուն արդիւնքը առանձնա-
յատուկ ոճ մըն է, նոր խօսք մը՝ տպա-
ւորութիւն ձգող հոգիի արձագանք:

Ներշնչուելով Վերածնունդի նկարիչ-
ներէն և հմայուած էնկրի կատարելու-
թեան դադանիքներէն, գերբնական
զարդոցի բազմաթիւ փակագիծները շքե-
ղանքելով՝ Երուանդ Քոչար ստեղծած է
նկարչական թեքնիքի իր իւրայատուկ ո-
ճը, որ զգացումներու և խորհրդածու-
թեան խառնուրդին ժայթքած հանձա-
րեղ կրակ է՝ Քոչարի հոգիին արձագան-
քը:

Քանդակագործ-նկարիչի իր հոգե-
բանութեամբ, զոյներու, գիծերու և
տարածութեան շարժումները մէկտեղե-
լով, ամփոփելով ու տարբազարե-
լով, ան կրցած է ստեղծել շարժական
ոճ մը, իբրև նորարարութիւն՝ յանձին
իր ճնկարչութիւն տարածութեան մէջ՝
(Peinture dans l'espace) հասկացողու-
թեան:

Գիծերը յստակ են ու թափանցիկ,
ինչպէս էնկրի գիծերը: Գոյներուն տա-
լով խորհուրդ, ձեւերուն տալով տարա-
ձական իմաստ և բնիքը վերածելով
խորհրդածութեան՝ Քոչար նկարչութիւ-
նը վերածած է քանդակի, կամ քան-
դակագործութիւնը վերածած է նկարչու-
թեան:

Փորձեր եղած են մինչ այդ, բայց ո՛չ
ոչ կրցած է հասնել այդ կէտին:

Նաուս Կապոն, Փեմաներ և Մարի-
նէթթիի հնարած ազգայնապաշտութիւ-
նը Մոսկուայի մէջ, շարժող քանդակները
կամ ձայնաւոր մետաղէ վիթխարի կտոր-
ները առաջին քայլերն էին՝ քանդակը
երկրաչափական շրջանակներէն դուրս
բերելու գէպի բաց տարածութիւն, դէ-
պի անջրպետ: Հետապային, դարձեալ
Մոսկուայէն, յաջորդ քայլը առնողը Ար-
չիբենկոն էր, որ զոյնը, մետաղը, քարը,
մէկ խօսքով՝ նկարչութիւնն ու քանդակը
իրարու խառնելով՝ կրցաւ հնարել իւրա-
յատուկ բան մը, որ բարձրացաւ գեղար-
ւեստի աստիճանին մաքուր հասկացողու-
թեան:

Վերջին և հարուածային քայլը Քո-
չարինն էր, որ ստեղծեց իսկական նկար-

չութիւնը տարածութեան մէջ, քանդակով
այն՝ զոր փորձեցին դարերով ու շէր-
ցան ամբողջական լուծումի հասցնել մին-
չև իր օրը, այսինքն՝ քանդակին շար-
ժումը ձեւերու և գոյներու շարունակու-
թեան մէջ, կամ նկարչութեան քանդա-
կումը՝ զոյներու և ձեւերու տարածա-
կան շարժումին մէջ:

Ուրեմն, նկարչութեան ու զոյներուն
տալով իւրայատուկ ձեւ և պատասառ
զնկով՝ քեզանկարչութեան թիկադրած
շարժումներուն մէջ՝ Երուանդ Քոչար
քանդակեց նկարչական գործը:

Արեւելականութիւն, զեղումներ ու
ծեղծեղումներ, պունադեղութիւն և ա-
ժականներու քերականութիւն գոյութիւն
յունին Քոչարի հոգեբանութեան մէջ, ա-
նոր նախնիները Վերածնունդի նկարիչ-
ներն են, առաւել՝ էնկրը, Յովնաթանեա-
նը և գերբնականները: Առաւել՝ մե-
տաղը, քարը և զոյները: Ահա՛ խառ-
նուրդը: Երանուրդ մը, որ ժառանգուած
չէ, բայց ունի օրգանական ներշնչա-
կութիւն, և այդ ներշնչականութիւնն է
միմիայն, որ Քոչարի արուեստը կը կա-
պէ հայկական հոգեբանութեան, զարեթէ
ի վեր ճեղքուած հայկական արժանոն-
բուն:

Մեր քաղաքակրթութեան մէջ՝ դե-
ղարուեստի վերջին խօսքը եւրոպականն
էր, և Քոչար կրցած է առաջնակարգ մը-
նալ այդ շրջապատին մէջ, ապացուցանե-
լով, որ հայը, քաղաքակրթական արու-
ժով, եւրոպական մտաւորական մակար-
դակը ունի: Հետեւաբար, այստեղէն մեկ-
նելով, Քոչարը պէտք է նկատուի Գալմո-
փոլիք հոգեբանութեան տէր և ամէնէն
մտաւորական հայ նկարիչը:

Գրականութեան մէջ, ոճի իմաստով,
Գէորգ Արշակեանն էր առաջինը, որ գրու-
կանութիւն մշակել փորձեց համաշխարհ-
հային արժեչափերով՝ Մու Պելլոյի և ա-
նոր խումբին հետեւողութեամբ: Երաժշտ-
տութեան մէջ՝ Տիգրան Մանուրեանն
էր, և նոյն ատեն, Ամերիկայի մէջ՝ Ա-
լան Յովհաննէսը, որոնք այսօրուան հա-
մաշխարհային ոճը կրցան հայկականա-
ցրնել՝ իբրև հայ Ուէլպէր և Սեակհուու-
զէն: Իսկ նկարչութեան մէջ, նոյն համե-

մատուցեամբ մտաւորականը Երուանդ Քոչարն էր՝ յիսուն տարիներ առաջ:

Հայ նկարչութեան մէջ ամէնէն աւելի անհատականութիւն ցուցաբերած արւեստագէտը: Ըլլալով արեւելահայ եւ ունենալով իւրայատուկ մօտեցում եւ ընկալում՝ հանդէպ համալիարհային նըկարչական աւօրեային, ան հրեւոյթ մըն է: Զերբազատեալով արեւելեան ձեւապաշարէն ու գունազեղութիւնէն եւ Արեւելի մէջ ծնած ըլլալով, ապրելով ու աշխատելով, ան ստեղծած է այնպիսի գործեր, ինչպիսիք են «Պատերազմի ռաբերգութիւն»ն ու կրափիք գործերը, որոնք երեւոյթ են, մակարդակ: Բացի տաղանդէն, հոս կայ դեղարուեստական իւրայատուկ մտածելակերպ, մտաւորական հասունութիւն, գիտելիքներու հարուստ ներաշխարհ, իւրայատուկ աշխարհահայեցողք ու գէպերու ներանձնական մօտեցման մտածելակերպ:

Իր գործերը կարգացուող, խորունկ վերլուծուած ու բացատրելի գործեր են, աւելի քան զդասականութեամբ յազեցած քանդակներ: «Սասունցի Դաւիթ»ն անգամ, որքան ալ ուժականութիւն ունենայ, առիթ կ'ընծայէ մտորումներու, մըտածելու՝ իւրաքանչիւր ձեռին ու դարձըւածքին մէջ իմաստ սրոնելու: Այնտեղ կռիւ կը տեսնես, վրիժառու շարժումներ, յանձնատու աչքեր, մտասեւեռում, ձիուն շարժումն անգամ խելացի քանդակուած է: Զին հասարակ ձի չէ, ընտրեալն է, աշխարհի միակ ձին, որուն ձեւերը ըստեղծուած են մասնաւոր առաքելութեան համար՝ ամորձիքները ապացոյց: Սուրբ ծանր է, ճիշդ այնպէս՝ ինչպէս պէ՛տք է որ ըլլար Սասունցիին համար, աւելի ծանր, քան պարզ կռիւի սուրբ: Վերջին հաշուով՝ ապիկա կռիւի ելած ձին չէ եւ այդ նպատակով չէ քանդակուած բնաւ: Այլ ելած է պատերազմի՝ կենաց եւ մահու շփերջացած ճակատամարտին: Կրնաս ժամերով մտորումներ ունենալ արձանին դիմաց. հո՛ս է Քոչարի մտաւորական արուեստագէտի ուժը:

Առանձին յառկանիչներէն մէկն ալ հետեւեալն է: Զես կրնար որոշակի շըրջանակի մէջ բնորոշել Քոչարը: Աւելի՛ն.

նոյնքան մեծ քանդակագործ է, որքան նկարիչ: Միայն «Սասունցի Դաւիթ»ը բաւական է՝ զինք դասելու համար Մարինո Մարինիի, Չարկինի կողքին, առանց մակարդակին: Իսկ նկարչութեան մէջ, իր տարածական նկարչութիւնը, իբրեւ զպրոց, բաւական է՝ զինք դասելու համար մեր դարու միւս զիւտարար նկարիչներու կողքին՝ ինչպէս Փիքասոն, Լեժէն, Պրաքը եւ Մաթիսը:

Իբրեւ բազդատական եզր՝ հոգեբանութեամբ ու թափով Քոչար աւելի մօտ է Զարկինի ուժականութեան, իսկ նկարչութեան մէջ՝ Փիքասոյի ալլազանութեան ու ջրգո՞տիլիթ ուժականութեան:



Երուանդ Քոչար (Քոչապիերեան) ծընած է 15 Յունիս 1899ին, Թիֆլիսի մէջ, Վրաստան: Առանձն է Մոսկուայի գեղարուեստական վարժարանի մէջ: 1917ի յեղափոխութենէն ետք, Անդրկովկասէ մէջ կը վարէ պետական կարգ մը պաշտօններ: Կը դառնանդէ Թիֆլիսի գեղարուեստական ակադեմիային մէջ: 1922ին կը մեկնի Թուրքիա եւ հոնկէ՝ Եւրոպայի զանազան շրջանները եւ, ի վերջոյ, Փարիզ, ուր կ'ապրի մինչեւ իր Հաստատման մեկնումը, 1936:

Եւրոպայի զանազան մայրաքաղաքներու մէջ, անհատական բազմաթիւ ցուցահանդէսներ կու տայ եւ կը մասնակցի իմբային ցուցահանդէսներու, մեր դարու մեծադոյն նկարիչ-քանդակագործներու կողքին:

Երկար տարիներ կ'ապրի Փարիզի Տըլա Պոմ թաղամասին մէջ, ուր կ'ապրէին Պրաքը, Լեժէն, Լիփիցը, Մեփրիին, Մեթրինիէրը, Լորանշընը եւ ուրիշներ: Կը ստեղծէ իրեն յատուկ շարժում մը՝ «նկարչութիւն տարածութեան մէջ», որուն մասին բազմաթիւ ելոյթներ կ'ունենայ ու կը մեկնարանէ իր գործերը զանազան բեմերէ եւ արուեստի պարտիաթերթերու մէջ, ինչպէս՝ «Լ'Ար Վիվան», «Լա Տրենսամ», «Լը Քայէ տ'Ար», «Սանքըր տէ Թամոսան Դուվէլ տէ Գ'Ար Քոնքամիդիէն», եւ այլն:

Քոչարի գործերը յաճախ կողք կողքի կը ցուցադրուէին (նոյնիսկ իր մեկնումէն ետք) Մաթիսի, Քանտինսկիի, Շակալի, Փեքասոյի, Պրաքի, Լեժէի, Լիփշիցի գործերուն հետ:

Իր կարեւոր գործերէն մէկը ներկայիս դրուած է Փարիզի «Կուլերի ա՛լլը Մոսերն»ի յատուկ սենեակի մը մէջ, Սալվատոր Տալիի եւ Շիբիբոյի արուեստը ներկայացնող նմոյշներու հետ միասին:

1936ին Քոչար կը մեկնի Պորտուգալիոյ Հայաստան: 37ի բունութեան տարիներուն կը հալածուի, բայց կը յաջողի աքսորէ գերծ մնալ, Նորհիւ իր հայաստանցի կընող կարեւոր հանգամանքին:

Երուանդ Քոչարի անհատական առաջին ցուցահանդէսը կը կազմակերպուի ներգաղթելէն 31 տարի ետք, Երեւանի Նկարիչներու Տան սրահներուն մէջ, իր կարեւոր գործերուն բացահայտութեամբ:

1967էն ետք, կ'արժանանայ մեծարանքի: Կը մեկնի 1972ին, Երեւան:



Երուանդ Քոչարի գործերուն մէջ կրնան նկատուի ներկայ դարու ոգին եւ կ'ուսթը. կեանքին ընթացքը, քայլերգը, անդամահատուած ներաշխարհը, երկզբմի տպաւորութիւնը իւրաքանչիւր երեւոյթի եւ անտարբերութիւնը, որ հազարերորդ անգամ կը տպաւորէ թեզ եւ կեանքը կը դարձնէ հմայիչ:

Փանքեզի եւ զոյներու խաղեր շկան: Քոչար մաս-մաքուր նկարչութիւնն է, որ կայ, առանց զեղումներու, զարդարանքներու, նախապատուութիւնը տալով ըսելիքին, անտ' որ կտոր-կտոր է նկատ (զգրկ-զգրկ դարձած) այս աշխարհին մէջ, ուր մարդոց հոգիները շփոթի մատնուած են իրարու յաջորդող ձախորդ յեղափոխութիւններու պատճառով՝ դիտութեան, արուեստի եւ ընկերային բոլոր ասպարէզներու մէջ: Ան' որ նորութիւն ստեղծել ուզեց, բարդացուց մեր կեանքը եւ, հետեւաբար՝ աշխարհը: Իւրաքանչիւր փելիտոփայութիւն ա՛լ տեւի նեղացուց մեր ապրելակերպին ծիրը, զարո-

ձուց լուսանցքային, եւ շես կրնար բաց աշխարհ նետուիլ հոգիով ու ախորժակով, մարմնով ու արամազրութեամբ՝ ներկայ դարու պայմաններուն մէջ:

Հակառակ աշխարհադրական տարածութիւններուն՝ նեղցան ներաշխարհները, մարդոց հոգիները եւ փոքր-փոքր կըրպիները վերածուեցան ճնշիչ ու քանդիչ ճակատամարտներու եւ պատերազմներու: Հոգիները նեղցան ու հզոտեցան յաճախ եւ անդամահատուած մարմիններով կենդանիներն ու մարդերը՝ Քոչարի ներկայներուն մէջ, նոյն մարդոց կտորուած մարմնի իսկական ձեւերն են կարծես՝ այսօրուան կոտորուած աշխարհին մէջ:

Փախուտը դէպի անտրամաբանականն ու անհեթեթը: Գերբնայալուտութեան ընթացքն էր այս մէկը, եւ Քոչար նոյն համրուն մէջ էր, բայց մարդոց զէմ դիմաց՝ իրրեւ վերագարձող ճամբորդ:

Մարդկային տարբարութեան ձեւեր, որոնք անհասարակչիւր դրութեան մը մէջ դասած են իրենց գոյութեան հատուորակչուած տրամաբանութիւնը: Ահաւասիկ գերբնայալուտութեան վերացական հասկացողութիւնը, որուն մէջ կամաց-կամաց ձեւի ուժականութիւն մշակելով եւ կազմաւորուելով՝ ստեղծուեցան քոչարեան ճեղքարչութիւն տարածութեան մէջ՝ յղացքը: Նկատի ունենալով սակայն, որ այս շարժումը ըլլալով հանդերձ տրամաբանական շարունակութիւն մը գերբնայալուտ երրորդ մասնիփնտսին, խորքով ու մտնցումով կապ չունի այդ շարժումին հետ:

Պորքին խորութիւնը չէ, այլ՝ խորքին տարածականութիւնը, որ յատկանշական է Քոչարի ստեղծագործութեան մէջ:

Երկրորդ հանգամանք մը, որ տեղ մը, գերբնայալուտութիւնը մեր դարու մարդուն մտահոգ արամազրութեան արտայայտութիւնն էր, մարդ էակի հոգեկան անկման հոլովոյթը, ձանձրութիւն գեղարուեստական փելիտոփայութիւնը կամ, այսպէս կոչուած, մարդկային հոգիին այլաբանական տարբարութեան մը: Իսկ Քոչարինը՝ աւելի Էքսթրալորք բնաւորութիւնն է, եւ տեղ մը՝ յաղթողի

ուժականութեամբ յազնեցած տրամադրութիւնը:

Ահաւաստիկ Քոչարի էութիւնը, գոյութեան սաղմը եւ իմաստը: Իսկ սանդձագործութիւնը՝ այդ գոյութեան հարազատ վաստակը, մինչեւ անոր Քորհրդային Հայաստան մեկնումը:

Անկէ ետք, շատ անգամաւոր դործեր ստեղծեց Քոչար («Աստուծոյ Գաւիթ»-ը ստեղծուած էր շատոնց), բայց, կրնանք ըսել, որ բոլորը, չափով մը, ստեղծագործուած չեն, կեղծ են ու շինծու, որովհետեւ անոր հոգիին ու հոգեբանութեան հարազատ ծնունդը չեն կրցած ըլլալ ընտ:

✱

Հաւանաբար մեր ըսելիքները առաջին հայեացքով (եւ վերջին հաշուով) խորթ թուին բարձրագոյն հայերու: Յամենայնդէպս, մեր ինչորք բացէ ի բաց հետեւեալն է:

Երուանց Քոչարի Հայաստան մեկնումը, 1936ին, ճակատադրական սխալ մըն էր, եղբաւ: Թէ՛ իրեն համար անձնապէս, եւ թէ՛ բոլորիս համար՝ իբրեւ հայութիւն: Երեւոյթ մը, որ կարելի է համարել ազգային դժբախտութիւն:

Մեր կարծիքով՝ Քոչար պէտք է մընար Փարիզ եւ զանաւոր մեր դարու մեծագոյն անուններէն մէկը, ա՛յլ աւելի մեծութիւն եւ փառք բերելու համար, եւ հպարտութիւն՝ իր ժողովուրդին: Այդ պարագային, թերեւ աւելի եւս ազգային շիջ ունենար, այնպէս՝ ինչպէս ունեցաւ Փիլատոսն, որ համայնարհային ըլլալով հանդերձ, չկորսնցուց սպանացիի իր ուրին:

Մեկնելով Հայաստան՝ Երուանց Քոչար երբեք չկրցաւ շողկալուել Հայաստանի նկարչական առօրեային, կորսնցուցուց իր թափը եւ չկրցաւ հասնել իր առաքելութեան, որ կրնար մեծ հպարտութիւն առթիւ հայերու աջօր, այնպէս՝ ինչպէս Մարեանն է, Գառաշեն, եւ Վիկտոր Համարձումեանը:

Մտոցուած անուն մը դարձաւ, չկըրնալով խաղալ մեր դարու արուեստի խա-

ղաբարը, որ աստիղ դառնալու եւ փայլելու առիթներ կ'ընծայէ, պայմանաւ որ կարենաս ժամանակին առիթ ունենալ, հանձարն ունենալով մէկտեղ, օգտագործել զայն:

Քոչար կորսնցուց իր մեղք բերած առիթը եւ անժամանակ մեկնեցաւ արուեստներու մայրաքաղաքէն, արուեստի բեմէն, մաշկցնելով իր հանձարը Երեւանի փողոցներուն մէջ, մէկ-երկու հանտարեղ քանդակներ դնելով այնպիսի խուլ մէկ անկիւնը, նետուած մայրաքաղաքի մը մէջ, որ կը կոչուի Երեւան:

Վերադառնալով իրեն...

Քոչար Հայաստանի նկարչներուն այն արհեստաւորներէն չէ, որոնք քանի մը տարին անգամ մը, Հայութեան հոգին յուզող հարց մը կը գտնեն եւ, զայն նկարագրելով՝ գիշեր չեղած հանձարի կը վերածուին: Մարդիկ՝ որոնք մեր սրբութիւնները շահագործելով՝ բարձր պատանդաններու կրցած են հասնել: Նարեկացին, Եղեռնը, Մալաթի, Մամիկոնեանը: Յար եւ նման «Վէրք Հայաստան» Յիւրիս՝ ասոր հայուն զգացումներուն խոսող, Հայկական վէրքերը հալոյթող արհեստաւորներ են, որոնք նմանները այլ ազգերու մէջ բազմաթիւ են եւ չեն դասուեր մեծ արուեստագէտներու շարքին, այնպէս՝ ինչպէս վարպետ Եղեռնի մը չէ՛ կրնար դասուել տաղանդաւոր արուեստագէտներու շարքին:

Քոչար երբ կը նկարէ Եղեռնը, առիկա Հայկական Եղեռնը ըլլալով հանդերձ, կը վերածուի իսկական եղեռնի, այնպէս՝ ինչպէս Կուէրներէն Մպանիոյ պատերազմն է, բայց նաեւ՝ բոլորին արհաւիրքը:

Երբ կը քանդակէ հայ մայրիկ մը, ճիշդ է, որ այսինչ հայուն մեծ մայրիկն է ան, բայց Քոչարի գուրին ասկ կը վե՛րածուի տիեզերական մեծ մայրիկի եւ կը մարմնաւորէ զայն: Ընդէ այնպէս՝ ինչպէս Հենրի Մուրի «Մայր ու որդիներուն» մէջ մարդիկ կը տեսնեն տիեզերական եւ ոչ թէ ներանձնական եւ մակերեսային զգացումներ:

Քոչարի հոգիին մէջ՝ հազարամեակներով թրծուած արուեստագէտ մը կայ:

ծրոյք կայ ու պատերազմ՝ հայկական հողին ու ճակատազիրը:

Ճակատամարտ ու մտածողութիւն, հայու նկարագիրին կարեւորագոյն յատկանշիչները, խառնուած՝ նարեկացիական կարծր սրամազրուութիւններուն:

Խոսքուած գրացումներու կուտակուած վայրկեաններ, stop cadres: Վերցուցէք «Պատերազմի պարբերականը»: Քարացոծ ձիերը, որոնք քանդակուած են կարծես իրենց ամէնէն ուժական շարժումներուն մէջ: Արտայայտութիւններով: Գոյներու խոհունութեամբ: Այդ ֆոնին վրայ, ձիերու ուժին շողկապուած, մնացածը կոտորածն է՝ յազթանակ իրրեւ: Վերջին հաշուով՝ պատերազմի արհաւիրքներէն է, որ մէկն ու մէկը զուր կու գայ յաղթական, յոխորտոնքով: Իսոյց է՝նչ որբալի ու ախուր յաղթանակ, երբ մահն ու կործանումը կը դառնան այդ յաղթանակին բազադրիչ մասերը, իմաստը: Որքան ալ տխուր ըլլայ այս նիւթը, դարձեալ աւելի ազնիւ է և մարդկային, քան Միջին դարերու հրաշալիօրէն նկարուած Քրիստոսի ծընունդները:

Հոս պատերազմն է, որ նկարագրուած է փիլիսոփայական իմաստով՝ իրրեւ կործանում և յաղթանակ, հաւասարէ հաւասար, պատերազմին տարբազարումը՝ իրրեւ մահը և ծնունդը նոր կեանքի մը: Եւ եթէ ձին կրնայ այդքան ահեղ կերպարանք ընդունիլ՝ ե՛ւ կործանման, ե՛ւ յաղթանակի ժամանակ, ապա՝ ծնող մայրը դարձեալ ունի նոյնքան հպարտ երեւոյթ՝ իր պոռչուութիւն և տառապանքներուն մէջ, ծնունդի պահուն, որմէ կեանք մը կը սկսի յանկարծ:

Ահա մեր ըսելիքներուն կորիզը:
Քոչարեան մտածելակերպը:

Վերագառնանք մեր բուն խնդրին:
Լալկան պեղումներով չէ, որ պիտի գնահատենք Քոչարի հանճարեղ արուեստը:

տը: Թէ՛ ինչպէ՛ս վերադարձաւ իր Թըլուառ ժողովուրդին, նպատակը հայրենիքի շինութեան, Հայաստանի արուեստի բարգաւաճման և կատարեց ազնիւ հայու իր հողին պարտքը՝ հանդէպ իր հայրենիքին (մեծ ազգերու գաւակները իրենց հայրենիքին առնելիք ու տալիք չեն ունենար: Հայրենիքն ու գաւակը զիրար կը լրացնեն հաւասարէ հաւասար, իրարու վրայ կը դուրդուրան հաւասարէ հաւասար): Ամէն մարդ Հայաստան զրկել՝ չէնքեր չիներու, դործարաններ կառուցանելու, ճամբաներ բանալու, ազգայնականութեան մեւ մը չէ, որովհետեւ հայրենիքները ճամբաներով և չէնքերով չեն շինուիր: Տիգրան Մեծը բանակներ բերաւ դուրսէն, Հայաստանի հողին վրայ կառուցել տուաւ պալատներ, որոնք ժամանակին հետ փնացան-գացին, բայց Հայաստանը մնաց իր տեղը:

Եւ մարդիկ Հայաստան տունի մեր Թըլուառ երկիրը վերաշինելու համար՝ այս պաղափարն անգամ զարուարանք կը պատճառէ մեզի: Որովհետեւ Հայաստանը՝ իր հողով, քարով, մարդոցմով ու սգիով ո՛չ մէկ օր, իր պատմութեան դատանայոյն ժամանակներու ընթացքին Թըլուառական չէ եղած: Թըլուառութիւնը հողեկան ախար է: Փոքրովի ժողովուրդներն են, որ Թըլուառ կ'ըլլան ու Թըլուառ կը մնան նոյնիսկ հարստանալէ ետք: Օրինակ, Թուրքերը, որոնք երբեք պիտի չկարենան դուրս դալ իրենց Թըլուառական հողեկանակէն, որովհետեւ մշակույթ չունին և չիմծու հաւաքածոյ մըն են այլազան ժողովուրդներու: Կամ Ամերիկան, որ երբեք ազգութիւն դառնալու տուեալները պիտի չունենայ՝ դրամի և կերուխումի համար որբալի ժողովուրդ մը:

Իր հողին վրայ՝ հայը միշտ ունեցած է պէտք եղածէն շատ աւելի արուեստագէտներ, դիտնականներ և մարդկային ամէն տեսակի արժէքներու հոյլ մը: Եւ դուրսէն՝ Սորպոնէն, Քեմպրիճէն, Գերմանիայէն ու Մոսկուայէն Հայաստան ներխուժած դիտնականներու ու արուեստագէտներուն վարկը, Հայաստանի խորհրդայնացումէն ետք, աւելի վնասակար, քան օգտակար երեւոյթ մը եղաւ, որով-

Հեռու տուրքն էր մեր ժողովուրդին մէջ եղած թշուառական միակ յատկանիւնն, որ մեր քաղաքական կուսակցական մասնակիւնը կը բխի, դեռ մինչեւ այսօր: Ամէն ազգ կ'արտածէ իր դիտանկաններն ու արուեստագէտները, իսկ մենք, որ, այսպէս կոչուած, տաղանդաւոր ժողովուրդ ենք, հազիւ հոշակի տէր դարձած մեր արուեստագէտները, աշխարհի վազքէն կտրելով՝ ինչո՞ւ պիտի զրկէինք Հայաստան:

Ձէի՞ն բաւեր միթէ հոն եղածները՝ հայրենիք կերտելու համար: Եւ դեռ չենք խօսիք այն արուեստագէտներու ու դիտանկաններու մասին, որոնք ձգեցին հայրենի հողը, մեկնեցան Մոսկուա, Քիեւ կամ սատանան դիտէ ուր, բայց երբ Փարիզի մէջ, Փիլաքսոյի հետ ցուցադրուող ֆոնարը մեկնեցաւ Պորտրալի աշխարհ՝ ծափահարեցինք եւ կը շարունակենք ծափահարել մինչեւ այսօր: Ատիկա ազգային ուղիի արտայայտութիւնն է, առիկա յոռի քաղաքականութեան մը հեռանկարն է, որ վնաս հասցուց մեր ժողովուրդին ու մշակութիւն:

Հիմա այսպէս: Բոլոր այն արուեստագէտները, որոնք կրցած են դուրս գալ 'այստաստեանէն եւ ստեղծելու վրայ են այն 'ստրը, որ հայը պիտի դարձնէ համաշխարհային՝ շատ տարիներ վերջ (Ատուած դիտէ երբ), անոնք ամէնէն ազգանուէր, ամէնէն յարգելի, գուրգուրանքի արժանի մարդիկն են եւ ո'չ թէ դաւանաններ, քանի որ լքած են Պորտրալի Հայաստանը: Անոնք՝ որոնք կը համարձակին դաւանան կոչել, օրինակի համար, Արթօ Չաքմաքճեան մը կամ Օհան Տուրեան մը, թող համարձակին դաւանան անուանել նաեւ Արամ Պաշտարեանը, Ալիխանեանը, Թուրոյֆ Պաշտարեանը, Արնօ Պապալանեանը, Սերգէյ Մերկիւեանը, Հասարթեանը, Օրբելին, եւ դեռ շատեր, որոնք լքեցին իրենց հայրենիքը եւ քնակեցան Մոսկուա կամ խորհրդային այլ քաղաքի մը մէջ: Հայրենիքէն դուրս ելելէ կտք՝ ի՞նչն է տարբերութիւնը Մոսկուա քնակելուն եւ Լոնտոն քնակելուն միջեւ: Սկզբունքով՝ եթէ Հայաստանէն արտագաղթելը դաւանանութիւն է, ապա՝

ո՛ւր ալ որ մեկնիտ, մէկ է՝ դաւանանութիւնը դաւանանութիւն է:

Սկզբունքով՝ մենք համաձայն ենք, որ շատ աւելի մեծ թիւով արուեստագէտներ դուրս գան Հայաստանէն եւ միջազգային գետնի վրայ, ամէն տեսակի երկիրներու մէջ (Թուստան, Ամերիկա, Թրանսա...), դրսեւորեն իրենց տաղանդը: Արդիական այս ժամանակներուն, այս ձեւով միայն տանեակ տարիներ կտք կը հասնինք ա'յն մակարդակին, ուր կրնանք աշխարհին եւ, մասնաւոր՝ մեր մատղաւ սերունդներուն յայտարարել, որ մենք առաջնակարգ մշակութի տէր ժողովուրդներու կողքին մնացած ենք միշտ, անոնց հետ հաւասարէ հաւասար: Անոնք ա'յն բառերն են, որոնք ամէն օր, ամէն հայ տան մէջ կը կրկնուին մեր երէց սերունդներուն կողմէ՝ դժուար համ ապով յամախ, որովհետեւ մեր նոր սերունդին նոյնիսկ չեն կրնար հաւատացնել այս (ո՛ւր մնաց օտարներուն) յայտարարութիւնը, քանի որ փաստերը քիչ են այնչաւ եւ կամ ժամանակավրէպ: Միջազգային հայ ղէմքեր չկան մեր հաւատամքը հաստատ հիմերու վրայ դնելու համար: Փաստեր չկան, եղածը՝ փոքր ազգերու յատուկ մեծամուկան գառանցանք է, ազգային-ազգայնամուկան հիւանդութիւն: ո'չ աւելի, ո'չ պակաս: Երբ Գ. էմին մը անգլերէնի կը թարգմանենք (այն ալ ի՞նչ ահաւոր անգլերէնի), Երեւանի փողոցներուն մէջ մարդիկ կը կարծեն, թէ Լոնտոնի մէջ ժողովուրդը էմին արտասանելով է, որ կը պտրտի այսուհետեւ: Լաւ է չթարգմանուին անոնք, քանի որ չէնք շնորհք ու խելքը գլխուն թարգմանիչներ չկան: Լաւ է չճանչցուիլը, քան խեղճ ու կրակի ձեռով ճանչցուիլը կեանքի մէջ:

Դրամապաշտ այս քաղաքակրթութեան մէջ, ո'րքան նիւթապէս կ'արժեւորուին գործերը, ա'յնքան տաղանդաւոր եւ: Հետազգային, թերեւ շատ արժէքներ լինին եւ չքանան: Բայց հակառակ դեմաւար թէ պատահի՝ դժբախտաբար: Կորստած արժէքները մեծ համեմատութեամբ կորսուած կը մնան: Ո՛վ կրնայ աշխարհին հասկնել, որ Անանիա Շիրակացին երկրազունտին կ'ուր ըլլաւու իրո-

դուքիւնք ապացուցեք է դարեր առաջ : Փաստերը շատ են, և սակցնելն է դժուար :

Այս ենթաթեզատին մէջ՝ Քոչարի մայր հայրենիք մեկնումը ազգային դժբախտութիւն մըն էր, նկատի ունենալով կիրճին միտ կողմը, որ մեր հաշուին հազար անգամ աւելի կու գար, երբ Քոչար դառնար այն վարդը, ինչպիսին եղաւ Փեքասոն, Սպանիոյ համար : Սպանիոյի ամենամեծ աղամանդը, որ նուիրւած է միջազգային մշակոյթին եւ մարդկութեան :

Մեր հարցը ճիշդ հոս է : Տաքը տաքին : Որ Քոչար իր իսկական մեծութեան չհասաւ եւ առիթն իսկ չունեցաւ հասնելու՝ Հայաստանի մէջ (անհատական մէկ ցուցանանքէն՝ 30 տարուան ընթացքին) : Իսկ անկէ առաջ՝ առիթն ունեցաւ ու չիրացաւ օգտագործել զայն, որովհետեւ մեկնեցաւ Խորհրդային Հայաստան ու կորսուեցաւ աճողի չէղբացուած արւեստի մթնոլորտին մէջ : Ձէզքացուած կ'ըսենք ա՛յն իմաստով, որ Հայաստանի արուեստի առօրեան տակաւն նախնական դիտելի վրայ է մինչեւ օրս, եւ կապ չունի միջազգային արուեստի անցուղարձեբուն հետ :

Հիմա, հարցը դնենք տարբեր ձևով : Ի՞նչը պատճառ դարձաւ Քոչարի վերադարձին : Կամ ո՞վ պիտի կարենայ ճշգրտորէր ու ճակատագրական որոշումներ առնել մեր արուեստադէտներուն մասին եւ թելադրանքներ ընել՝ ժամանակին ու տեղին : Խորհուրդներ տալ, որ հետագային ազգային դժբախտութեան առիթներ շտեղծուին եւ մեր փոքր ազգին զիջ թիով տաղանդները արժեւորուին առաւելադոյն ձևով եւ համաշխարհային պատասխի վրայ : Թող բազմանան Արշիլ Կորոններն ու Գառգունները, Մայքըլ Աւելիներն ու Սարոյեանները ամէն երկրի մէջ, որոյնքի ապացուցենք, որ հայը մեծ մշակոյթի մը ժառանգորդն է, եւ իբրեւ այնպիսին՝ կրթ առիթը ներկայանայ՝ կրնայ դառնալ առաջին կարգի արուեստադէտ : Վերջին հաշուով՝ պէտք է այլեւս մենք մեզ դտնենք, մեր արմատները դտնենք եւ զգանք, որ զբաւկան կամ

թրքական ցեղախումբերուն պէս մշակութի զուրկ ազգ չենք, ժողովուրդ չենք՝ մասսայի իմաստով : Քարոզելը չի բաւեր : Ապացոյցներ պէտք են, հայը հայ պահելու հպարտութեան համար : Երբ ունիս մեծութիւններ, համոզուած կ'ըլլաս եւ հպարտ նոյն ատեն, որ մշակոյթի աէր ազգի մը զաւակն ես : Բայց երբ մարդ չունիս այսօրուան բեմին վրայ, քարոզելը մեծամոլական բարդոյթ է ք համ չունի : Վերջին հաշուով՝ ամէն փոքր ազգը զաւակները նոյն ոգիով կը դաստիարակէ : Կ'ըսէ, որ իր ազգը փայլուն անցեալ ունեցած է, թագաւոր ունեցած է, եւ այլն : Քոնկոցին անգամ, զանգիրպարցիք անգամ այսպէս կը վարուին :

Փրանսայի մէջ, Վալտեմար ժորժի մը տպած, ժամանակավրէջ եւ ուշացած մէկ Բաքալը, օրին, դարձուցինք բեմերէ յայտարարուելիք երեւոյթ : Ի՞նչ մեղք է մեր ժողովուրդին : Նկատի ունեցէք, որ Քոչարի նման հսկայի մը մասին, մեկնելէն 30 տարի ետք, տպեր են քաթալոկ մը : Իսկ ինչ բերք էին մեր մշակութային կազմակերպութիւնները՝ մինչ այդ : Իսկ ի՞նչ ըրեր էր Հայաստանը ինքը՝ մինչ այդ :

Գաւզուի մասին Վալտեմար ժորժի պէս հարեւրաւոր մարդիկ գրած են, եւ ոչ թէ քաթալոկային դորձեր, այլ՝ հաստափոր դիրքեր : Փոլ Կիրակոսեանը, որ պզտիկ ու աննշան երկրի մը քաղաքացին եւ արուեստի մակարդակի տեսակէտէն եւ չէ հասած հո՛ն, ուր մեր մեծերն են, ու մասին գրուած ունի բազմաթիւ դորձեր, ունի անուն մը «ԼԱՐՈՒԱՍ»ին մէջ ունի դորձեր բազմաթիւ թանգարաններու մէջ եւ ճանչցուած է աւելի՛, քան Մայքըլ թրոն : Կը բաւէ մենք մեզ խաբենք, որովհետեւ նոր սերունդը այլեւս բաց աչքերով եւ բանական ձևով կը մօտենայ հարցերուն : Կ'ուզէ փաստերով նայիլ աշխարհին, եւ ոչ թէ հիւներուն պէս՝ պրացուներով ու ինքնախաբէութեամբ :

Ժամանակն է, որ եղած արուեստադէտները կերտելով գրադինք (Հայաստանը կերտուած է այլեւս), զնահատել յիտանք մեր ունեցածը, մեծցենք զանոնք եւ զանոնք ընդունել տանք աշխար-

Հին, որպէսզի տեսնեն, զգան, շօշափեն, եւ որպէսզի մենք եւս համոզուինք, որ վստակութիւն մեծ է Հայ ժողովուրդը, կրնայ միջազգային նահատամարտ տանիլ ու յաղթական գուբա գալ՝ մշակոյթի գծով:

Այս օրերուն ունինք շարք մը Քոչարներ՝ ցիրուցան աշխարհի չորս կողմերը եւ Հայաստանի մէջ: Բոլորին յարգը գրեանք անխորի, գնահատենք ու զրազինք անոնցմով:

Ունինք Գառզուն ու Ժանսէմը, որոնք մեր Ֆանօթացման կարեքը չունին: Մեզմէ, մեր մակարդակէն աւելի բարձր հորիզոններու վրայ են: Ունինք Արտօ Չաք՝ մաքրահոն, որ արդէն տասը տարիէ ի վեր Գանատու կ'ապրի, զոր տասը տարի հարածեցինք, սրովհետեւ զոգար եկաւ Հայաստանէն: Հայաստանի մէջ ամէն օր կը պրուէր իր մասին, բայց վերջին տասը տարուան ընթացքին՝ ա՛յ մէկ խօսք: Ի՞նչ եղաւ, ստապանը պակտեցաւ յանկարծ, թէ մեր քաղաքական նեղ հաշիւները զարծեալ սկսան վնաս բերել Հայ մշակոյթին:

Յրանսացի նկարիչ մը եթէ դուրս գայ Ֆրանսայէն, Ֆրանսացիք մի՞թէ կը հաւանեն ու կը քարկոծեն զինք: Հեմիկոտէյը երկար տարիներ ապրեցաւ Փարիզի մէջ, կռուեցաւ Սպանիոյ համար՝ Էրկար տարիներ հայտնեցին զինք: Գառզունն զարմաւ: Ինչո՞ւ ասկայն մեր պարագային այս փոքրոգութիւնը, այս ո՛չ մտաւորական մակարդակը: Այս վնասակար հոգեբանութիւնը:

Քաղաքական այս սկիզբներու նեղ անկիւններէն դիտուած՝ երեւոյթները ներկի շին մեր սերունդին: Առիթներ կ'ընծայեն ուժաման ու ձուլումին՝ Հայաստանի թէ Սփիւռքի մէջ: Այս դիտանկիւնէն ձուլուած՝ մեր դրուստեան իրաւունքը, մշակութային իմաստով, չենք վստակած տակաւին, եւ Հայ կոչուելը մեծ իմաստ չունի եւ հպարտութեան առիթներ չ'ընծայեր մեր որդիներուն:

Մեր ազգային հարցերը մօտեցման քանի մը անկիւններ ունին՝ քաղաքական, digitised by

ընկերային, լեզուական եւ, ընդհանրապէս, մշակութային:

Մեր դրած հարցը մշակութային պայքարի ազգային պարտականութիւնն է: Հայկական Հարցին զերազոյն լուծման մէջ՝ պայքարի կողմնակից կարեւորագոյնը: Մշակութային կռիւր: Արժանիքի խնդիրն է՝ ապացուցելու համար աշխարհին եւ մեր սերունդներուն, որ հայը, բացի տէրը ըլլալէ մեր բռնարարուած հողերուն՝ արժանի՛ տէրն է անոնց:

Մեր մշակոյթին քարոզչութիւնը կրնան կատարել մարդիկ, որոնք շարժապատճ են ուրիշ ժողովուրդներու մը: Մշակութային հոգի, որուն շատեր համաձայն չեն, բայց եւ այնպէս ժամանակները փոխուած են: Օրինակ, որքան ալ Սարգսեանը տմերկացի հողմուր, անոր մէկ մասը տեղ մը կը մնայ նաեւ Հայ գրականութեան՝ հողիով ու ընտելութիւններու իր կերտումով, մէկ խօսքով՝ իր գրականութեամբ: Ես յիշեմ է պարագան Արշիլ Կորչիի, Ժանսէմի, Գառզուի, Ազնուուրի, Ալան Յովհաննէսի...:

Ահաւորեկ, այս ենթաթիւքստէն մեկնելով է, որ մենք Քոչարի ներգաղթումը համարեցինք դժբախտութիւն եւ անոր կրկնութիւնն ու մեր հարցին հակառակումը՝ ազգային աւելի մեծ ապերախտութիւն:

Մտածումի այս զարտուղի ընթացքը կը բխի ազգային գիտակցութենէ մը, որ մեր դարուն աւելի կը յարմարի: Մշակութային կռիւ մը, որ այժմէական է՝ իր բիւրեղացնէ մեր հոգիները եւ չի՛ մըրդեր, որ դառնանք իսկական կռուազաններ, ինչպէս ազգային հարց հետապնդող շատ մը ժողովուրդներու պարագան է այս օրերուն:

Յէտք է, որ Ֆոնը մնայ Հայկական մշակոյթը, թէկուզ դերակատարութիւնը ուրայ Ֆրանսական կամ ճափոնական, առաւել եւս՝ Ֆրանսերէն կամ ճափոներէն: Վերջին հաշուով՝ ատիկա այլեւս նշանակութիւն չունի, քանի որ ԵՎԵԴ Հայաստանի միայն հայու սրտին կրնայ խօսիլ այս օրերուն: ԵՎԵԴ Հայաստանին այլեւս պէտք չէ մեր ժողովուրդին, որովհետեւ բոլորս ալ թրծուած ենք ազ-

գային հողերանուժեամբ եւ տարազիր եւ խեղճ պանդուխտներ շինք համարեր մենք մեզ: Կոբէի ելած ենք ամէն տեսակէտով, ամէն լեզուներով՝ հայկական բռնադրաւեալ հողերը վերադրաւելու եւ մեր տուրը վերադառնալու համար:



Ներքին բնազդը, որ դարերէն կու գայ եւ ազգային բնաւորութիւն կ'ենթադրէ, ժառանգուած երեւոյթ է: Կ'ուզենք ըսել, որ ո՛չ ոք կրնայ ուրանալ գայն, որքան ալ խելացի ու ճարպիկ ձեւով թաքցընել զորձէ գայն (ամերիկանանալ, ֆրանսացի դառնալ), քանի որ, արուեստի բնազաւատին մէջ, արուեստագէտին ամբողջ ընկիւնը ինքն իր ներաշխարհը յայտնագործելու ընթացք մըն է, ինքն իր հոգին շօշափելու վաղք մըն է, ստեղծագործական վաղք մը, որ զինք կը տանի հոգեկան գերագոյն հաճոյքին՝ երկունքին, որմէ կը ծնի զաւակը: Եթէ ազգային ջիւղը ժառանգուած է՝ կը հրիտանցուի նաեւ զաւակին, այս պարագային՝ արուեստի գործերուն:

Ասիկա բնութեան գերագոյն օրէնքն է, բնազգայինը, որ կենդանական աշխարհին կարեւորագոյն յատկանիշն է: Ու պէտք չէ մոռնալ, որ մարդը ամէնէն աւելի կատարելագործուած կենդանին է այս երկրագունտին: Այնպէս որ, ազգային ջիւղը եթէ ժառանգուած է՝ չի կորսուիր եւ չ'այլափոխուիր: Եթէ ժառանգուած չէ՝ կարեւոր չէ այլեւս, որ ենթա'ան հայերէն կը գրէ, հայերէն կը խօսի թէ հայօրէն կը ստեղծագործէ: Ամէն պարագայի՝ եղածը չի կրնար տաղանդաւոր ըլլալ, որովհետեւ հոգիին խորքէն չի գար եւ, հետեւաբար, կեղծ է, շինծու եւ չի դիմանար ժամանակի դաժան գնահատանքին:

Հայը չի կորսուիր եւ կը վերածնի ուր մը, տարիներու հետացումէն ետք ու կը վերագառնայ իր ակունքին՝ իր արձաններուն առողջ վազըով:

Ժամանակն է, որ ցրուինք աշխարհով մէկ եւ յայտնագործութիւնք մեր հոգի'ներէն՝ ժամանակ մը վերջ, սեղմուած իրարու՝ արժանի ըլլանք ա'յն հողին, որ դարերով պատկանած է մեզի եւ ո՛չ ոք կրնայ յաւիտեանս սեփականացնել զայն: Ո՛չ ոք:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԱԳՈՒԼԵԱՆ

Ս. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Ե Ա Ն

ԱՆԱԻԱՐՏ ՀՈԳԻԻ ՄԸ
«ՆԵՐՔԻՆ ԴԱՇՏԱՆԿԱՐԸ»

I

«Այս էջերը վերջանալու վրայ եմ ու մեր հոգին դեռ մնաց մութին մէջ: Քանի մը տառապանքներ կան, որոնց մասին պէտք է խօսիլ եւ քանի մը հարցումներ, որոնց պէտք է պատասխանել: Այս տարուամ ընթացքին հիմնգրորդն է օրագիր բռնելու այս փորձը: Անշուշտ այս ալ ժայտակար պէտք է համարել՝ որովհետեւ ի՛՞նչ որ կ'ուզենք ըսել ըստած չէ եւ կարելի չէ ըսել, իսկ ի՛՞նչ որ ըսած եմք՝ կարելի էր նաեւ չըսել: Ինչո՞ւ համար երգանկութիւն ըսելու առանկարողութիւնը: Պատճառը պարզ է: Մեծք չենք ուզեր, որ աւելի կամ նուազ վտանգաւոր բուռքեր մնան աստիճաններ: Գիտարմարու խնդրուէն չենք վախճար, բայց օտարմնելու գրութիւնն ալ կը մերժենք: Ու անտարակոյս լու է այսպէս»:

Վազգէն Շուշանեանի «Անկարելի օրագիր»ին հինգերորդ մասէն («Անկարելի էջեր մերկ հոգիի մը մասին...») արտագրուած վերի ներածական հատուածը՝ իր հարցադրումներով եւ անկեղծութեամբ, զբողի մը ներաշխարհային ախտորոշումներուն պայծառ հայելին ըլլալէ առաջ եւ վերջ, է՛ խօսքին ձեւաւորման առկնայը բացայայտող վկայութիւն մը՝ ըսելու արժանիք եւ անըսելիին մասին:

Խօսքին երկունքի գործողութեան վրայ բացուած թէկուզ այս նեղ լուսամուտը, նոյնիսկ իր անկարելի էջերով, կը սեւեռուի անմերձենալիին՝ անկարելի գիրքին, որ օրերուն գաղտնիքները արտաքննացնելու իր յոնդգնութեան զուգահեռ՝ նաեւ կը ձգտի ըլլալ ստեղծագործ լեզուին տրամը աներեւոյթ տարածութիւններէն շօշափելի գիրին բերող արկածախնդրութիւն, եթէ նոյնիսկ քաւելի կամ նուազ վտանգաւոր բուռքեր մնան աստիճաններ: Այլ խօսքով՝ անհիշատակ անհարամն է աներեւոյթ յոյզերն ու մասնումները իր մարմինին, այսինքն՝ գիրին բերել աներեւոյթ յոյզերն ու մասնումները իր մարմինն, որ երբեք պիտի չհասնի իր վերջնական տարազին, այնքան առեն որ ձեւաւորուած խօսքը, այլ խօսքով՝ գրութիւնը, կը յաղկի լայն բանալ հորիզոնները նորանոր յոյզերու եւ մասնումներու, որոնք, իրենց կարգին, պիտի

չարունակեն գարպասել գիրենք տեսանելի տարադներու այլափոխող կարելի-
անկարելի մարմինները :

«Ինչ որ կ'ուզենք ըսել ըսուած չէ եւ կարելի չէ ըսել, իսկ ի՞նչ որ ը-
սած ենք՝ կարելի էր նաեւ չըսել : Ինչպէ՞ս կամուր երջանկութիւն ըսելու այս
անկարողութիւնը» (ընդգծումները մեր կողմէ — Ս. Գ.) : Հարցում մը՝ սպի-
տակ թուղթին վրայ ձեւաւորուած, որ միաժամանակ պատասխանն ու զսպա-
նակն է բոլոր գրութիւններուն, դրականութեան պատմութեան առաջին փոր-
ձերէն մինչեւ մեր օրերը : Հարցում-պատասխան եւ պատասխան-հարցում այս
յարաճուն եղափոխութեան դիմաց՝ գրողին կարելիութեանց սահմանափա-
կութեան զգացումը գոյութիւն ունի գիրի վերածուած իւրաքանչիւր խօսքի
մէջ, բայց անիկա մասնաւոր առկայ է իրմէ առաջ ներկուած տարազներուն
իշխանութիւնը մերժող ամէն մէկ տառին խորը՝ իրրեւ վկայագիրը իր ինք-
նիշխան եւ բացարձակ կեանքին, ազատ կեանքի իրաւունքին :

Այս դիտանկիւնէն մօտեցած՝ գրաւման դործողութիւնը այլ բան չէ,
եթէ ոչ անկարողութիւնը կարողանալութեան վերածող ա՛յն բխրագործու-
թիւնը, որուն ժամանակը, միտհետեւելով խօսքի ժամանակին հետ՝ կ'արա-
րէ լեզուին բարդ ու բազմաճանգրոյց ժամանակը, այսինքն՝ Ալֆան Օմեկային
մէջ ամփոփող եւ Օմեկայի բանա-մարմինէն նորանոր Ալֆաներ պայթեցնող
յարարեութեանց ժամանակը :

II

Աղեղին եւ իր լարին միջեւ միշտ կրկնուող երկխօսութեան չափ օտը
կըստի մը ունեցող Վ. Շուշանեանի «Անկարելի օրագիր»-ին բարդ ժամանա-
կը՝ իր դեղորուեստական, կառուցային, ռեալիստ հարուստ մակարդակներով
եւ հողեկան պիրկ վիճակներով, կը յիշեցնէ նետին կենսագրութիւնը : Գրու-
թիւնն է նեւր այս պարագային, որ դրազէտին հոգւոյն աղեղներէն զսպա-
նակուած՝ կ'արձակուի նոր հորիզոններու : Յար եւ նման նետին՝ գրութիւնը
եւս կը հորովէ նոր խոյանք մը, տարբեր զօրութեամբ կը ձեռքէ նոր ոլորտ-
ներ եւ, իր լինելութեան կենսագրութիւնը սպիտակ թուղթին վրայ նորանոր
թրթուացումներով արձանագրելէ ետք, կը նուաճէ իր նպատակակէտը՝ ա-
րարչութիւնը :

Արտաքնապէս նոյնանման թուացող ստեղծագործութիւնները, որքան
ու արձակուին նոյն աղեղ-ներաշխարհէն, որքան ալ ուղեւորուին միեւնոյն
արուեստագէտին աղեղ-օճէն, խորքին մէջ սակայն հիմնովին կը տարբերին
իրարմէ՝ իրենց դիմադրային, էութենական եւ վարքային ինքնագրում ե-
րանգներով : Այս իսկ պատճառով՝ իւրաքանչիւր լիիրաւ գրութիւն կը ներ-
կայացնէ այսպիսի՝ համակարգ մը, որուն առաջին ընթերցումը կ'իսաւարտ
ճիզի մը կը վերածուի ամէն անգամ, որ ստեղծագործութիւնը կը վերծանենք
մէկ այլ դիտանկիւնէ մօտեցած՝ իրրեւ մեկնակէտ ունենալով անոր յարաբե-
րութիւններն ու շնչաուլութիւնը : Նրկորդը ընթերցումը կը օրբէ առաջին մեկ-
նաքանութիւնը եւ, անոր շնչադրած սահմանումները չըջանցելէ ետք, զայն
կը վերաշարադրէ աւելի պայծառ, աւելի ամբողջական եւ աւելի հողեհարա-
զատ գիծերով :

Այսպէս, պահ մը մեզի կը թուի, թէ գրութիւնը արդէն իսկ նուաճած
է իր վերջնական մեկնաբանութիւնը : Բայց մօտեցման նոր փորձ մը կը բա-
նայ նոր ծալքեր եւ, յարասեւ հորովոյթով, ստեղծագործ խօսքը կ'ստեղծի ժա-
մանակին հետ՝ դառնալով բոլոր տեսակի ժամանակներուն բացարձակ ժա-

մասնակց։ Վերսիլիեալ տուեալներով հարուստ եւ ստեղծագործական մնայուն հարցումներու ներքին գաղտնիքները բացայայտող այս բայց գրութիւնը, իր տարականոն կառոյցին իսկ հանգամանքով՝ ո՛չ միայն կը շրջանցէ դեղազէտական ծանօթ պատասխաններու ժամանակը, այլեւ, ինչպէս ըսինք, կ'ըլլայ ժամանակը անուպու հարցումներուն, որոնք կը բանան լեզուին եղանակները՝ աղեղին եւ լարին միջեւ միշտ զարգացող, բայց չլիացող, մեկնող, բայց իր վերջակէտին չհասնող կախարդանքը խօսքին, անոր ներքին բարախումներուն կըռոյթը։

Գեղանկարչական բացատրութեամբ՝ քառամաս պատատին ծանրութեան կեդրոնը հանդիսացող «Անկարիի օրագիր» անուն գլուխ-գործոց կըտան է այս գրութիւնը, որուն ամբողջական լիութիւնը անգամ մը եւս կը լիցքաւորուի, կը հարստանայ օժանդակ ձայներով, ստեղծումը իր դազաթնակէտին արձակող այլ տարրերով։ Կառոյցի մը վէմն ու կաթողիկէն ըլլալով հանդերձ, անեկա արդարօրէն կը դառնայ քառամաս պատատին բարախում սիրտը, կենդանութեան ակունքն ու գրաւականը։ Յաղթական մենեքը կը վերածուի ներդաշնակ համերգի, որուն երկրորդ ձայները աւելի կ'ընդգծեն զխաւոր ձայնին առանցքային կարեւորութիւնն ու նշանակութիւնը։ Կարծես իրձէ ծնող ձայնը ըլլան անոնք, որոնք իրենց վերջնական լիութեան կը հասնին եւ կը դառնան անոր ցերեպին կրակը առուել բոցարծարող օժանդակ թրթրածին, որպէսզի գրութիւնը վերջնականապէս գուրս գայ լեզուին մութէն։

III

Մշակութային արձակագիրին գրականութեան ամէնէն վաւերական ըստեղծումներէն մէկը նկատուած «Ամրամ գիշերներ» վէպը, Շուշանեանի գրականութիւնը բնորոշող սիրային ոլորտներու մէջ զարգանալով հանդերձ, կարձանազրէ ակնեւ շեղում մը քնարաշունչ ուսմանթիզմով ծանրաբեռն իր արձակէն ընդհանուր ուղիէն։ Հակառակ իր օրագրային կառոյցին, յիշեալ գործին հերոսը կը պարզէ հարցադրող նկարագիր մը, զսպանակուած՝ հրապարակաբար Շուշանեանի մտքի խեղախ փայլատակումներով, ընկերային հարցերու մտեցող արի գիրքորոշումներով եւ, մանաւանդ՝ գաղափարապաշտ ենթաշխարհի մը հարազատ ձայնը հանդիսացող վարակիչ լեզուով։

Անցեալի հեթանոս բնադաշտութեան զուգահեռ՝ Շուշանեանի յիշեալ ստեղծագործութիւնը ոգեղէն ժառանգութեան կը բացուի իր ակունքներուն աւելը ներծծելու, այլ խօսքով՝ անցեալը ներկայի կառուցուող իրականութեան մէջ ամբողջացնելու, յաւերժացնելու յստակ ելակէտէն առաջնորդուած։ Անցեալն է ստեղծագործ թթխմորը ներկային եւ ավագային։ Հետեւաբար, զուր եւ նոր մարդ գառնալու հերոսին տաղանակները, որովհետեւ անկարելի է հիմնովին խղուել դարերու իմաստութեամբ թերեղացած ցեղին ոգեղէն աւանդներէն։

Բայց Շուշանեան-քնարական հերոսը նաեւ քաջ գիտէ, որ ներկան կը սկսի անցեալի աւանդները յաղթահարող խեղախումներով, որոնք չեն կրնար կաշկանդուիլ նոյնիսկ անցեալի կապանք-աւանդներով։ Աւագութիւնը կը ծնի այս տրամին զսպանակներէն եւ շեղատարուող հոգեվիճակներու տրամին գուրս գահեռ՝ կը ստանայ հոլովոյթին ահալ թափը։

Անցեալի կենդանի արժէքներուն եւ ավագայի անուանելի երազներուն միջեւ ծաղած բախումը նոր թափ եւ տարրութիւն կը ստանայ յատկապէս

«Անկարելի օրագիր»ի երբորդ գրութեան հետ, երբ պայթարը ծաւալող օժանդակ ձայներ կու գան աւելի հրահրելու իմացական ու զգացական պոռթկումները:

Այլ խօսքով՝ «Անկարելի օրագիր»ի հինգ ստեղծումները.— «Ձեռքեր», «Ժ. Տիւնամէլի աշխրուն եւ ժիւլ Ռընարի հեզնութեան մասին...», «Կցկըտուր եւ խառնիխուռն...», «Երբ կը սնանիմք «Յրկրայից սնունդներ»ով...», «Անկապ էջեր մերի հոգիի մը մասին...», իրենց հոգեվիճակային հակադիր բեւեռներով, հակադրումներով, հեռացումներով եւ գիրտը զարգացնող լրացումներով, խորքին մէջ կը կազմեն ամենահարուստ մէկ հոգեակարը Վ. Շուշանեան արուեստագէտի ներաշխարհին:

Մարդկային հինգ զգայարանքները թելադրող այս համակարգը յղացքին՝ համադրական, եզրայանգումի մը մէջ կը միաձուլէ Շուշանեան-մարդն ու Շուշանեան-օրագրութիւնը: Կարծես թէ մենք կը դռնուինք անբաժանելի, միս ու ոսկոր դարձած, հաւասարման մակարդակէն շատ անդին անցած եւ էտպէս ամբողջական էակի մը հետ: Գիրքին մէջ բանաստրկուող դէպքերը կարծես ըլլան ներքին դաշտամկարը Շուշանեանի էութեան եւ հեղինակը՝ անոնց արարելն ու անոնցմով ինքնամբողջացող կորիզը, մեկնակէտն ու թիրախը գոյութեան իմաստին, որ հինգ գրութիւններու ընկալչական եւ արտայայտչական ցանցին ընդմէջէն կը բացայայտէ եղանակները Շուշանեան-գիրքին:

Հոգեվիճակ աւ հոգեվիճակ զարգացող այս սրտբաց թուղթերուն ներքին աշխարհի կենդանադրումը կը սկսի Շուշանեանի գրականութեան մայր երակը հանդիսացող սիրերգութեամբ, որ նաեւ է՝ առանցքը «Անկապ օրագիր»ին: Աւելի պարզ խօսքով՝ անանձնական սիրոյ ազնիւ ապրումն է արտաքինապէս անկապ թուղթերը իրարու կամըջող շաղախը, կենդանաբար աւելը գրութեան մարմինին, որուն անդրադարձներով, բախումներով, լրացումներով եւ խաչածեւումներով ստեղծումը կ'ապրի իր անկախ կեանքը՝ ապրեցընելով նաեւ իր հինգ եղանակները:

IV

Մարդկային հինգ զգայարանքներուն ամէնէն առարկայականին՝ շօշափումին առթած ներանդրադարձներով Շուշանեան մուտք կը գործէ իր հոգեկան աշխարհի ոլորտներէն ներս, երբ ան կու գայ «իր քրկար աւ բարակ ձեռքով՝ ար անմտում յուզում մը կը պահառէ միշտ ինձի» (էջ 255):

Սիրոյ եւ զգացական ապրումներու բանալին ու զսպանակը դառնալով հանդերձ, նոյնիսկ պահ մը «տենդէ զուրկ» թուացող այդ նիւհար ձեռքերը կը քակեն կծիկները Շուշանեանի երեւակայութեան, որովհետեւ «Դեռ մտնկութենէ՝ ես սիրած եմ ձեռքերը քիչ մը չափազանցուած ու յանցաւար սիրով մը» (էջ 256), ինչպէս կը խոստովանի ինք: Աւելին. անցեալի յուշերը ներկային բերող եւ անոնց վերջուշով ապագայի ժամանակը ջերմացնող, պատրաստող եւ իմաստաւորող կենսական կամուրջ մըն են ձեռքերը: Կամուրջ են եւ շարունակականութեանը պայմանաւորող էական ազդակ, որուն պատկերին ընդմէջէն հոսող ապրումները ներկայի անձկադին պահերը կ'առաջնորդեն հոգեկան խաղաղ թուիչներու, իմացական անկողի հորիզոններու եւ խօսքը իր մարմինով օժտող բացառիկ ակնթարթներու:

Ահա թէ ինչու ձեռքերու հանդէպ ի մանկուց ապրած իր սէրը արձանագրելէ ետք, քսնի մը տող անդին, Շուշանեանի ձեռքը կը շարունակէ.

«կարծես թէ ձեռքեր կան, որ կ'ապրին առանձին ու ինքնաշարժ կեանքով մը ու չեն ենթարկուիր մարմնին վերին հրամանատարութեան: Տարօրինակ ու յուզիչ ձեռքեր եւ անոնք» (նոյն):

Այս խոստովանութիւնը բաւարար է արդէն, որ խօսքին մարմին տըւող ստեղծագործ ձեռքը բացուի հետոյ հորիզոններու: Վերջուշը կը սկսի Ռենէր Մարի Ռիլքէի մէկ յուզիչ էջով, սեղանին տակ թափառող մանուկի մը ձեռքերուն հետ կապուած հիւանդագին հոգեվիճակի մը վերապրումով, որո՞ւ մը կը յամենայ «զապտի ու ապօրէն ազդեցութիւններու գերութեան մէջ»՝ հիւանդ պատանիի մը հոգիին ժամանակաւոր ուրախութիւն մը հաղորդող ձեռքերու «մեղաւոր արարք»ին առջեւ, որ դիչերային ժամերուն կը վերականգնի Կանաչագարիի սովորութեամբ մը» եւ շեղանկով կը փոխուի դառնութեան, տառապանքի, հիւանդութեան նոյնիսկ» (էջ 257):

Եթէ վերջուշու զոյգ դրուագները ունին հասարակ յայտարար մը, որ պատանի տարիքն է ձեռքերուն, այնուամենայնիւ, յիշեալ երկու կացութիւններուն յաջորդած ձեռքերը ունին մէկ եւ յստակ դիմագիծ, — սիրոյ, աշխատասիրութեան եւ ստեղծագործութեան անանձնական մղումը ընդդէմը նկարագրի: Փոստօրէն, «անսակի վատութիւններու», «անխոստովանելի արարքներու» աստիճանական ձեռքերուն մասին մէկ-երկու սողունային ակնարկէ մը ետք, Շուշանեան պահ մը կը դանդաղէ՝ իր հօր «ցիւլակամ ծեր ու անաշխատ հողատէր ձեռքերուն» վերջուշին ընդմէջէն լայն բանալու թումը չիրականացած կարելիութեանց եւ հրգելու փառքը ա՛յն ձեռքերուն, «որ լայն են, մեծ, կեղտ ու հասարակ՝ չորրորդ դասակարգի մարդոց ձեռքերուն նման» (էջ 258):

Բայց նոյնիսկ երկաթի, փայտի, քարի կամ հողի վրայ աշխատանքի գործիք չթափած Շուշանեանի հօր «անաշխատ ձեռքերը» ձեռով մը կը մտերմանան չորրորդ դասակարգի ճաքճաք, կոշտ ու հպարտ ձեռքերուն, երբ, արդար ըլլալու համար, նոյն էջին վրայ ոն կը դրէ. «Ի՛նք երիտասարդ՝ անոնք սակած էին բազմաթիւ պտղատու ծառեր՝ որ իմ մանկութեանս արդէն երկար կեանք ունէին ու օքեան կու տային տարագնաց քոչուղիներու ու ամբողջ կը բռնադատէին մեր ամբարները՝ իրենց արեւախաւ պտուղներով»:

Ապա, աշխատաւոր մարդոց ձեռքերուն, այսինքն՝ նաեւ իր ձեռքերուն առթած հպարտութիւնը կը վերադառնայ դրութեան մայր շրջանակին, այսինքն՝ նուրբ ու ինքնամատոյց ձեռքերու յուզաշխարհին, որ կը բանայ եւ կը փակէ ներքին հրախաղութիւնները «Անկարելի օրագիրքին՝ յար եւ նման բացուող եւ փակուող այն գիրքին, որուն ծննդոցի ջերմութիւնը կը բխի Շուշանեան արձակագիրին ստեղծագործ մատներէն՝ զայն ջերմացնելով նոր կարելիութիւններով, օրագիրը իր անկարելի մարմինին բերող մշտաբարբառ ընթացքով»:

Այսպէսով, ստեղծումը դուրս կու գայ ծանօթ տեսութիւններու շրջանակէն, կ'ըլլայ ջնրող լեզու, որ խօսքը կը կաղապարէ դրութիւններու մէջ, իրականութեանց շարժուն դրութիւններուն դէմ բարձրացող ստեղծումներուն մէջ, որոնք անգամ մը եւս կ'ընդհեն այն տեսակէտը, թէ ստեղծագործ մարդը աւելի մեծ է որեւէ ստեղծագործական ծրագրի, եւ թէ՛ իւրաքանչիւր ընթացքումի հետ դրութիւնը կը վերադառնայ իր բանաստեղծական հետաւորութեան՝ ընթացման ճամբով ձեւաւորուող դրութեան «հետադարձ լայն լայնութեան» վերջուշու, ինչպէս կ'ընէ Ռուան Պարթ իր վերջին գլխաւոր գործերէն մէկուն մէջ. «Իւրաքանչիւր մեծ ծրագիր երեւակայութեան մէկ նման է», որ իր ստեղծագործական ընթացքին մէջ կը շրջանցէ նոյնիսկ իր «նախատեսած նկարը»:

Վ

Շուշանեանի անկարելի ծրագիրը, հասունացման երկու հանգրուաններէ անցնելէ ետք, կը սկսի շրջանցել իր իսկ երեւակայութեան ձեւերը, երբ «Անկարելի օրագիր»ը կը հասնի իր գաղափրահետին՝ «Երբ կը սնանիմք «Սրկ-րայիմ սնունդներ»ով...» անուն կորիզին:

Բայց, կը կարծենք, յիշեալ գրութեան անդրադառնալէ առաջ, անհրաժեշտ է թէկուզ հպանցիկ ակնարկ մը նետել «Անկարելի օրագիր»ին երկրորդ եւ երրորդ բաժիններուն վրայ:

Ձեռքերը դարձեալ կ'այցելեն Շուշանեանի յուզաշխարհը: Ռենէր Մարիա Ռիլէէի դանիացի մանուկին հիւանդ ձեռքերը ան կը տեսնէ «կորստեան գատապարտուած» իւրաքանչիւր էակի դէմքի արտայայտութիւններուն, խոտվէներուն եւ մեղանչումներուն մէջ: Ձեռքերը դինք կ'առաջնորդեն այլ աշխարհներ, որոնք կու գան իր դրական յիշողութեան եւ կը վերածուին ներկան լեցնող բազմաթիւ ժամանակի: Աւելի ճիշդ՝ կը դառնան ներկան, առանցքը իր հոգեկան տուայտումներուն եւ իմացական թափառումներուն: Կ'ըլլան անդիմադրելի Գիրը օրուան եւ ուղեցոյցը դալիքին:

Գրութեան բարդ, հանգուցաւոր ժամանակը լայն կը բանայ հորիզոնները աղտոտ հաղորդակցութեան: Յիշողութեան հոսք են բառերը, որոնք կ'ընթանան մերթ ուղիղ, մերթ սրարշաւ, դարձադարձիկ, ոլորապտոյտ, միապաղաղ կամ հասու՝ փեւլ Ռընարի «Մտերիմ օրագիր»էն հեղինակային կենսագրութիւն, Տիւհամէլի «Կէս գիշերուան խոստովանակը» գիրքի հերոսին տարօրինակ տրարձներէն դէպի Լատինական թաղ, Ռիլէէի անծանօթ մարդոց ներքին թափառումներէն մինչեւ «արեւմտեան քաղաքներու մատախուղին դէմ» լիսհազար ջրջանցող Մարիոմ կորէին, իրիկնային յուզիչ պահերէն մինչեւ Սէյֆուլինա՝ «Քաթարական ծագումով գիւղական ուսուցչուհի մը՝ որ չանկարծ յուզիլ ղեմավ գրագիտուի մը եղած էր ու մաւելով յեղափոխական ալիքներուն վրայէն՝ հասած էր այս մեծ քաղաքը որ ես կ'այցիմ հիմա: Սէյֆուլինա՝, Սէյֆուլինա՝, քու աչքերը անտարակոյտ քաթար կիներու ուղեքերում պէս նշանու են ու կարտասիւք, Սէյֆուլինա՝... կար տակաւին Քրեմլինը՝ իր հինաւորաց պատերովը, որ դիմացան յեղափոխութեան գրոնին եւ մահադամբարանը ուր կը հանգչի Վլատիմիր Լիլչը» (էջ 266):

«Սուր ու թունաւոր հեղութեան» եւ անսակարկ սիրոյ զսպանակներէն ազնուած՝ դիրք կը բանայ դատան առօրեան ու ներքին թոշուրէն շորորոք դասակարգի մարդոց եւ դադափարապաշտ երիտասարդներուն, — լըրազրավաճառ կիներ, Լատինական թաղի յատուկ երիտասարդ բողիկներ, որքաշական ուսանողներ, այսինքն՝ ինք, անոնք եւ սերունդը ըմբոստ, որուն աղաքը, իր իսկ բառերով՝ «հասարակ բաներու առջեւ յուզուելու ընդունակութիւն չունիմք եւ ոչ ալ ուրիշներու յուզումը յարգելու խղճահարութիւն» (էջ 271): Մարդը իր մարդկային ապրումներէն դրկած այս դարուն, այլ խօսքով՝ մեքենացման, պատերազմի եւ մահուան ամէնօրեայ սպառնալիքներով մարդկութիւնը հողեպէս ստրկացնող արեւմտեան քաղաքակրթութեան դէմ ըմբոստացած գերիւրապաշտ շարժումին խենթ ծնունդներն են ասոնք, համայնավարական դադափարներու անհասանելի ոլորաններուն եւ դերիւրապաշտութեան բիրտ պոթկուսներուն միջեւ տարուբերող սերունդը, որուն հասարակ հանգանակը կ'աղաղակէ: «Միգրաններու պատերէն սկսեալ մինչեւ համապարսններու որմերը — կեցցէ՛ արքան, ու սնկցի՛ բագը, որ «երրորդ հանրապետութիւն»ն է...» (նոյն):

Այս այն ըմբոստ սերունդն է, վերջապէս, որուն անսանձ մուրցեք կը

պոթիկայ ամէն ուղղութեամբ, կը վերածուի անցեալի արժէքները ուրացող հաւաքական մերժումի, անիշխանական հանդանակի եւ հիւսիքի, այլամերժ ուրացման. «Մենք քեանք հմէ Ժան-Ժաք Բուսոյի վրայ՝ այդ գարշիլի գուր-ցերիացիքն, որ ծեր կնոջ հետ կը պառկէր, յանուն սիրոյ, գոր կը ժխտենք: Թեանք նաեւ Վոյթիսի վրայ, այդ ծամածուռ ծերունիքն: Եւ այդ երկուքին ցկեանս լաւուկին, որ կը կաշուի Ֆրանսական մեծ յեղափոխութիւն... Մենք կը ծաղրենք ժողովուրդը եւ իր իրաւունքները, յեղափոխութեան մնացորդ-ները ամէն օր կը դրկենք քանգարան աւանդապետութեան վրայ պիտի տըն-կենք մեր սպիտակ դրօշակը...»

«— Կեցցէ արքան, անկցի՛ բազը...» (նոյն):
 Անիշխանական շարժման քանդիչ ուղին, հրապարակագրական, պար-սաւարական, յուշագրական եւ մենախօսական շերտեր աւելի կը լարեն դի-րքը: «Անկարելի օրագիրք»ը հասած է գեղարուեստական ոյնպիսի՝ կիզակէտի մը, որ խօսքը դուրս հու գայ իր հրեւակայութենէն՝ դուրս բերելով նաեւ դիրք գրական ընկալեալ ծրարիքներու — այս պարագային՝ օրագրութեան — ուղիներէն, խօսքը դիւցնող պատրաստի կառոյցներէն:
 Եւ դիրք կը սկսի ծնիլ ան-ըսելի լոյսերը լեզուի մտքին: Ջնջող լե-զուն:

VI

Կայունի եւ յարաշարժի բախումը, որ կը սկսի «Կցկտոր եւ խանդի-խումն...» անուն գրութեամբ, կ'անցնի հողեբանական եւ գրական անաւարտ ուրբտներէ, որոնք լաւագոյնս կ'արտաքնացնեն հերոսներուն անձնական եւ արտանձնական վիճակներուն, ձգտումներուն, ատկութիւններուն եւ սէրե-րուն բազմադոյն ջարտէսը:
 Դարն է ժամանակը՝ ընդհանուր դիժերու մէջ, եւ ջանական թուա-կաններու վերջին տարիներու աւելոծ Փարիզը՝ յատկապէս: Ժամանակա-շրջանի դադարախօսական, ջաղաքական եւ ընկերային իրադարձութիւն-ներուն հայելին է օրագիրը՝ «ուղեղէ ուղեղ» շրջան ընող օրուան լուրերուն ներքին անդրադարձներով աղեղուած:
 Աւելին. դադարախօսալից Եուլանեանն է մայր լուրը օրագրութեան՝ իր ընկերվարական կեցուածքներով, համամարդկային աշխարհահայեացքով եւ հրապարակագրական պոթիկումներով: Այսպէս՝

«— Հիւսիսային Աֆրիկէի մէջ ֆրանսական պատիկ զինուորներ սպան-նուած են «ժառանգելով» հայրեկիցին, ի՛նչ որ կը ճշմանակէ՝ արիւնի մէջ խեղ-դել ազատաննչ ժողովուրդի մը յանուն իր անկախութեան մզած կտիւր» (էջ 271) Կ

«— Փորձագէտներու տուած որոշումներուն շուրջ արտասովոր եռա-գեռ կայ խորհրդարանի ներանցներուն մէջ: «Ռուս Սթրիթի» պիտակաւոր սրկիաները կը պահանջեն իրենց պարտամուրհակներուն վնասուք» (էջ 272):

«— Ախա՛ լուր մը, որ կարեւոր է: Բարձր դասի պարասրահէ ներս չեմ ընդունիր խափշիկ հիւպատոսարանի պաշտօնեայ մը, առարկելով, որ *սո՛՛հ-բեկացի* յամախորդներուս հայեոյ՛ կի պատճառեր տտիկա» (էջ 273):

«— Ահա՛ այս ալ նկար մը: «Ընթէ Սամ»ի ազգային «Ընծ հերոս»ը, կատարակտ Լինտպերկը իր կնոջ հետ: Տարօրինակ հերոս մըն ալ ասիկա: Անտառապաշտ անշահախնդիր, բոլոր քաղցինները անշահախնդիր են եւ յետոյ՝ քաղց (...): Կը յիշե՛ս, Կարապետ, երբ երկու ամսեւոյ ու գաղափարակամ անհիշամակամներ, Սաքօ եւ Վանցեթթին կը սպասէին յամուռ արդարութեամբ քու մէկ նախադասութեամբ՝ դուն քաղցին շունկոյն գայն արտասանելու: Այդ վայրկեամէն արդէն «հերոս»ի հաշիւը վերջացած էր: Ստիպուած էիր ընտրել: Կա՛մ պիտի ըլլայիր Շարլի Շափլէն եւ կամ քէ օգնական-նախարար ու ղեկավարութիւնի ամուսին: Գուն եղար վերջինը, որովհետեւ հերոս չէիր» (էջ 273-274):

Կարելի է շարունակել մէջբերումները: Բայց, կը կարծենք, կատարած արտագրումները բաւ են՝ կազմելու համար թէկուզ ամբողջական ճեպանկարը այն ամբողջական գաղափարապատին, որուն սոյլ կեանքը եղաւ անանձնական նուիրումի հոմանիշ՝ Եւ հայկական, Եւ մարդկային մակարդակներու վրայ:

Լրագիրներու էջերէն գրութեան ընթացքին վրայ նետուած այս լուսարձակները ոչ չկատարուին, եթէ ոչ՝ շատ գիծերով եւ պայծառ զոյններով հանդիսադրուած այն «ներքին դաշտանկար»ին, որուն սահմանները կ'երկարին արուեստագէտ Շուշանեանի ստեղծագործական անկարելի երազներէն մինչեւ իր սիրային փորձառութիւնները, իր յեղափոխական ընկերոջ անձնական տագնապներէն մինչեւ վերլուծման կոթիւն, իր մտածողութիւնը խաչածեղ գրական յիշողութիւնէն մինչեւ ժամանակին անդրադարձները, հայկական յիշականացած փափաքներէ մինչեւ համամարդկային պոռթկումներ, եւ այս բոլորը՝ իր դիրքը դարպասող խօսքին ստեղծագործ պրիմակէն անցած:

Կարճ ու կտրուկ՝ Եսին, միւսին եւ անոր, այսինքն՝ Շուշանեան քնարական հերոսին, աշխարհ մը ապրումներու եւ կորստներու աղբիւր էջին եւ իր հօր գէժ ըմբոստացած գաղափարապաշտ ընկերոջ եռանկիւնին մէջ հորվուող զգայութիւններու, մտածումներու եւ կեցուածքներու հոսքը, վերջի վերջոյ, իր վախճանական ձեւն ու նշանակութիւնը կը ստանայ կեանքի եւ աշխարհի նոր գիծագիծը յեղափոխիչ հիմերու վրայ խարսխելու տեսլականով աչեկոծ Շուշանեան-հերոսին անյաղթահարելի ներաշխարհին մէջ: Ուրովհետեւ դիրքը այլ բան չէ այս պարագային, եթէ ոչ՝ յոտակ դիրքորոշում անձնական եւ հաւաքական կեանքի իրադարձութիւններուն հանդէպ, յեղափոխական հակազդեցութիւն՝ կեանքի հակափոփոխական ուժերուն եւ ընթացքին գէժ, իրականութեան թանձր պատերուն եւ սիրոյ աներեւոյթ սահմաններուն միջեւ տարուբերող խարսխումներուն, մղձաւանջներուն եւ կիրքերուն հակազդող գործողութիւն՝ կեանքին աննուանելի բեմահարթակէն ըստեղծագործ խօսքի անջրպետին մէջ փոխադրուած:

Այս գիտանկիւնէն՝ աներկրայօրէն կրնանք ըսել, որ Շուշանեան-աշխարհ լախումն է էութիւնը արձակագիրին օրագրութիւններուն՝ ընդհանրապէս, եւ «Անկարելի օրագիր»ին՝ յատկապէս: «Անկարելի օրագիր»ը, այս առումով, խոսքումն է քաջաբեկ մտածանկարչուհի մը՝ ծնունդի նշաններուն եւ հոգեվարքի ճիշերուն միջեւ վերլուծող տագնապահար եւ անորոշ Արեւմուտքին, միաժամանակ ըլլալով մանկութեան դառն անդրադարձներով խնդրուած տագնապահար հայ արուեստագէտին պոռթկումը անհողի քաղաքակրթութեան քմայքներուն գէժ, յուսահատութեան աղաղակը եւ յուսահատութեան իսկ դէժ ծառայող գաղափարապաշտ սիրահարին բողբոջը:

VII

«— Ի՞նչ է սերը, ի՞նչ է սերը...» (էջ 277) :

Անդադար այս հարցումը հորովոյ Կնուտ Համսոնի հերոսին յիշատակումէն հետք, «Անկարելի օրագիր»ը մենք կը գտնենք իր վախճանական կէտին՝ սիրոյ աստիճան : «Սերը կը սնանիմք «Սերկրային սնունդներ»ով...» գրութիւնը կու գայ աւելի ուղեւորելու ընթացքը դիրքին, որ գրական յիշողութեան լարերէն արձակուած տասնեակ մը օժանդակ ձայներուն (Ռենէր Մարիա Ռիլքէ, Էտկար Ալէն Փօ, Ժիւլ Ռընար, Ժորժ Տիւհամէլ, Ժան Ժոսէս, Ժորժ Գուրբիլի, Պարլեռ, Կնուտ Համսոն, Ալֆրէտ ար Վիլէ, եւ ուրիշներ) փոխարէն՝ գուգահեռ դիմել վրայ գլխաւորաբար կ'ունենայ Անտրէ Ժիտի «Սերկրային սնունդներ»ը՝ իբրեւ գիրք լուսաւորող գաղափարական լիցք եւ անոր ընթացքը գուգանակող աւելի :

«— Կարեւորութիւնը, նախանայել քող մայրամբիդ մէջ ըլլայ եւ ոչ քէ մայրած իրիդ», միասեռական ու հակաշեղագոյնական Անտրէ Ժիտի յեղափոխական աւետարանէն մէջբերելէ հետք, իր քաղցրեցիկ ծնողքին պնդումներուն դէմ աւելի հրահրած, դժգոհ եւ սեփական նայուածք ունեցող Շուանհանի համայնավար ընկերք, «զսպք ու միջին լուծումները իմ խառնուածքը սննցող սողոց յատուկ չեն» յայտարարած եւ «ամբողջ մարմնով կռիւիմ մէջ մտած» արտակարգ ժամանակին ծնունդը հանդիսացած այս ներկայացուցչական հերոսը կը տարուի ինքնուրոյն աշխարհահայեացք ունենալու սկզբունքային կեցումներն ամբողջական հեշտանքէն, որովհետեւ՝ «ՔՂԱՄԱՐԱՆ է մարդ ըլլալ, ընկերներ, թշուառ...» (էջ 304) :

Նոր ժարդ ըլլալու, թունաւոր ու անիծեալ սնունդներու այս աւետարանէն պատգամ տու պատգամ անանելու, անոր դէմ դիրքորոշուելու, պահ մը Անտրէ Ժիտի, Ռոպերտի, Գանթոնի եւ անոնց կապուած բռնութեանց մէջ սպաստանելու լուծումը, փաստօրէն, այս համայնավար երիտասարդը կ'առաջնորդէ հակառութեան հակասութիւն, բռնութեան վարդապետութեան :

«Ի՞նչ է բռնութիւնը, — կ'ըսէ ընկերս վարակիչ խանդավառութեամբ : — Մարդիկ գայն կը շփոթեն հասարակ ու կոպիտ ուժի հետ, որ կը ծառայէ անճանական կամ խմբական շահերու : Մեր բռնութիւնը պատասխան մըն է տըրւած յանուն բազմութեան՝ բուն փոքրամասնութեան մը բռնութեամբ : Մի՛ լըսեր, — կ'ըսէ ընկերս կրթով, — քէ բռնութեան դէմքը մէկ է : Տես՛ Գանթոնը, — կ'ըսէ ձեռքի ոգիւր ու ներշնչող շարժումով, — մի՞ քէ կարելի է ըսել, որ բռնութեան տեղը գեղեցկութեամբ չէր վստեր իր այժերում մէջ (...) Ճակատագրական վայրկեաններում մեծ ու հերոսական բաներ ընել գիտեր եւ արտասանել բացառիկ ուժով եւ գեղեցկութեամբ օժտուած խոսեր, որ ժողովուրդները չեն մտնար — ճշմարտութիւն, որ պիտի հնչեցնէ ահագանգ չէ, այլ՝ Հարուած հայրենիքի թշնամիներուն դէմ : Յաղթելու համար անոնց : Պարոններ, մեզ պէտք է յանդուրժելու, կրկին յանդուրժելու, մի՛ շտ յանդուրժելու, եւ ժեր երկիրը կը փրկուի :

«— Տանթոն կ'ըսէ տակաւին՝ Այն ժողովուրդները, որ արեւցին իրենց ազատութեան, ինչպէ՞ս գործածեցին զայն. խոյսցան թշնամիին վրայ, փոխանակ անոր սպասելու...»

«— Երբ հայրենիքը վտանգի տակ է, ամէ՛ն բան կը պատկանէ հայրենիքին, — կ'ըսէ Գանթոն» (էջ 308-309) :

Միբոյ, ամբողջական անձնագոյնութեան, ամբողջական այլամերժութեան, արժատական մերժումներու եւ անսակարկելի ուրացումներու ծայրա-

յնդ նայուածքը համայնաժողովուրդի հրիտասարդին, առաջին եւ վերջին հերթին, նաեւ է՛ դադարաւորական նայուածքը համակ ջիղ եւ համոզումներու բոցադաշտ Շուշանեանին: Կարծես թէ «երիտասարդ ընկերոս» պատրուակ է հոս՝ իր ներքին բազմաձայն մենտաօտոթեան աշտանակներուն առաւել արծարծման համար: Աւելի ճիշդ՝ իր սէրերուն, ատելութիւններուն, համոզումներուն եւ տագնապներուն մշտահոլով իմացական բոցադաշտն է գրութիւնը Շուշանեանի համար, որ ժիտի բառերով կը հնչեցնէ իր տագնապահար ետին խօսքը՝ «նաթանայել, սիրել պիտի ուսուցանեմ քեզի եւ ո՛չ թէ համակերպիլ»:

Կամ՝

«նաթանայել, պէ՛տք է, որ բալոր գրքերը այրես մէջդ...»:

Անցեալէն ամբողջականօրէն իզուելու հրամայականին դիմաց՝ Շուշանեան-հերոսը հոս կը բախի կեանքի ճշմարտութեան, դարերու հոլովոյթով բերեղացած մշտագոր աւանդներու եւ փորձառութեանց կանչին եւ գիրք իր լեզուին առաջնորդող պատգամին կենարար հոլովոյթէն վերացած՝ կը խորհրդածէ այլամերժութեան բեւեռներու սեմին. «Ինչպէ՞ս այրել սակայն բալո՛ր գրքերը: Ինչո՞ւ այրել սակայն՝ երբ անոնք կրնան յապաղիլ մեր եռգիմերուն մէջ կրկին քրպէտ անցեալի ժառանգութիւն, քրպէտ յիշատակ, քրպէտ անցեալ...» (էջ 304):

Բայց անցեալը աւելին է, քան յիշատակը, սոսկական ժառանգութիւնը: Վերջապէս, ան է սիրոյ անժամանցելի ժամանակը, — ասպրելու տենդն է, մեծ դադարաւորներու բազիններուն վրայ ամբողջական անձնազոհութեան պահը, սեռային խօլ անձնատուութիւնը, «Արարատեան դաշտին մէջ, Լուսաւորչի կանթեղին տակ՝ այգի մը տնկած ըլլալու» երջանկութիւնը, անհասանելի երազներու մշտաբորբոք տառապանքը, գառակարգային պայքարի յաղթանակները իմաստաւորող փառասիրութիւնը, «այս բոլորը եւ այս բոլորէն անդին, աւելին»...

«Ու անտարակոյս լաւ է այսպէս»...

Որովհետեւ ան է ուղին խօսքը իր անկարելի գիրին առաջնորդող տրամին, ուր դադարաւորական, ընկերային, լրացրական, խորհրդածական եւ իմացական բոլոր լեզուները կը միաձուլուին մեծ ծրագիրի ընթացքին մէջ, որ ան-տեսիլին ներքին բոցարձակումներէն զսպանակուած՝ կ'ըլլայ քաղաքական-սիրային անկարելի սաք, որ կը փորձէ շրջանցել իր իսկ ծրագիր-մարմինը, ջնջող եւ վերստ-գրող լեզուն:

Կը շրջանցէ՞...

— Թերեւս...

Մ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Ե. Կ Ա Ր Ա Բ Ջ Ի Ե Ի Ս Կ Ի



Դաշնակցային Գերմանիայում առաջին լիցուով հրատարակուող «Գրանի» հանդեսում յոյս տեսաւ «Հայաստան կարօտը» պատմուածքը, որի հեղինակն է հորհրդային այլախոս Ծարի Կարաջիհեակին: Հաւանաբար առ հեղինակի ծածկանունն է, որովհետեւ նա ապրում է Մոսկուայում, իսկ «Գրանի» հանդէսը հորհրդային Միութիւնում սրակատարում է որպէս հակախորհրդային:

Այս 150 էջնոց պատմուածքում, հեղինակը, որը եղել է Հայաստանում, մեծ ջերմութեամբ է գրում Հայաստանի եւ հայերի մասին: Լաւ պիտի լինէր, որ այդ գրութիւնը թարգմանուէր ամբողջովին, քայց դրա համար ես չեմ կարողանում նախ գտնել ժամանակ եւ յետոյ վախճում եմ, որ իմ ոչ-կատարեալ ձայնը չի կարողանալ գեղեցիկ աշխատութեամբ ամբողջ համն ու հատը: Ասիկայն գրքի մէկ գլուխը, որը կոչուում է «Հրանար» եւ որը նախորդած է Հրանտ Մաթեոսեանին, եւ համարձակուցի որոշ կրճատումներով թարգմանել: Յետով եմ, որ լուրջ թերութիւններն էլ կը լուացնի իմագրութիւնը:

Է. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Հ Ր Ա Ն Տ Ը]

Մէկ անգամ Գիւլից ինձ հետաձայնեց իմ բարեկամուհիս եւ առանց երեխաներիս ատողջութիւնը հարցնելու՝ ասաց. — Ես քեզ պէտք է ստեմ, որ մեր

երկրում, մեր ժամանակ, ապրում է մի մեծ գրող, իսկ դու հաւանաբար այդ մասին ոչինչ չգիտես: — Գիտեմ, — պատասխանում եմ ես

զրեթէ առանց մտածելու, եւ ասում եմ նրա անունը: Նա հրառթափուած Հաստատում է:

Ու չնայած նրան, որ ես էլ նրա մասին իմացայ վերջերս, իսկ կարդացի ընդամէնը մէկ ամիս առաջ՝ աւելացնում եմ պարծանքով:

— Ինչպէ՞ս չգիտեմ, ինչպէ՞ս կարեւր է չիմանալ:

Ու կրկնում եմ գոհունակութեամբ:

— Գիտեմ, ՀՐԱՆՏ ՄԱՔԵՒՈՍԵԱՆՆ Է:

— Ու, դա անկարելի է, — ասացի ես այն ժամանակ, երկու ամիս առաջ, — չի կարող պատահել, — մտածեցի ես, ձեռքերս մէջ առնելով այն դիրքը:

Ու գունդարդուած զրթի երեսը Հաստատեց իմ անվտանգութիւնը: Չնայած նրան, որ զիրքը ինձ տուել էր ոչ թէ պատահական մի ժարդ, այլ՝ խելացի ու մեծ մի դրող, ես չհաւատացի:

Նա Մաթեոսեանի վաղեմի բարեկամն էր, իսկ բարեկամի մասին ո՛վ է վատ խօսում: Ես յիշում եմ, թէ ինչպէս տուեւ բերեցի այդ դիրքը, ինչպէս րացեցի ու կրկին աչքիս ընկաւ ձեւաւորուած շապիկը: Նախ քան կարդալուն անցնելը, ընկայ մտորումների մէջ: Ես մտածում էի զարմանալի օրինաչափութեան մասին, որը ի վերջոյ նախապաշարում է, բայց որից ես հիմա էլ չեմ հրաժարուում: Իմ կարծիքով մեծ գրականութիւն կարող են ստեղծել միայն մեծ ժողովուրդները: Այսինքն՝ բառացիօրէն մեծ, քանակի եւ, անշուշտ, սպառնական դերի իմաստով:

Ես չեմ խօսում բանահիւտութեան մասին, նա հաշուից դուրս է: Բանաստեղծութիւնը դուռ ազգային երեւոյթ է, բոլոր թարգմանութիւնները՝ կեղծիքներ են, լաւագոյն ղէպքում՝ նրանք բանաստեղծութեան գոյութեան մասին Հազորդումներ են, իսկ ամենալաւագոյն ղէպքում՝ թարգմանչի ստեղծագործութիւնը: Իսկ արձակը, անշուշտ, թարգմանութեան ենթակայ է, ինչ էլ որ այդ մասին ասեն դալմասնազէտները: Թուում

է, թէ ի՞նչ կարող է աւելի անհասարական լինել, քան զեղարուեստական ստեղծագործութիւնը: Բայց լինելով բոլոր տեսակի ենթակայականութիւնների կողմնակից եւ Հասարակականացումների թշնամի, ես ստիպուած եմ ճանաչելու եւ նոյնիսկ պնդելու, որ զեղարուեստական ստեղծագործութեան մեծութիւնը կապ ունի երկրի Հասարակական կեանքի հետ, նրա շափերի, նրա ընդգրկումների, աշխարհի հետ ունեցած նրա կապերի եւ այն տեղի հետ, որը նա գրում է մարդկութեան ընդհանուր ճակատագրի մէջ: Այսինքն՝ հենց այն անծարտօժի մեծութիւնների հետ, որոնք անընդգրկելի են եւ որոնցից խուսափում է ամէն մի սովորական գրող:

Եթէ պիտի գիտեի միայն ընթացիկ ղէպքերը, իսկ ամբողջ անցեալը ընդունել որպէս պատարաստ արդիւնք, ապա այնպէս լինէր, որ ծնւում է Հանճարը, ստեղծում է Հանճարից ստեղծագործութիւն, եւ քանի որ նա մեհակ է, միակը ամբողջ ժամանակների Համար, ապա բոլոր ժամանակների փառքն էլ Հասնում է նրան, միայն նրան: Բայց իրականում, բոլորովին այդպէս չէ: Դատարկ տեղի վրայ Հանճար չի ծնւում, դրա Համար ծնողները բաւական չեն, որովհետեւ ճանճարին ժողովուրդն է ծնում՝ բանաձեւը ճիշդ է, որքան էլ որ նա ահա՛ լինի մեր լոողութեան Համար: Եւ եթէ մենք դիտարկեալ իսկ ղէն նեանք այն Հողկան շերտը, որը կապում է ստեղծագործութիւնը իր ժողովուրդի հետ եւ դիտենք միայն այն, ինչը մատչելի է մեր զգայարանների Համար, ապա կը կանգնենք առնուազը երկու պայմանների առջեւ: Նախ՝ լեզուն, նրա մշակութայնութիւնը եւ նրա Համապատասխանութիւնը ժամանակի ոճին ու ողուն: Բայց երկրորդը, որը պակաս կարեւոր չէ՝ ընդհանուր հասկացութիւնների մշակութայնութիւնը է եւ ընդհանրացումների բացարձակութիւնը: Որքան աւելի նշանակալից Հասկացութիւններ եւ կերպարներ են մտնում գրական այն շերտի մէջ, որի վրայ յենուելով թրոփ է կատարում գրողը, այնքան հզոր

ու բարձր է թողնելը: Եւ սա գալիս է ո՛չ միայն արտայայտուելու միջոցներէն, այլեւ՝ ոչ-պակաս լռելու միջոցներէն: Մի ինչ-որ հերթական միտք արտայայտել անկարելի է, առանց նախորդ մտքը լր-
նութեան մտնելու հնարաւորութեան: Ուրեմն, ինչ որ մէկը պէտք է արդէն ա-
սած լինի զեզանից առաջ:

Այս հարցում Ռուսաստանում ամէն ինչ կարգին է: Մեր 200 տարեւայ գրա-
կանութեան մէջ այնքան է ասուած, որ մենք կարող ենք եւս 200 տարի լռել եւ խելացիներէ տեղ անցնել: Բայց Հայաս-
տանում... Լեզուն զեղեցիկ է, հաւա-
տում եմ, լսել եմ, կարդացել եմ: Բայց չեմ որ լուրջ արձակը բացակայում էր, չկայ թողնել կատարելու շեքտը, չկայ լր-
նութեան շեքտը, պէտք է սկսել զերտից, ամէն ինչ հերթով: Եւ, ուրեմն, որքան էլ որ տաղանդաւոր լինի հեղինակը, նրա ճակատագիրը գաւառականութիւնն է, աղքատին ոգով կրկնութիւնը:

Եւ այդ մակերեսայնութիւնը ու երկ-
րորդականութիւնը պէտք է յատկապէս աչքի գարնի թարգմանութեան մէջ:

Եւ ահա ես բաց եմ անում այդ գիրքը ու սկսում եմ կարդալ: Ես մոռանում եմ իմ դատողութիւնները ու կարգում եմ, որքան որ ներում են ուժեքս, իսկ առա-
ւօտեան զարթնում եմ ուրախութեան ըզ-
զացմունքով ու չեմ հասկանում, թէ որ-
տեղից եկաւ այս ուրախութիւնը: Ես նա-
յում եմ աթոռին դրուած գրքին ու հա-
կանում եմ, որ իմ ուրախութիւնս անուն ունի, այդ անունը Հրամոտ Մաքիմիանն է:

Ու ես զնում եմ ինքնաշարժի կայա-
նը՝ ապուշի պէս ծիծաղելով, եւ ինձ թը-
ւում է, որ պայուսակն, որտեղ դրուած է այն գիրքը, ներսից տաքանում է, ես պարզապէս տեսնում եմ, թէ ինչպէ՞ս են հաշուում ձիւնի փաթիլները, զիպչելով պայուսակիս: Անհամբերութեամբ մետ-
նոլում խցկում եմ մի անկիւն, բացում է պայուսակն ու դուրս եմ բերում այն գիրքը լոյս աշխարհ...:

Այնտեղ կար այն ամէնը ինչից ես սարսափում էի. գիւղը սարերում, աղան ինտրոտուում, տատիկներ, պապիկներ եւ շատ ուրիշ բաներ, եւ այդ ամէնը ըս-
քանչիւ էր:

Այդ գիրքը կատարեալ էր, ահա թէ ինչո՞ւմն էր բանը: Նա պարունակում էր իր մէջ բարձր արձակի բոլոր պարագա-
ները. ոճը, ուրիշը, պատկերի ճշմար-
տութիւնը, գործող անձերի իրականու-
թիւնը: Կար այնպիսի բովանդակութիւն, որ պատմութեանը սկսելիս, անկարելի էր չկարդալ մինչեւ վերջ: Սակայն այս լու-
փանիչներով չէ, որ պէտք է խօսուի գրքի մասին: Սէք՝ դէպի մարդիկ, դէպի կին-
դանիները, դէպի կեանքը եւ դրա հետ միասին ապրելու անկարելիութիւն: Սէ-
րը, մարդիկ եւ կեանքը — հաւանաբար այսպէս:

Ո՛չ իտեալականացում, ո՛չ ոճաւո-
րում, ո՛չ գոյների թանձրացում, ո՛չ յօս-
բացում, թւում է, թէ կեանքը ոչ մէկ մշակման չի ենթարկուել, մեզ հասել է նա առաջին ձեռքերից, բայց այդ ձեռքե-
րը իսկական վարպետի, զարմանալի մար-
դու ձեռքեր են: Նրա հումարը թեթեւ է ու չպարտադրող եւ դրա հետ միասին նա մակերեսային չէ, նա մէկտ պարունակում է երեւոյթի խորքում, որպէս կեանքի օր-
դանական յատկութիւն: Նրա ցաւը զուրկ է պարտից եւ եթէ երբեմն վեր է ան-
ւում ճիշ, ապա այդ ճիշը հենց ստա-
պանքի ճիշն է, այլ ոչ թէ հեղինակիւնը, որը ճշում է ուրիշի տառապանքի համար: Ու անսահման տխրութիւնը, պարզ իմաս-
տութիւնը, ընդհանուր ճակատագրի խոր զգացմունքը այն գրքում, որտեղ բացա-
կայում էր վերացականութիւնը եւ ընդ-
հանրացումը, հենց կեանքի, բնութեան ու մարդկանց յատկութիւնն էր: Եւ, հա-
ւանաբար, դրա համար մասնակից լինե-
լու զգացմունքը, անցնելով բարձր բարո-
յագիտական թափի միջից, վերագա-
նում է կեանք ու կրկին դառնում է յոյս, ուրախութիւն, սէր...:

Դո՞ւր էր պալիս, արդեօք, ինձ այդ գիրքը: Ես սիրում էի նրան, նա ինձ հա-
րապատ էր: Այն ժամանակ, մեարդում,

մի անկիւնում անդժուած, ձեռքումս դիրքը ամաւր բռնած, Ֆոֆոսայով եւ ժպտալով, ծածուկ արցունքներս սրբելով՝ ես այդպէս էլ ասացի ինձ. «Հարազատ դիրք է»:

Արդէն այսօր, մի քանի տարի անց, մտադրուելով գրել Հայաստանի ու Հրբոստի մասին, ես կրկին վերցրի ձեռքս ինչ դիրքը, բայց արդէն առանց վախի, ինչպէս առաջին անգամ, այլ լուրջ յուզուածքով ու անհանգստութեամբ. այժմ Լօ կըրցնելու շատ բան ունէի: Եւ երբ ես կրկին կարդացի բոլոր պատմութեանը՝ մէկը միւսի յետեւից, սա արդէն երրորդ անգամն էր, իմ այս ձերբող ուրախութիւնը անսովին երկուսից պակաս չէր:

Այն ժամանակ Երեւանում ես կըջանիկ էի, համոզուելով, որ Հրանտ Մաթեւոսեանը նոյնքան սքանչելի է, որքան որ նրա դիրքն էր: Ես կրկին երջանիկ էի այժմ մոտակայում, որ նրա գիրքը նոյնքան սքանչելի էր, որքան որ ինքը:

— Հրանտ Մաթեւոսեան, Հրանտ Մաթեւոսեան... սէ, — շարժեց գլուխը Նորիկը, — երբեք չեմ լսել:

— Այո, լսել եմ, եւ նոյնիսկ կարդացել, — յստակօրէն տասց Տիգրանը եւ շտապեց ուրիշ նիւթի անցնել:

— Մջանչիլի գրող է, — յուզմունքով ասաց Յակոբը: Մական նրա յուզմունքը ընդհանուր հայկական նիւթի հետ կապ ունեցող յուզմունք էր: Աւ եթէ հայկական նիւթը չլինէր, կը մնար միայն անտարբերութիւնը:

— Այդ ս՞ումն են վերաբերում ձեր այդ անպահանջները, ախ, Մաթեւոսեանի՞ն, — նա հաստատ կարդացել էր, — այո՛, այո՛, նա լաւ գրող է, բայց միակը չէ, այդպիսի գրողներ հիմա Հայաստանում շատ կան:

— Ի՛հ, գիտե՞ք ինչ, — կատաղում եմ եւ, գիտե՞ք ինչ... ինձ դժուար է վիճել, սրով հետեւ ես մնացածներին չեմ կարգացել, բայց մէկ բան ձեզ կարող եմ ասել, եթէ դուք ճիշտ էք, գոնէ մասամբ,

Լթէ ձեր մօտ գտնուի գոնէ մէկ հասարակագրի գրող, ապա, հաշուի անելով հայերի քանակը, դուք աշխարհի ամենագրական ժողովուրդն էք, եւ նոյնիսկ ժամանակակից Թուսաստանը շատ հեռու է ձեզանից:

— Գուք շատ բարի էք, — ժպտում է նա, — շա՛տ բարի...»

— Այո՛, այո՛, — ասում է Սերգէյ Ասոյեանը, — այն՝ ինչ դու պատմում ես, շատ յստակնշական է: Պատկերացրե՛ս ես, ամբողջ Հայաստանում միայն ի՞նչ կամ երեք ատանեակ ընթերցողներ իրապէս հասկանում են, թէ ինչ է Հրանտը...»

Սերգէյ Ասոյեանը իմ նոր բարեկամն է, իմ յաւազոյն ձեռքբերումը Հայաստանում: Եւ եթէ ես մինչեւ այժմ նրա մասին ոչինչ չեմ ասել, ապա նրա համար, որ առիթ չեմ ունեցել, իսկ առիթը անպայման պէտք է գրական լինէր:

Մենք ծանօթացանք նրա հետ լարնաւորութիւնում, որտեղ նա վարում էր գրական խմբակը եւ որի համար վարձատրուում էր լարորանսի կէտ դրոյքով: Նա ստիպուած էր երկու ժամ շարունակ սեւ հայկական չափածոների ցուցակը:

— Ո՛րչի՛ն է հարկաւոր այս տղետներին, — ասաց նա ինձ հենց առաջին օրը, — այս սրկանների սկզբունքը այն է, թէ գրականութիւն է այն ամէնը, ինչը զիտութիւն չէ: Բայց 50 տարւի են ժողովրդում ընկած չի...»

Այստեղի շատ հասկանալի չափանիւշը, թէ ինչպէս է խօսում ուսուցիչնով, Սերգէյին չի վերաբերում: Մինչեւ 20 տարեկան նա հայերէն գրեթէ ոչ մէկ բառ չգիտէր եւ ոչ մէկ անգամ Հայաստանում չէր եղել: Ապրում էր Թուսաստանում, ապրում էր Մոսկուայում ու Նաբոկոփին էլ կարդացել էր: Երբ իր ուսուցացած ծնողները մահացան, նա յանկարծ լսեց արեան ձայնը, նախնիների կանչը, հասողատ հողի մզողութիւնը եւ նետուեց Երեւան: Բայց ոչ թէ սովորականի նման սկաւ ու սկսեց սուրբել, այլ սովորեց լեզուն, ընկալեց պատմութիւնը, չըջապա-

սեց իրեն ընկերներով ու հայ դարձաւ: Այսպիսի հերոս է նա:

Մենք թրեւ էինք գալիս երեկոյեան Երեւանով, մտնում էինք սրճարաններ, սուրճ էինք խմում փողոցում գրուած սեղաններէ շուրջ, խմում էինք շամպանկէ (չգիտես ինչո՞ւ սրճարաններում միայն շամպանկէ կայ), վայելում էինք այդ շամպանկին ու այդ սուրճը, բայց աւելի շատ վայելում էինք ընդհանուր հայկական շուրջփող խօսակցութիւնները: Վերջում գնում էինք նրա սուճը, յետոյ իմ տունը: փոխանակեցինք յօղումներ Մանգելլաումի մասին: Նրանք հրատարակած էր «Դրակամ Հայաստան»-ում, թե՛ իմ՝ շնք առ որտեղ:

— Այո, — ասում է Սերգէյը, — դու իրաւօք էր, Հրանտը զարմանալի երեւոյթ է: Նա աշխատում է գրեթէ դաստիարակ տեղում: Հայոց դրական լեզուն՝ դու բանաստեղծութեան լեզու է, նրա կողմից ստեղծուած ու սնուած: Նա այնքան բարձր է կանգնած սովորական խօսակցական լեզուից, որ երբեմն չի համարձակում նրա հետ ոչ մէկ կառուցուածքում: Այ՛, օրինակ, քեզ քո Միշան թեւադրեց մէկ դաւաթ սուրճ: Բայց այդպէս չեն տում, այդպէս միայն գրում են: «Մէկ»-ը աս դրական թուական է, նրան համապատասխանող խօսակցական թուականը՝ «մի» է: Ինչո՞ւ նա այդպէս սխալուեց: Մէ, նա չի սխալուել: Դու գրում էիր, եւ նա թեւադրեց քեզ դրաւոր նշանակութիւնը: Դա նրա մօտ ինքնարժեքն էր: Այսպիսի տարբերութիւն կայ սովորական բաներում, էլ չբխանա՞նք աւելի բարդ դէպքերի մասին: Եւ ձեր սրտն էլ ի Հրանտը նոր արձակ ստեղծելու հետ միասին, կատարում է նաեւ դրական եւ խօսակցական լեզուների մօտեցման տաժանակիր աշխատանքը: Հասարակ մեխանիկական մօտեցումը, ինչպէս հասկանում են, անկարելի է: Իսկ թէ ինչպէ՞ս է նա դա անում, դադանիք է եւ պարզապէս հրաշք: Բայց մէկ բանը պարզ է. նրանից յետոյ հայերէն գրելը տակի հեշտ կը լինի: Թէ ինչպէ՞ս կ'օգտագործեն ապագայ հայ գրողները այն

ամէնը, ինչ կը նուաճի նրանց համար Հրանտը, աս անշուշտ հարց է, բայց ներանք այլեւս ուրիշ վրայ մեղք բարդերու առիթը չեն ունենայ, ուստի՝ կարելի է յուսալ...

Իմ եւ Հրանտի ընդհանուր ծանօթը, որը մոսկովեան գրող է, Հրանտին յանձնելու համար ինձ տուեց դրճերի եւ ամօսարկերի մի կապոց, տուեց մարդասիրական նկատառումներով: Դա ո՛չ շատաչ էր եւ ոչ էլ կարելոք: Բայց նա դիտէր իմ վերարկը մտնելը Մաթեոսեանի նկատմամբ եւ արեց ինձ համար այդ լուսութիւնը:

Այնտեղ կային նրա վերջին փողովածուները, մի ամսադիր, որտեղ հրատարակուած էր Մաթեոսեանի պատմութիւնը՝ անգլերէնով, իրենց Ալմասթայի ընկերով նոր դիրքը եւ մի քանի այլ գրութիւններ: Այս ամէնը եւ բաժանել էի երկու մասի եւ մէկ՝ միացնելով իրար, բընում էի մէկ ձեռքու մէկ, մէկ՝ բաժանելով բունում էի տարբեր ձեռքերում: Յետոյ միշտ էի, որ անհրաժեշտ է բարեւել եւ ամէնը տեղափոխում էի ձախ ձեռքում: Ես նրան ճանաչեցի անմիջապէս, այլ կերպ չէր էլ կարող լինել: Նա շարժուած էր արագ ու նպատակաւոր, երբեմն-երբեմն շրջանցելով անցորդներին: Բայց թոււում էր, թէ նրա ճանապարհը լոյսով ճառագայթի պէս ուղիղ է եւ շրջանցողները անցորդներն են: Ես նկատեցի նրան, երբ մեզ բաժանում էր 20 քայլ, ահա մտացել է 5 քայլ, երեք, մէկ քայլ, այլևս ոչ ոք չի խանգարում մեր հանդիպմանը...

— Նշանաբանը, — ասաց Հրանտը եւ տուեց մեր ընդհանուր ծանօթի անունը: Ես միայն լուռ ժպտում եմ ու պարզում եմ ձեռքս: Նա նիւար է, բարձրահասակ, բայց բաւականին լայնաթիկունք: Նա թեթեւ տեղում է ձեռքս, բայց զգում եմ նրա սեժը: Մեծ աչքերը մի փոքր կարմրութիւն ունեն, կարծես թէ բորբոքուած են, ու դրանից նրա սուր, ինչպէս հայկացիը աւելի խորթափանց է թւում: Եւ ընդհանրապէս նրա կերպարի մէկ զգացում էր մի ինչ որ բարբառածութիւն՝

Հինց այս խօսքը սկզբից մտաւ իմ գլուխս եւ մնաց հետագայում՝ որպէս նրա գըլխաւոր բնագիծը:

— Եթէ զուք չէք շտապում, — ասաց նա, — գնանք:

Նա անմիջապէս յետ դարձաւ եւ մենք անմիջապէս սկսեցինք շտապել:

Ես չեմ հասկանում, մենք իսկապէ՞ս շտապում ենք, թէ սա նրա սովորական քայլուածքն է: Ես յանձնում եմ նրան գրքերը եւ ամսագրերը: Նա քայլելով աչք է անցկացնում:

— Այո՛, այո՛, գիտէք, շատ լաւ է, տեսել եմ, կարգացել եմ, լաւ է... Օ՛, Ալմասթացին արդէն հրատարակել է իր գիրքը: Վերջապէս: Ձեզ դո՛ւր է դալիս:

— Ոչ, — ասում եմ ես, — դուր չի դալիս:

— Այո, ճիշդ է, վաս զիրք է, — համաձայնում է նա, ասանց փոխելու ձայնը, կարծես թէ գոյում է, — նա մեր բարեկամն է, ես ուրախ եմ, որ գիրքը վատն է: Նա շատ պաղ է: Նա պաղ դրող է, իսկ դա չի կարելի, դա անհնարին է, համաձայն էք:

Ես որակաւթեամբ համաձայնում եմ: Մենք սրբնթաց շարժում ենք դէպի ո՛ւր, միայն ինքը գիտէ: Հաւանաբար ոճնորոն: Ես արդէն պատկերացնում եմ այն խանգարիչ աղմուկը եւ լոյսը, սեփական անձարութիւնը եւ կաշկանդուածութիւնը, դժուարութեամբ տարուող խօսակցութիւնը, որը երբ կը բացուի ու կ'անցնի անկեղծութեան շրջանը, կը դայ մատուցողը ու կ'ընդհատի մեզ ու ամէն ինչ պէտք է սկսել սկզբից... Ու պիտի քեզ այնպէս պահես, թէ անտարբեր ես այս ամէնի նկատմամբ, պիտի ձգձգես վերջին բառերը, իսկ յետոյ հարբես ու թքես ամէն ինչի վրայ... Ենտոյ սկսուելու է չոզ պիտի վճարի՞ կուր, կարծես թէ երկուսիս զրպաններն էլ լեցուն են դրամով եւ սա դատարկ բան է, ձեւակաւնութիւն, բայց լաւ է ես, ոչ, ոչ՛ ես, բայց նա մի քանի բառ էլ կ'ստի մատուցողին հայերէնով եւ նա դէն կը դնի իմ ձեռքս, եւ ես շիոթուած, բայց թեթեւացած, կը ժպտամ...

— Ո՛ւր ենք մենք գնում, — վերջապէս հարցնում եմ ես:

— Ինչպէ՞ս թէ ուր, մեր տուն, — պատասխանում է Հրանտը, — այստեղ մօտ է, հետու չէ:

Մենք մտնում ենք մի նոր, մեծ տան բակը: Վերելակում առևտրէնով նա կատակում է մի օրիորդի հետ, հասնում ենք դրանը, զանգ եւ, ահաւաստի, Հրանտ Մաթեոսեանի բնակարանը:

Ինձ շատ դժուար է նկարագրել այն երեկոն. նա մնացել է յիշողութեանս մէջ խօսակցութիւններէ առանձին հատուածներով, առանձին դէմքերով ու ինչպէս ասում են՝ պատկերի առանձին կողմերով: Բայց ես յատկօրէն յիշում եմ, որ սկզբից մինչեւ վերջ ինձ յիշողեց ուրախութեան զգացմունքը, հաճոյքի, յարմարութեան, ներդաշնակութեան զգացմունքը: Ոչ մէկ վայրկեան ես չ'ենդեցի, ոչ մէկ վայրկեան ես ինձ օտար չըզգացի: Տարօրինակ բան, այնպիսի զգացմունք կար, թէ իբր Հրանտի ընտանիքի անդամները խօսում էին իրար հետ առևտրէնով, որ, անշուշտ, բացառուած էր: Նրա կիսը գեղեցիկ, խելօք մի կին էր, որը ունէր հեզնանք եւ բարեացակամ փափկութիւն: Նա զարմանալի անկաշկանդ եւ արժանապատուութեամբ խօսում է առևտրէնով... Նրա նման: Այստեղ ես կուլ եմ տալիս անականը, որովհետեւ «վատ», «օխալ», «անզրազէտ» բառերը չեն սազում Հրանտի եւ Վաթիկէի լեզուին: Աւելի շուտ՝ ես կ'տսէի, որ նրանք խօսում են փոխաւ: Լեզուից այն կողմը զանուղ մի ինչ-որ հիմք կար նրանք ոչ-ճիշդ խօսակցութեան մէջ, նուրբ լեզուագիտական ներքմբռնում կար այստեղ: Եւ ահա դրանից էր, որ երբեմն այս կամ այն փոխուած նախադասութիւնը թուում էր աւելի հարուստ, քան մաքուր ուսեւրէնը: Բայց երբխաները՝ աղջիկը, որ տըղայից մի Ծ տարով մեծ էր, խօսում էին առևտրէնով գրեթէ ասանց սխալներէ եւ ժամանակ առ ժամանակ ուղղում էին Երնողներին: Մենք Հրանտի հետ նայեցինք բնակարանը:

— Ահաւասիկ, — ասաց նա, — նոր եմ ստացել: Հիւանայի բնակարան է, չորս սենեակ, երազ, ապրիլը ու հրհուրը, բայց սարսափակի է պատրաստուած, անկարելի է ապրել: Դռներն ու լուսամուտները չեն փակուած, շրջակայքը պոկուած են, դաճը թափուած է, խողովակները ծակ են, պատերի մէջ մասի հաստութեամբ ճեղքեր կան: Մտածուած էի, թէ փառք Աստուծոյ, վերջապէս առանձին եմ, բայց երկու ժամ աշխատելուց յետոյ հաստատ կը հիւանդանամ: Վերանորոգման համար Ծ հազար ոտքի է պահանջուած, իսկ ես չունեմ...

Ես ժտեհեմ եմ սեղանին եւ, վերապէս, տեսնուած եմ սեղանի վրայ հայերէն տառերով տպագրական մեքենայ:

— Ինձ սա դուր չի գալիս, — ասուած է Հրանտը, — տատերը ուզիլի են, ոչ-արդիական, տես ինչպէս է սպրտ:

Նա ցոյց է տալիս ձեռագիրը:

— Իմ նոր գիրքն է: Իսկ սա միւս օրինակն է, սրա տառերը թէք են, սա ինձ աւելի է սաղորտ...

Ես երկար նայուած եմ հիւսուած տառերին, փորձուած եմ հասկանալ իմաստը, բայց ոչ, ոչինչ չեմ հասկանում: Իմ տառով տրամաբանութիւնս ուշացնուած է ինձ յուշել, որ չեմ էլ կարող հասկանալ: Ես ուզում եմ սովորել հայերէն, խնդրում եմ: Ոչ, ոչ թէ եկրոյ տարի, ոչ թէ վաղը, այսօր, այս վայրկեանին: Մի՞թէ դա անկարելի է: Եստ անհրաժեշտ է, խնդրում եմ: Անկարելի է, աներեւակայելի: Սա ի՞նչ ապուշութիւն է, ի՞նչ տխմարութիւն: Որքա՞ն ստորացուցիչ է, որքան ցաւալի... ամբողջ կեանքի ընթացքում չեմ միտնարուի...

— Իսկ դու որի՞ վրայ ես գրում, — ուշքի գալով հարցնում եմ ես:

— Ոչ, ոչ, — շարժում է նա գլուխը, — միայն ձեռքով, այլ կերպ չեմ կարող:

Ուրիշ օրի՞մ է, որի՞ն արձակ: Ձեռքը պէտք է ինքը... Եւ յանկարծ կարում է ձայնը ու կախում զլուրի:

— Լաւ, իմ մասին յիտենք, չարժէ, իմ ամէն ինչը պարզ է:

Ես նայում եմ դարձացած: Ինչո՞ւ է այդպէս խօսում: Լայն ճակատ, խիտ յոնքեր, խոշոր դէմք, որը նկատուած է դէպի կզակը, նիհար այտուկի արտայայտիչ դիմ: Դէմքեր կարողաւու չիմական մեթոդով նա ունի գեղարուեստական կերպար, զգայուն է, ունի ստեղծագործական մեծ տախ, բայց սուր ողբերգական նկարագիր: Ծաղկող զրոյանազէտի նա նման չէ: Այս ամէնը լաւ: Բայց ի՞նչ հոպեկան ծանրութիւն ունի: Յանկարծ նա կրկին ողբերգուած է:

— Գառմիկ, աւելի լաւ է մեր բարեկամի մասին: Ինչպէ՞ս է, յաճախ ես տեսնում նրան, առո՞ղջ է, աշխատո՞ւմ է, տրամադրութիւնն ինչպէ՞ս է:

Հրանտը վերցնում է իմ բերած գրքերից մէկը, թերթում է ու ասում.

— Այ սա, նա շատ փայլուն է գրել: Սա էլ շատ լաւ պատմուածք է: Իսկ այս մէկը (առանց ձայնը փոխելու) ես չեմ սիրում, սա ձեւական է: Նրա վերջինն էլ շատ լաւն է: Ես նախանձում եմ նրան, երջանիկ մարդ է: Նա պարզապէս մտածում է եւ դա արդէն գրականութիւն է:

— Այո, դա այդպէս է: Բայց դու էլ այդպէս ես, — ասում եմ ես, — ահադին դժուարանալով այս գրուածի հետ վարժուելուն: Տարբերութիւնը միայն մտածելակերպի մէջ է: Դու էլ մտածում ես եւ դա արդէն գրականութիւն է: Բայց զո՞ մտածելակերպը ուրիշ է, աւելի առարկայական է: Գո՞ մտախօսքը ոչ թէ միտք է արտայայտում, այլ՝ առարկայ, մարդ, կենդանի, ծառ, տուն: Բայց որովհետեւ զո՞ սրբ առարկաները դատարկ չեն, այլ ողբ ունեն, վախճանուելով՝ նրանք որպէս նիւթականութիւն անցնում են խօսքի մէջ ու կարողանում են պահել իրենց ողին:

— Ձգիտեմ, — ասում է նա, — գուցե՞ այդպէս է... Միեւնոյնն է, իմ կացութիւնը անյոյս է:

Նորից: Ես սա ոչ մէկ կերպ չեմ հասկանում: Ինձ դուր է գալիս նրա վատտանութիւնը, բայց ես չեմ հասկանում դրա պատճառը: Զի կարող պատահել, որ

նա իմ նման մտածի, նման մտքից ես շատ հետու եմ, բայց պարզու՞մ է, որ հենց այդպէս է:

— Ի՞մ կացութիւնը անյոյս է, — կրկնում է Հրանտը:

Փոքր, մահացող, արդէն մահացած մշակոյթ ունեցող փողովորդի վերջին միայնակ դրող: Դրող՝ առանց ընթերցողի: Ես դիտեմ գրեթէ իմ բոլոր ընթերցողներին՝ կա՛մ անձամբ եւ կա՛մ էլ լսել եմ նրանց մասին: Նրանք իմ ծանօթներն են:

— Ասա, խնդրեմ, կարո՞ղ է գրողը դրել իր ծանօթներէ համար:

Ասարափելի է, ինձ համար զարմանալի մտքերի համբնկում: Բայց մէկ քան է իմ վերացական դատողութիւնները, եւ բոլորովին ուրիշ՝ այս կենդանի ճակատադիրը: Ահա թէ ինչ ծանրութիւն է նա կրում իր մէջ՝ մշտապէս, առանց զիջումների եւ երեսակայութիւնների:

Մի ինչ որ քան պէտք է ասել, պէտք է ոչ թէ հտակացողութիւն ցուցաբերել, այլ առարկել: Ես պատմում եմ նրան, թէ ի՞նչ տեղ է նա զբաղում հայ արձակի մէջ, թէ նա նշանակութիւն պիտի ունենայ ապագայ գրականութեան համար, եւ նա փոքր ինչ ուրախանում է:

— Ո՞վ գիտէ: Ո՞վ կարող է դուշակել ապագան: Ամէն ինչ Աստուծոյ ձեռքում է: Պէտք է աշխատել, պէտք է շարունակել, ուրիշ ելք չկայ...

— Ի միջի այլոց, ընթերցողների մասին, դու շատ ընթերցողներ ունես Ռուսաստանում, — ասում եմ ես եւ պատմում Կիւեից ստացած հեռագրի մասին: Նա չի թաքցնում իր ուրախութիւնը եւ ծիծաղելով հարցնում է.

— Եւ ի՞նչ, դու իսկապէս կուհեցիք, թէ ում մասին է խօսքը:

— Ոչ մէկ ըստէ չկապածեցի, ինչպէ՞ս կարող էի կասկածել, երբ...

Ու այստեղ արդէն ես սկսում եմ իմ գովեստները, որոնք դուրս են գալիս շափի ու ճաշակի սահմաններից, բայց տեղին են. ես հիմա էլ դրանում համոզուած եմ, տեղին են, երբ խօսում ես իսկական

դիրք գրող արուեստագէտի մասին: Անկարելին իրական դարձնելու համար եւ եւզած բոլոր պաշարներից տակին վատնելու համար, էլ ո՞ր վճարումը կարող է ասել համարուել: Բոլորը քիչ են, վճարում ընդհանրապէս պէտք չէ, բայց լըռուն էլ յանցանք է, պէտք է դուրս, եթէ դուրսու համար կայ ամենափոքր առթիւ: Յանցանք է լռել ու չվերադարձնել հեղինակին՝ ստացուած տաքութեան գոնէ մի փոքր մասը: Այստեղ, ինչպէս միշտ կեանքում, ասելի լաւ է շատ, քան պակաս վճարել:

— Ասեմ, թէ ինչո՞ւ եմ ես այս ամէնը քեզ պատմում, — դիմում եմ եւ Հրանտին, — նրա համար, որ դու ընթերցող ունես Ռուսաստանում, ուստի՝ արց է ծագում, թէ ինչպէ՞ս ես դու վերաբերում թարգմանութիւններին:

Մաթիւսեանին թարգմանում է Անահիտ Բայանդուրը: Իմ կարծիքով՝ թարգմանում է շատ լաւ: Լաւ ուղեբեկն լեզու, ճիշտ արձակ, որը բնական ձևաւորումներ, բայց առանց չափազանցութիւնների:

— Օ, օ, օ, վատ, — բացակնչում է Հրանտը եւ ծածկում երեսը ձեռքերով: — Վատ, Իւրա, — կրկնում է նա, — վա՛ս: Ձգիտեմ, ինձ դժուար է դատել, դուցէ այլ կերպ չի կարելի ասել, դուցէ այն՝ ինչ անում է Անահիտը, գազաթնակէտ է, բայց նրա թարգմանութիւնները, դա նրա գրքերն են, եւ եթէ նրանք դուր են գալիս ուսու ընթերցողին, ապա ես ներան յաջողութիւն եմ ցանկանում, այս բանում իմ արժանիքը շատ քիչ է: Անահիտը խելացի է եւ տաղանդաւոր, բայց ես ծանր եմ դրում, իմ լեզուն ծանր է ու դժուար, իսկ նա թեթեւ ցատկում ու թռչկոտում է: Ոչ, դա ես չեմ...

Ու կրկին անսպասելիութիւն: Ու կրկին ինձ դուր է գալիս նրա ծայրայնութիւնը: Ամէն ինչ ճիշդ է: Ձի կարող իսկական գրողը իրեն օտար լեզուով գրուածի հեղինակը համարի: Անշուշտ, դա ինքը չէ: Բայց ես ստիպուած եմ որոշ զիջումներ կատարել, վերագրել նրա ասածը ծայրայնությունների, որովհետեւ,

Հակառակ դէպքում, պիտի ստիպուած լինէին խոստովանելու, թէ չեն կարգացել Մաթեոսեանին: Իսկ եւ զգում եմ ու վառահոտ եմ իմ զգացմունքին, որ, այնուամենայնիւ, կարգացել եմ Հրանտ Մաթեոսեանին: Ես համոզուած եմ, որ սրբան էլ անկարելի լինի թարգմանութիւնը, այնուամենայնիւ, մի ինչ-որ կարեւոր բան, որը Հրանտ Մաթեոսեանը դրել է իր անհասկանալի հայերէն գրքի մէջ, ինձ ասուել է Անահիտ Բայանդուրի գրքից: Եւ գուցէ դրա լաւագոյն ապացոյցը այն է, որ իմ առջեւ նստած մարդը իր բոլոր հիմնական գծերով համապատասխանում է այն հեղինակին, որին Պս պատկերացրեցի, երբ կարդացի նրա դիրքը: Եթէ ես կարդացի ու սիրեցի մի դիրք, ապա դա նշանակում է, որ ես սիրեցի նրա հեղինակին, այսինքն՝ սիրեցի այն կերպարը, որը ծնուեց նրա գիրքը կարգալիս: Իսկ եթէ ես, տեսնելով հեղինակին, հրաժարուեցի, ուրեմն ես վատ էի կարգացել նրա գիրքը:

Հրանտ Մաթեոսեանի տունը այն տներէն էր, որտեղ կերակրում են նոյն-իսկ երեկոյեան ժամը 11ին: Մենք խմբիկով Հրանտի հետ մի-մի գաւաթ կոնեակ, որից յետոյ մեզ քերեցին հաւով փլու, որի մասին միայն երազել կարելի էր: Մենք նստած ենք փոքր սեղանի շուրջ, ուտում, խօսում եւ խմում ենք:

— Հարաւ լաւն է, — ասում է Վաթինէն, — Հրանտի մայրիկն է գիւղից ուղարկել...

Ու ես յիշում եմ այն պատմութեանը, որտեղ մայրը իր քաղաքացի տղային գիւղից հառ, մածուն եւ 600 հատ ձու է բերում, որպէսզի մտային աշխատանքից տղայի ուղեղը չցամաքի:

— Այո՛, այո՛, — եխտաղում է Վաթինէն, — մածուն էլ է ուղարկել: Գուցէ երեւի իսկական մածուն չէք կերել, խառնութիւնները զու մածուն չէ, վերջացրէք, յետոյ անպայման կը տամ, որ փորձէք: Ոչ, ոչ, ես այլեւս ուտել չեմ կարող, մենք, ընթրել ենք, բայց Հրանտը կ'ընկերակցի, նա այնքան ազաւ է, ո՛ւր է այս ամէնը գնում, չեմ հասկանում...

Մենք խօսում ենք ամէն ինչի մասին, մասնաւորապէս գիւղական արձակի մասին, որին մեր երիտասարդ քննադատները, բնականաբար, մասնակից են համարում նաեւ Հրանտին: Մենք համամիտ ենք, որ սուս «Գիւղացիականներէց» երկու-երեքը առնուազը մի քանի ստեղծագործութիւններում աղնիւ են, տաղանդաւոր եւ յարգանքի արժանի: Բայց այդ ամէնը Հրանտին չի վերաբերում:

— Լաւ դրողներ են, — ասում է Հրանտը, — ես ցանկանում եմ նրանց յաջողութիւններ: Ես նախանձում եմ նրանց: Նրանք երջանիկ մարդիկ են...

Ոչ, այս ամէնը նրան չի վերաբերում եւ ոչ թէ նրա համար, որ սուսական գիւղը նման չէ հայկական գիւղին, տարբերութիւնը աւելի խորն է՝ թէ՛ Եսրդկային եւ թէ՛ գրական իմաստով:

Միայն Հրանտի պատմութեանը կարգալից յետոյ, ես հասկացայ, որ իմ նախկին վերաբերմունքը գիւղական արձակի նկատմամբ ազատ չէր որոշ վերապահումներից: Կեանքի ճշմարտութիւնը ճիշդ խօսքերով ու վարքագծերով արտայայտելը այն վերջական նպատակն է, որին ձգտում եւ որին երբեմն հասնում են հեղինակները: Եւ թուեմ էր, թէ այդ վերջին սահմանը թելադրուած էր հենց նիւթով: Ի՞նչ կարելի է պահանջել գրողից, եթէ ոչ ճշմարտ գիւղական կեանք, որը զուտազուտանք չէ հարուածային աշխատանքի ցնորքներով, կուտնտեսային ստատութեամբ եւ շրջկամի քարտուղարի իմաստութեամբ: Նկարագրել կեանքը այնպէս՝ ինչպէս նա է՝ անտանելի ծանր, ա՛յնքան ծանր, որ անհասկանալի է, թէ ինչպէս է նա յաղթահարում գիւղական կենսունակութեամբ:

Եւ հենց այնտեղ էլ վերջանում էր անհասկանալին, այստեղ կտրւում էր հոգու խորքերը տանող ճանապարհը: Հրանտ Մաթեոսեանը առաջինն էր, որ ցոյց տուեց այդ աննայրածիր խորութիւնը, հոգու այդ անյայտացող նուրբ շարժումները, հոգի հետ կապուած մարդու հոգեկան կատարեալ լինելը:

Ես չեմ յղճի եւ երբեք չեմ մոռա-

նայ շնորհակալութիւն յայտնել մեր դիւ-
զական զբողիքներն՝ կեանքի ճշմարտու-
թիւնը նկարագրելու համար, որովհետեւ
հետ չէ ձեռք բերել այդ ճշմարտութիւ-
նը: Բայց Հրանտ Մաթեոսեանը ուրիշ
կարգի դրող է ու չի կարելի նրան զասել
ուրիշների շարքին: Նա սկզբունքով ուրիշ
դործով է գրադուած: Վարձաքովի ու գէղ-
գերի ճշմարտութիւնը նրա համար խօ-
սակցութեան առարկայ չեն, որովհետեւ
լինքնաստիճան հասկանալի են: Նրա զը-
րոյցը ընթերցողի հետ այլ խնդրի չուրի
է: Նա խօսում է հերոսի ներքին կացու-
թեան մասին՝ տրամադրութիւնը, դաս-
տիարակութիւնը, զգացմունքները, զըր-
դապատճառները, այս ամէնը նկարագրը-
ւում են բոլոր նրբութիւններով՝ ո՛չ պա-
կաս եւ ոչ էլ աւել՝ բալտը, ու մշտապէս
զգում ես նրանց անվերջութիւնը ու ան-
ընդգրկելիութիւնը: Ընթերցելիս, օրինակ,
մեզ շատ կարեւոր է ըմբռնել, որ հեղի-
նակը տուեալ առարկայի մասին դիտի
շատ աւելի շատ, քան պատմում է,
պարզապէս նա այդ մասին գիտի ա-
մէն ինչ: Բայց մեզ համար շատ աւելի
կարեւոր է համոզուել, որ հեղինակը ըզ-
րում է նկարագրածը եւ ո՛չ միայն այն
տեսանկիւնից, որ ինքը անմամբ մասնա-
կից է ու սպրում է գէղգեբը, այլեւ ըզ-
րում է ամէն ինչը՝ բոլոր նրբութիւննե-
րը, բոլոր կողմերը, գործողութեան բազ-
մամտութիւնը եւ հերոսի զգացմունքների
անծայրածիր դաշտը: Եւ Մաթեոսեանը
հեղից այդպիսի հեղինակ է: Նրա արձակի
ժողովը ունակութիւնը ներառում է իր
մէջ ո՛չ միայն այն առարկայութիւնը,
որը զգացնել է տալիս հողի անհարթու-
թիւնը, մարմնի ջերմութիւնը, մայնի
բարձրութիւնը, այլեւ՝ շատ աւելի մեծ
բան՝ մարդու ոգին, նրա աստուածային
էութիւնը: Այդ ոլորտում ոչինչ չի կա-
րելի պնդել, առաւել եւս ոչ մի բանի մը-
րայ չի կարելի վստահ լինել: Ու չնայած
նրան, որ Մաթեոսեանը երբեք չի հըռ-
ւակում հոգեկանութիւն, միայն այդ ան-
սովոր մեղով կարելի է խօսել նրա նկա-
րագրածի մասին՝ Մարդ Աստծոյ, Աշ-
խարհ Աստծոյ...

Նա հարցնում է ինձ իմ սպաւորու-
թիւնների մասին: Ես պատասխանում եմ,
որ նրանք ինձ դուր չի գալիս: Նա զըր-
կում է գլուխը եւ ասում.

— Անտանկի, Անտանկի քաղաք է,
սա պարզապէս Հայաստան չէ:

— Իսկ հայերը ինձ դուր են գալիս,
եւ նոյնիսկ շատ, — ասում եմ ես: Նա
համաձայնում է: Ես հարցնում եմ նը-
րանից, իսկ որտե՞ղ է Հայաստանը, եթէ
ոչ Նիւհամում, որտե՞ղ է Պուլցէ Կիրովա-
կանո՞ւմ, չէ, լուրջ, որտե՞ղ է Հաւանա-
բար սարերում, դիւղում:

— Զգիտե՛մ, — ասում է նա տխուր,
— ես այլեւս չգիտեմ, թէ որտեղ է Հա-
յաստանը:

Այո, նա դիւղում էր, այնտեղ աւելի
երկար մնաց: Բայց այժմ գիւղն էլ է փը-
շացել, ամէն ինչ կորցրել է: Նա դարձել
է այն նոյն դատարկ քաղաքներն, ինչ որ
քաղաքն է:

— Զկայ Հայաստան, Իւրա, ո՛ւր էլ
որ փնտոս, չկայ, կայ միայն Հայաս-
տանի մեր կարօտը:

— Բայց դա ամէն տեղ է այդպէս,
— առարկում եմ ես: Կերպարի, ի սկզբա-
նէ արժէքների կորուստը բնորոշ է բո-
լորի համար, նոյնիսկ Ռուսաստանում...

— Ոչ, — շարժում է նա գլուխը, —
ամէն տեղ նոյնը չէ. հայերի համար, ի
տարբերութիւն աշխարհի բոլոր ազգերի,
կրօնից հրաժարուելը կործանիչ եղաւ:
Քրիստոնէութիւնը հայերի համար ոչ թէ
շատ բան էր, այլ ամէն ինչ էր: Զէ՞ որ
Հայաստանը աշխարհի առաջին երկիրն
էր, որ քրիստոնէութիւնը պետական կը-
լոն հռչակեց: Հայերը կարծես թէ միայն
սպասում էին դրան, բացարձակապէս
պատրաստ էին դրան: Եկեղեցին դարձաւ
մեզ համար պետութիւն, զպրոց, գիտու-
թիւն, գրականութիւն, մշակոյթ: Աստը-
ծոյ տանալը հայի համար մնում էր հո-
գեկան եւ կազմակերպչական կենտրոն,
նոյնիսկ այն ժամանակ, երբ նա արդէն
կորցրել էր այդ նշանակութիւնը մնացած
բոլոր քրիստոնէայ ժողովուրդների հա-
մար: Նոյնիսկ լեհերի ազգային կեանքում
եկեղեցին չէր խաղում այդքան բացառիկ

դեր: Սակայն լեհերը պատուով տարան իրենց կաթուղիկութիւնը բոլոր կրակներին միջով, իսկ հայերը հողեպէս աւելի թոյլ գտնուեցին, չղիմացան, չպահեցին, հրատարուեցին ու մնացին առանց ոչինչ: Եւ, չղիտեմ ինչպէ՞ս ուրիշներին, բայց հայերի վրայ դա էժան չի նստելու: Ես չղիտեմ, չղիտեմ՝ կը զիմանա՞նք մենք որպէս ազգ, միայն հրաշքը կարող է մեզ փրկել:...

Նա միառժամանակ ուրիշ կողմ է նայում, եւ երբ հայեացքը կրկին իմ կողմն է դարձնում, նրա աչքերում ես արդիւնքներ եմ տեսնում, իսկական արդիւնքներ: Այս է՞նչ մարդ է:

— Դէ՛, դէ՛, — նստեց իր սիրած ձիու վրայ, — քնքշաբար փնթփնթում է վաժինէն, — հիւրասիրուէ՞ք, խնդրեմ, թէ չէ նա մեր գլուխը կը տանի, այս նիւթը նրա համար անսպառ է:

Ես փորձում եմ առարկել Հրտնտին, ես խօսում եմ ազգային ողու զազանքի մասին, ասում եմ, որ այդ ողին զարմանալի կայուն է ու ճկուն, իսկ նա ասում է.

— Խմենք, Իւրա, խմենք զրականու-

թեան կենացը: Նա միակ բանն է. որ մընացել է մեզ այս անտանելի աշխարհում, մեր միակ ապաստանը եւ մխիթարութիւնը:

Հիանալի խօսքեր էին եւ մենք խմում ենք:

Երեխաների քնելու ժամանակն է: Ես հրամայում եմ տալիս:

— Հաղորդէր մեր բարեկամին, — ասում է Հրանտը, — որ իմ նոր պատմըւածքը կոչում է. «Աստծոյ լոյսը՝ իմ խղի լոյսն է»:

— Նա մեր այսօրուայ լիւ Տոյստոյն է, — ծիծաղում է վաժինէն, — գրում է բարոյական խնդիրների մասին եւ վերանայում է ամբողջական նախապատասխաններով:

— Անպայման հաղորդէր, — լուրջ կրկնում է Հրանտը, — որովհետեւ, երբ դուք նրան կարգաք, նա բոլորովին ուրիշ փերնազիր կ'ունենայ: Իսկ իրականում հենց այդպէս. «Աստծոյ լոյսը՝ իմ խղի լոյսն է»:

ԵՈՒՐԻ ԿԱՐԱՔՉԻՆՍԿԻ

Նշխարներ

ԿԱՐԻ ԱՆՎԱՏԵԼՈՒՉ...

Մեր նախորդ թիւով ընթերցողը որոշ դադար մը ունեցաւ Հրաչ Զարգարեանի «Մեր կեանքը» վէպին երեսներէն հրատարակութեան մասին, իմա՛ անոր մէջ թոյլ տրուած յապաւումներուն, ազնաւումներուն եւ անյարգալիք վերաբերումներուն:

Վէպին խորագիրը («Մեր կեանքը») կըող նոյն հատորին մէջ առնուած են ուրիշ շորտ կտորներ եւս, շուրջ ութսուն էջերու վրայ, — «Սիւսանքո եւ իր սօրը», «Գրիգոր Զօհրայ», «Անվերադարձ մեկնումի գիշերը» եւ «Ժամանակ եւ խորհուրդ իւր» գործին առաջին մասերէն հատուածներ:

Առաջին երկուքը, այսինքն՝ Սիւսանքոյի եւ Զօհրայի մասին գրուածները լոյս տեսան վաթսունական թուականներու կէտերուն, եւ երեսներէն հատորին մէջ՝ «Մեր կեանք»էն աւելի բախտաւոր չէ եղած անոնց կեանքը: Յապաւումներ, նրբերանդային խախտումներ, իմաստային տակնուվրայութիւններ իրարու հետ կը մրցին զարձեւել, անհանդուրժողութեան ու թափթփածութեան զոյգ շարժումներով: Երեսներէն հրատարակութեան մէջ, օրինակ, կը կարդանք. «Որպէսզի մագաչափ, ո՛չ իսկ ակնքարք մը չազատուի մեծվայելութիւնն իրենց դէմքին»: Այս նախադասութեան մէջ ի՞նչ կը նշանակէ «չազատուի», ինչո՞ւ պիտի չազատուի մեծվայելութիւնը, այդքան՝ ազատուի բան մըն է մեծվայելութիւնը, որ զբաղէտ մը այնքան խնայողանար անոր դէմ, շունչ չտար անոր հոչ իսկ ակնքարք մը»: Մեծվայելչութիւնը իր լրիւ իմաստը կը հագնի, երբ ազատենք զայն «չազատուի» բային անհեթեթութենէն ու կարդանք ճիշդը. «Որպէսզի մագաչափ, ո՛չ իսկ ակնքարք մը չազատուի մեծվայելչութիւնն իրենց դէմքին»:

Չազատուին ո՛ւր, չազատուին ուր:

Այլ օրինակ մը, Զօհրայի մասին գրուած.

«Կը յիշեմ խօսակցութեան ծաւեցներ, ուրիշ կը ժայքէին իր անխառն, այլ կարի լաւտեսն եւ խորաբախանց հիացումները նորերու հանդէպ» («Նախիր», 1965, թիւ 27):

Երեսներէն հրատարակիչները, չենք գիտեր ինչու, անուշադրութեան հետեւանքով հաւանաբար, նախադասութեան մէջ ընդգծուած բառը, կարին, դրաբարեան շատը վերածած են կարգի, անհիշող ու բուրբոյլին անհամ բանի վերածելով գրագէտին մտածումը:

Շատ են օրինակները, որոնց կարելի է շունչ ընթերցողը, տրուած ըլլալով, որ մեր նախորդ թիւին մէջ տրուած նմոյշներէն ըստ ամենայնի յազեցած է ան:

Հեատքըբրական է սակայն կարգալ ինդրոյ առարկայ Հատորին մէջ տեղ գտած «Ալիամանք» եւ իր ոճը» գրութեանն զուրս նետուած հետեւեալ երկու հատուածը.



| 2 |

Դեռ մինչեւ իր վերջին տարիներուն, Ա. Ահարոնեան թէպէտ Հրապարակով կը տարփողէր զայն, ներքնապէս չէր դադրած տարուբերումներու անհատից, անոր մասնաւորապէս «նախամենարտական» արտադրութեան հանդէպ: Յաճախ կը հարցնէր ինձի թէ, իսկապէս, ի՞նչ էր հօրս կարծիքը անոնց մասին:

Իմ պատասխանէս վերջ, դեռ աւելցուցի թէ ի՞նչ կը մտածէին, ի՞նչ կրանգով, ժամանակակից մեծերը՝ Վարուժան, Քէզէհան, Ա. Յարութիւնեան, Ջ. Եսայեան եւ... Ինտրա, յատկանշական այն անկեղծութեամբ որ կը ցայտէ անկաշկանդ խօսակցութեանց ընթացքին: Ըսի նաեւ Ջօհրայի զուսպ ու խոր հիացումը, իր յօդուածը «Ազատամարտ»ի մէջ նոր կը նկնէր բնորոշել բանաստեղծին Գործը, վերլուծելով առաջին հատորներէն մէկուն տխուրը, ծանրանալով անոր արտակարգ ինքնալուստութեան վրայ, անոր թելադրական ուժին վրայ, — 'Ինքզինքդ'ն... Այդ ծիակ բառը՝ ծակբայը — եւ արդէն ո՛ւր տեսնուած էր ծակբայ մը՝ իբր տխուր հատորի մը — կը խլատացնէր իր մէջ, կ'ողնկոյէր, կը խորհրդանշէր ամբողջ ժամանակաշրջան մը, սերունդներու շարք մը, իրենց կեանքովը, իրենց իտէալներովը: Այդ ժամանակաշրջանը, հոգեվարքի եւ հերոսական խոյանքին, այդ ժամանակաշրջանը առանց Սիւսանթոյի վերին վկայութեանը՝ կը նուազի, կը որբանայ, կը թառամի...

- Դո՛ւ ինչ ես մտածում, հարցուց:
- Ե՛ս... ես՝ լուս կը զգամ ինքզինքս, թեւեր կ'առնեմ, աշխարհը կը փոխուի ալքիս, ինքզինքս հզօր կը զգամ: Անպարտելի պաշտպան մը կեցած է ետեւ... Ե՛ս ալ կը մղուիմ զոյնելու բռունցքս, հոգիս բռունցքիս մէջը, — պատասխանեցի, թէպէտ դեռատի նորահաւատի իսկական մոլեռանդութեամբ, բայց՝ զիչ մըն ալ դիտաւորեալ պարոնեանական լիրիզմով:
- Ներքին ազուրկ հրճուանքով մը.
- Նորից եմ կարդալու, եզրակացուց:
- Մեր յաջորդ հանդիպումին՝ համաձայնեցաւ որոշ գիշումներ կատարել: Բազմաթիւ հատուածներ դոց էր ըրեր:
- Ա՛յ, սա իսկ որ շատ լաւն է.

Այս գիշեր երազիս մէջ, ձեռքս առի գրեզ, ո՛վ փայտախօս Սրինգ, Երթունքներս գրեզ քանցան՝ ինչպէս հուրոյր մը հիմ օքերու, Բայց շունչս՝ յիշատակներու զարթնումէն, յանկարծօրէն մեռաւ. եւ երգիս տեղ՝ շիթ առ շիթ, շիթ առ շիթ, արցունքներս էին որ ինկամ վար...

— Բայց դու ինձ ասա՝ ի՞նչ ես հասկանում սրանից.

Երեմուէ ու երկաթէ մարմիններով,
Գիշերուան քաշունքը բոյարը մէկէն,
Անծանօթ ծովերու դարաւոր՝
digitised by A.R.A.R.©

Մարմարէ ու կրամիթէ փերէն,
 Ձեմ գիտեր կ'ըք, քարայրի մը մէջ գետնափոր,
 Մուրթն արիւնած իրենց ծաւը մեռելակամ
 Գիշեր մը, փաթարիկներու ամենի գիշեր,
 վայրագօրէն մահերգելու եկամ:

— Հարկ է Հետախուզական աշխատանք կատարել բայն ու տէրբային
 դանկու համար, աւելցուց եւ սեղանին վրայ դրաւ դարձեալ՝ էջ մը թուղթը
 ուր ընդօրինակեր էր հատուածը: Իրաւ ալ՝ խօսքը այդքանով ալ դեռ չէր
 վերջացած, պարբերութիւնը տպագրական ամբողջ էջ մը կը բռնէր:

— Ձէ՛, սա չեմ կարող ընդունել... — աւելցուց, դու՛նք երեքցնէին,
 ապրանք մը աննողի թէ շաննողի տարակուսանքով:

Ինծի կը թուի որ Ահարոնեան խորքին մէջ կը զգար Սիւսանթոյի ինք-
 նայատկութեան ու բանաստեղծական ժայթքին մեծութիւնը, բայց կ'աշխա-
 տէր չիյնալ քայլ դուրս ոտքին զարնուող նորութեանց մէջ մի խութիւն ու
 դանկ սեփարանական հիմք մը այդ «արտականոն» ու «սահմանազանցումի»
 սիրահար զերթողութեան: Մնաց մեծ պաշտպան մը անոր յիշատակին, նուր-
 րականացնելով իր բարեկամութիւնը անոր հետ որ սկսած էր ժընեւէն ու Փա-
 րիզէն եւ ամբաստանած թիֆլիս, Ս. Զաւարեանի անիւնին փոխադրման օ-
 րերուն:

Պէտք է ըսել միջանկեալ, որ երբ Ահարոնեան իսկապէ՛ս կը մխրճուէր
 դրականի մթնոլորտին մէջ, վիճարանութեանց ընթացքին, ոչէ՛մքը կը մնար
 ողողուած մեծ հրճուանքի մը լոյսովը եւ իր համարումները կը ծառանային
 վաւերական խնարհութեան դեմնին վրայ:

Զարմանալի չէ ուրեմն, որ արտայայտութեան, ոճի այն նորութիւ-
 նը, անոր յեղափոխիչ, ցնցող, տակնուվրայ ընող նկարագիրը մղէ դրաբար-
 ները այլազան բացատրութիւններ ճարելու, որոնց կարգին նաեւ ազդեցու-
 թիւնը դրական դպրոցներուն:

(Հարկ է յայտնել որ այս խորհրդածութիւնները կատարուած են ա-
 ւելի շուտ ժամանակաշրջանի տեսանկիւնէն: Այլապէս, այսօր, այդ լեզուն
 մեզի բնաւին արձանագրային կամ ափոքալիփսեան հանելուկներու թարթա-
 փումները չի պարտադրեր: Իր խորհրդանշումները անմիջականօրէն ունեւլի
 են: Անկէ ի վեր, միջազգային հրապարակին վրայ, այնպիսի անսակ տեսակ
 ոճերու եւ սկզբունքներու հանդիպեցանք, որ Սիւսանթոյիսը այսօր մեզի կը
 յայտնուի դասական բիւրեղացումի մը ճանաչումովը):

(«Նայիրի», 1966, քիւ. 42)

Այս ձգտումին, այս փրիզ թը ֆոնսիամսին փոխարէն, մեծ շփոթ մը
 կը տիրէ՝ ո՛չ միայն Սֆիւռքի մէջ, այլեւ Երեւան: Արեւմտահայ մտածու-
 թեան համար, վաթսուներորդ արի ատար վերջնականապէս ցուցակադրուած,
 ցանկի անցուած, քաթալովէ եղած մարդիկ, նորէ նոր, Երեւան շրջանառու-
 թեան մէջ կը զէն: Մարդիկ որ իրենց յանդերով ո՛չ միայն բանաստեղծ չեն,

այլ եղած են բանաստեղծութեան ինչ լըլլալը սպասուցանելու, նորէ նոր դուրս կը բերուին իրենց դադաղներէն — դերեզմանի թէ կեանքի — ո՛չ թէ իբր հետեւանք վերագնահատական նոր փորձի մը — դէ՛լ ազէկ — այլ՝ իբր հետեւանք լուրջ ծանօթութեան թերիին: Մարդիկ, որոնք իրենց կեանքովը կ'ապացուցանեն Փրիւտոմներու, Թարթիւֆներու յաւերժութիւնը, մեծ հայրենասէ՛րի, հերոսի ծիրանիով կը պատուին:

Վարուժան եւ Աւետի, օրինակ, տարբեր բաներ են: Սեւակ հազիւ կը յաջողի թափառել «միջակ» քերթողական սահմաններուն շուրջ: Դեռ այդքանին ալ վստահ չեմ: Իր մտածումները, զգացումները արմատ չեն ձգած, թրխաջ են, ժամանակ չեն ունեցած կրելու խմորումներ, դառնալու հուր-վիճակներ: Ձեն կրեր իր բանաստեղծութիւնները երկունքի մը կնիքը, նուիրականացումը: Անմիջական, անհակակչիւ դիւրիմին զղացումը, իր դործէն, կը խաթարէ ամէն վայելք: Արուեստի էական մտահոգութիւններ չեն թուիր միջամտել իր յղացումներուն: Ձկայ նաեւ զաղափարական մեծ, արտապետող կերք մը որուն սզուցուածքներէն զեղարուեստական յոյզը սուղուէր: Ո՛չ ալ ամենակալ տաղանդը իր մօտ բաւականին հզօր է՝ վերջի րոպէին կարկուտու համար պահանջները: (Անշո՛ւշա, այս բուրբը կ'ըսուին անյօդ զեզումով մը եւ առանց հիմնուորելու դիտաւորութեան որով այլապէս պիտի նպաստաւորէին մտածումներուն երանգները):

(«Նայիրի», 1966, թիւ 44)

Կարդալէ ետք յապաւուած այս զոյգ հատուածները, կրնայ ընթերցողը ըսել, ի՛նչ կայ որ, տեղի անձկութեան պատճառով կարելի է տասնութ էջոց յօդուածէ մը զեղչել երկու կամ երեք էջ եւ անպայման զաղափարական հակադրակրողներ չկարենալ հանդուրժելու միտք մը պէտք չէ տեսնել նման արարքներու ետին:

Ստալինեան մոսկովի բանադրուած արեւելահայ թէ արեւմտահայ գըրոզներուն երեսնեան վերհրատարակութիւնները ա՛յնքան դառն փորձառութիւններու դուռ բացին, որ միամիտ ըլլալու ո՛չ մէկ պատճառ ունի խօսքի ազատութիւնը թանկագին համարող մարդը: Տեղի անձկութեան կամ նըման չքմեղանքներու որեւէ ինզիբ չկայ հոս, այլ կայ մտայնութեան անձկութեան մը մարանչող անհեթեթութիւնը միայն:

Յապաւուած այդ երկայն հատուածներուն առիթով պահ մը ընդունինք սակայն բարեմիտներուն աւարկութիւնը, թէ... եւայն: Բայց ինչպէս պիտի դիմաւորենք հետեւեալ բարեփոխութիւնը, որ կատարուած է քսաներկու էջ անդին, «Գրիգոր Զօհրապ» անուն յաջորդ գրութեան մէջ:

Արտասահմանեան տարբերակը.

«Սովորութիւն ըլլած էր հայրս, տօնական առիթներու, հաւաքել գոնոմ իր երգիքին տակ: Այդ օրերուս մեր յարկարածիւր նեղ կու գար: Յիշելու համար միայն Քանի մը ամուսն ա՛լ ընդմիջտ նախակամացած, — կամիտաս, Եանուարտեան, Ա. Իսահակեան, Ա. Ահարոնեան, Ակնուսի, Եանբիկեան, Ս. Միգասեան, Զաւարեան, Սիւսանքո եւ ուրիշներ: (Իսահակեան դեռ չէր ամուսնացած, իսկ Ահարոնեանին ընտանիքը կովկաս կը գտնուէր)»:

(«Նայիրի», 1965, թիւ 27):

Երևանեան հրատարակիչները պէտք զգացած են այնքան խոր երկիւղածութեամբ դրազէտին յիշած քիչ անունները (զա՛լ ընդմիշտ նուիրակահացած) աւելի քիչցնել, դուրս նետելով վերը մեր կողմէ ընդդժուած անունները (էջ 273) :

Ակնունին, Շահրիկեանը, Ս. Մինասեանը հանդուրժողները, պիտի մըտածեն մարդիկ, պատճառ մը չունին Ահարոնեանի եւ Ջաւարեանի անուններէն խրտչելու : Ուրիմն, թիւրիմացութիւն մը կայ մէջտեղ եւ ոչ թէ միտում մը : Այդպէ՞ս է սակայն իրականութիւնը : Դիտաւորութիւնը իսկոյն գլուխ կը ցցէ, երբ կը հաստատենք, որ յաջորդ հատուածէն չջացած է նաեւ սա պարբերութիւնը :

«Անարմենանի պատմելու հմայքը կը յաջողէր երբեմն լռութիւն մը հաստատել, բայց ոչ երկար : Այս հաւաքոյթները ո՛չ զազունի էին, ոչ ալ զազունի կը մնային» :

Նման բաները, պիտի ըսենք, զազունի չէին ու զազունի չէին մնար այն տակն հարկաւ, երբ խորհրդայինը մաս չէր կազմեր հայ կեանքին : Յայտնին սկսաւ զազունի դառնալ, երբ խորհրդային բարքերը սկսան թափանցել մեր գրականութեան մէջ : Հայաստանի դժբախտներուն եւ միայն հայաստանեան հրատարակութիւնները կարողացող արտասահմանեան անոնց բախտակիցներուն զազունի մնացած յայտնինէ՛րը :

Մարդ իրապէս կը սարսափի դասական դէմքի մը հայաստանեան վերհրատարակութեան վրայ աչք նետել :

Առաւել կը սարսափի, երբ անոնց մէջ կատարուած նախճիբը համակերպութեամբ հանդուրժող մարդոց կը հանդիպի :

Կարի կը սարսափի, երբ կը հաստատէ, թէ նոյն կշիռով կը շարունակուի թէ՛ նախճիբը եւ թէ՛ անոր գիմաց մարդոց որդեգրած լռութիւնը, զճորտին վայել յայտնութիւնը :



Կ Ա Թ Ի Լ Ծ Ո Վ
(ԳՐԻՇ ԴԱԻԹԵԱՆ)

Պրիշ Դուսթիան նոր անուն չէ պարսկական
բանաստեղծութեան մէջ եւ, իբր այդպիսին, ըն-
թերցողը հասուն դարձ մը կարգալու ակնկալու-
թեամբ կը բանայ իր Վաքիլ ծով անուն հատո-
րը, որ լոյս տեսաւ 1962ին, Քեհրանի մէջ:

Դժբախտաբար, սակայն, ո՛չ սերունդներու
յաջորդականութիւնը, ո՛չ երեսասարգական տա-
րիներուն յաջորդող գրական փորձասուսթիւնը եւ
ոչ իսկ ամբողջ պարսկական զարուժը շնորհ երկրի
ներքին թէ արտաքին վերիվայրումներն եւ առա-
ջացած սուր ազդեակները կրցան բան մը փոխել
մեր պարսկական բանաստեղծներու ջանքերիչ մե-
ծամասնութեան կեանքն ու բանաստեղծութիւնը
ընկալելու եզանակին մէջ...

Նախապէս արտայայտուած ենք այս ուղղու-
թեամբ, մաղթելով միաժամանակ, որ հայրենի
բանաստեղծութեան մէջ զրուարուած վերաթաղ-
մացման ճիշդը, Սեւակէն մինչեւ Դաւոյեան,
Էդոյեան, Յարութիւնեան կամ Մարտիրոսեան,
լեզուական եւ բանաստեղծական ճշակոյթի ճամ-
բով, իրենց բարերար ազդեցութիւնը բերին պարս-
կական մեր եղբայրներուն փերթողական երգերուն
մէջ, որովհետեւ միշտ ալ արեւելական բանաս-
տեղծութեան ուսնողները աւելի մեծ ազդեցու-
թիւն ունեցած են այնտեղ...: Իսկ պարսկական
բանաստեղծներու մեծամասնութիւնը ընդհանրա-
պէս ինկած է եւ կը մնայ զարակիղրի բանաս-
տեղծական սկզբունքներու ազդեցութեան տակ:

Վերջինիս մասնադասութիւններուն գլխաւոր-
ները կարելի է տեսնել Պրիշ Դուսթիանի Վաքիլ
ծով հատարին մէջ, որ կը բազմաձայն վեց բա-
ժիւններէ — Հայրենակամ սուն, կանոյ ազրիկ,
թէժ ազրիկ, կրքանկութեամբ եւ Սփիւռնից առ
կայրնիք: Հատարին նիւթախորագրերնրը բաւա-
կան յատակ դադափար կու տան լեղեղակին լե-
սաբարբութիւններուն ճասին:

*
*
*

Ընդհանրութիւններու մէջ չմտալու ճամբը,
պիտի փորձենք քանի մը պարզ օրինակներով
յտնախնայել մեր մասնադասութիւնը:

Երանայր մէջընդմեջ կը բերնէք զՆախագում
digitised by

խորագրով բանաստեղծութեան, որ գրուած է
տէրեանական եռամսնի շաբաթով, ուր Տէրեանի
ազդեցութիւնը միայն բանաստեղծական ոտքերով
չէ սահմանափակուած:

Վիրաւոր աւ սգոյր, մեծաւոր աւ մայր, կը գնամ
ես անհետ, իմ մերժուած սիրոյ կետ,
վշտով իւր. սրտմտօք, կեանքով, անաւոր
այս սպով, ուզու կետ
կը գնամ քայքայուած (էջ 21):

Հասկնալիքին զանաւոր այս ուղղով ճարտչին
ճամբան երկուր չի կրնար ըլլալ:
Կամ՝ զէչ ետք, կը հանդիպինք մեծարեցեան
սա առջեւուն. Վարդանան՝ բանաստեղծութեան
մէջ:

Վճարայրիկ, ետքս, շուրքերս են ծարաւ...
Թող, որ ցրգազին սեզան՝մ շեզ կըմէխս (էջ 28):

Ընտրուած մէջերումները կը հանդիսանան
յայտուն օրինակները Դուսթիանի կրած ազդեցու-
թիւններուն: Հաւանաբար կարելի էր աւելի ինք-
նուրոյն կամ մերձ մտղեր գտնել նոն, ինչ որ
երկրորդական է այս պարագային, որովհետեւ
Դուսթիանի կամ պարսկական բանաստեղծներու
մեծամասնութեան ստեղծած ազդեցող կու դայ
դարասկիղրի ծանօթ յայտններու շարունակական
կրկնումէն, ինչ որ զիրենց կը նկատ պատկերե-
րու, շափերու, բառապաշարի (կարելի է տես-
ցընել նաեւ դասական ասուսթով ճիւղմաններու)
նոյն ջրապոյտային մէջ, որով ո՛չ բանաստեղծու-
կան լեզուն, ոչ ալ յշտօք կը փոխուի, իսկ նոր
պայմանութիւններու փնտառչին սեղ, աշխարհ-
ընկալման շին արահետները կը գտնենք շարու-
նակ:

Բնականաբար կրնայ շարք տրուիլ, որ բա-
նաստեղծ է մը մեկնած իրաւունք ունի՞նք նման
ընդհանրացումներ կատարելու պարսկական բա-
նաստեղծութեան առնչութեամբ: Սակայն, ինչ-
պէս բերնէք, ստաղին անգամ չէ, որ կ'արտայայտ-
ւինք այս կապակցութեամբ եւ, նոյն տանն, ուր
մասնադասութիւնները փարատող ստեղծարարը կը
զգուսին մեզի...
A.R.A.R.@

Հարցը կը դնենք որպէսզորին, որովհետեւ ճիշդ գողութիւններու մէջ, ներկայիս Պարսկաստանը առ ժնանման թիւը կը ներկայացնէ բանաստեղծութեան արտօնութեան և բանաստեղծութիւն փորձող տղայի կը բաւէ բանայ ճիշտի բանաստեղծական էջը, տեսնելու համար տարբեր սերունդներու, մանաւանդ նորերու ստորագրութիւնը այնտեղ, սակայն ճիշտ այս երկին շրջաններու

դարասկիզբի բանաստեղծական սկզբունքներէն, մանաւորաբար աշուղական պարզունակ կրկնութիւններէն դուրս գալու հաւաքական կեցուածք մը, այն ատեն, զժողովուրդը, պիտի ստիպուինք զեռ կրկնը սպասել պարզահայ ինքնուրոյն, նորոգութեան և ուժական բանաստեղծութեան մը ծաղկումին:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԻԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԾԱՆՌՈՒԳՆ ՀԱՆՂԵՍ ՄԸ՛

«ԱՅԼԱՓՈՒՈՒՄՆԵՐ»

Յետ երկարատեւ խորհրդակցութիւններու և կարծիքներու փոխանակման, զբաղիմքի մասին թարեկամ Փոլ Շառուշի և իր ընկերները յաջողութեամբ մարտին առկայ իրենց երազին և հրապարակ իրենց յիշատակը «Այլափոխումներ» անուն բանաստեղծական համաժողովի հանդէսին տրուելին թիւը, ամառ — 1938:

Վաթսուհական թուականներու վերջին տարիներուն ևս իրականացան թուականներու երկուրորդ հնգամեակին գրական հրապարակ իջած առաջը բանաստեղծներէ և մէկ գեղանկարչէ կազմուած խմբագրական կազմը, փաստորէն, ի մի կը խորհէր հիմնուած և անբաժանելի անուններ: Փոլ Շառուշի, Ալան Ուստին, Իսա Մարտի, Քարոյն էլ Լուսինի, Պատմա Նաթան, Մուշեղը Հայրապետի, Լուսինի Ծարխա Սասուկ, Անճու էլ Մարտին — մարտի — Մարտի էլ Արտուրի, Պատմա Մանուկ և Արշէ Արտի կը կազմեն խմբագրական հարուստ կազմ մը, որուն հետ գործակցած առաջին թիւի հանրածանոթ այլ անուններ (Ուստին էլ Նաթ, Կարոյն Լուսին, Ելիսա Լուսին, Ալան Պայտան, Ուստին Սասուկ, Արքան Պառուշ, Մուշեղը Ալան Պայտան, Մուշեղը Ալան Պայտան...) առանց վարկ մը կ'ապակուին ճիշտ փաստերով: Թեմա մը համարայ էլած այս հանդէսին:

Առաջին թիւը բացող խմբագրականին մէջ, զմեռնայ ժամանակին, պատերազմներու, պարտութիւններու, գահափոխումներու, և իրականացան, ընկերային ու մշակութային վատարմաբանութիւններու ժամանակին մէջ բանաստեղծական շքերք մըս հարցադրումը կատարելով՝ հանդէսը կը գրէ. «Այլափոխում տարբերութիւնն է անկիւսման տարբերութիւնը, որ կը ծնի այն անհամար փակ ու նոց յաւանցիքն վրայ, որ մէկ արտատրութիւն, ըստ մէկ այլի և մէկ իստի գտն ուրիշ ո՛չ մէկ բանի կը բաւէ: Այլափոխում տարբերութիւնը, որ կ'առնէ կրկնապատկուած արկածային դրամային սեւը: Պատասխանելով խմբագրական միջոցին վրայ դուրս խոյսցած հարցումին՝ արկածային դրամային: Անոր համար կարգուստի արկածային դրամային,

որպէսզոր մնայ անփոփոխ հարցում մը: Բանաստեղծական ու մարդկային հարցում մը, կարծաւոր՝ քարտէսի մը վրայ, որ կրթիչ լուսարտի տիւնը արձաններու ծիսակատարութիւններն և յախտնական երկատարութիւններն ու անձնատարարութիւններն: Ընդդիմացի ուղիքայք մը, զոր կը պատրեմ մտազեայ յիշատակները: Բայց անկախ, ընդդիմացի անկարգը, կը շարունակ մնայ կարծի մը, որ արգելուած կը զայլի մտազեայ արկածները վրայ: Անոր արկածները վրայ: Հարցում մը՝ հարցումներուն մէջն, այսինքն՝ բանաստեղծութեան հարցումը: Հարցում մը, առաջացած՝ բոլոր հարցումներէն:

Այս իսկ պատճառով, բանաստեղծութեան բացարձակ հարցադրումը կատարող «Այլափոխումներ» կը մերտէ պատրաստի բոլոր պատասխանները, զինք կանխած բոլոր կարգախօսներն ու անտաթիւնները: Եւ արդէն, այս հանդէսը իր գոտիքին իմաստը կը գտնէ հարցումը իր անտարա հասանակներով: Թեմա մըս վրայ միայն պակաս, զայից բոլոր հարցումները կարծաւոր ընդդիմացի մայր տեսչութեան մէջ: Անո թի ինչու անկա կը զգտի բոլոր անկարգներն և յիշատակներն անդիպած ու միմիայն իր մերկութեամբ յատկանշուող բանաստեղծութեան, զայիտմանակ բաժանումին, որ կը բխէ գրանաստեղծութեան անփոփոխ անդրադիմացի գրական շնորհածն ազատագրութեան բանաստեղծութեան, բայց գրութեան հասնելու յանգուցն առաջնորդութիւնը:

Այլ իստի՞ «Այլափոխումներ» կը զգտի գրանայ ինքն այն բոլոր բանաստեղծութիւններուն, որոնք զինքն հետ կը բերեն իրենց զինուորատակած և ոչ-ճնադատական բանալիները և զանմէ կը կրնն իրենց մէջ:

Եւ այս հանդէսը, որ զայս կը տեսնէ, որպէսզոր միշտ զայից մնայ, որպէսզոր միշտ մնայ շքերի, մտատանջ ու անհամարտ [...] կ'երազէ անկնի արարական բոլոր անաններուն և իրականումներուն վրայ բացուած բաց տարածութիւններն՝ իրականացնելու համար իր գալու բանաստեղծու-

կան երազը: Իր անկախ երազը: Երազը, որ դուրս
չու գալ պարտադրեմքնաւ եւ պատկերագրեմքնաւ
փյառակներում մէջեմ անբարկները ճնշեալ կա-
ռու ծիլի մը պէտք:

175 էջեր հաշուող Վլյափոխումներու առա-
ջին թիւը, իր առաջին 80 էջերը ինքնազիր բա-
նաստեղծութիւններու յառկացեալէ ետք, Վերջ-
աւայրները անուան տակ կը հրատարակէ իրանան-
ցի հրէու գեղանկարիչներու՝ Եաֆից Ապպուտի
վիճակորդարտութիւններն ու Մանուս էլ Ջի-
պուտի մատնանկարները, որոնց կը յաջորդէ
Քարգմանկան զրահանութեան բաժինը: Հոս, առ-
աւջին շերտին, կը կարգան Ապաս Ռապէնի կող-
մէ Քարգմանուած ժառ Տիպանի բանաստեղծու-
թիւնները, ապա՝ ինչորոշ առարկայ բանաստեղ-
ծին հետ Մանուս էլ Ջիպուտի ունեցած հար-
ցարոյցը: Քարգմանկան բաժինի երկրորդ
զեմքն է յոյն ժամանակից բանաստեղծ Ծանիս
Ռիթուս: Համարի երրորդ եւ վերջին բաժինը՝
«Քոչմանք», նուիրուած է անցեալ տարուան
այս օրերու իր կեանքին վերջ մը դրած լիբա-
նանցի բանաստեղծներին մէկուն՝ Ռաշի Հասիի:
55 էջեր բաղկացած այս բաժինով՝ Վլյափո-
խումները կը մեծարէ Ռաշի Հասիի բանաստեղ-
ծական վաստակը: Բաժինը կը բովանդակէ ու-
սումնասիրութիւններ, ցնծապատական էջեր, ան-
տիպ գերթուաններ անձնական եղած այս բա-
նաստեղծին եւ անոր իշխանակին նուիրուած Հա-
լիմ ժըրուտաթի վիճակորդարտութիւնները:

ՄլախիՅային հուանական ճիգերով մեզա-
ւորուած Թրպիլիներէ զուրկ, անշարժ եւ մակե-
րնային ժամանակի մը մէջ, վերջերս հրատարակ
իլած այս հանդէսը կը զգտի հարթի ի՛ր հետա-
պարէ՛ն՝ իրեն մշակութային իրազիտակը այլա-
փոխող յանդուգն հարցում մը: Երկուստարդական
արհեստով, փորձառական անձեղնումներով, անմեա-
զրոյժ եւ նոյնիսկ զերար ժխտող գերթուաններու
բազմաձայնութեամբ՝ Վլյափոխումները կը ջնջ
միակորթուն հրատարակութիւններու ժամանակը
եւ օպիտակ տարածութեան զրոյ լայն կը բանայ
իր երգչախմբային ժամանակը:

Հակառակ Արեւմտան զուտ բանաստեղծա-
կան եւ զիջազրտական յատակ դիմացին ունեցող
հրատարակութիւններուն հետ ունեցած իր սերմ

կազմի, այս պարբերութիւնը կու գալ յարու-
թիւն տարու «ՄԵ՛ր» հանդէսի օգիտին: Արդարեւ,
անոնք՝ որոնք նոյնիսկ կառնցիկ գաղափար մը
ունեն արարական ժամանակակից բանաստեղծու-
թեան վերջին երեսուն տարիներու հուղիւթին
մասին, անպայման ծանօթ են 1500 տարուան զա-
սական աւանդները յեղաշրջած եւ յառաջապահ
բանաստեղծութեան մը ժամանակի շիճարդման
մէջ «ՄԵ՛ր» ունեցած մեծ զերին:

Յառաջապահ բանաստեղծութեան մը ենթա-
կող պատարասած եւ բանաստեղծական շահա-
ցութիւնը արդի մակարդակներու բարձրացուցած
նուսֆ էլ Ռալ — Աստիկ — Ռեոտի էլ Համ —
Շարուֆ Ապու Շարա — Մուհամմէտ Մադուֆ
սերունդին բանաստեղծական ամպիտին՝ «ՄԵ՛ր»-ի
օգին վերակենդանացուցած Վլյափոխումները
համարյա կ'իլէ բախաւոր մեկնակէտ մը, այս
սինքն՝ աւելի քան տասնամայ փորձառութիւն
մը խոստացած եւ զինք կտնտած զուտ բանա-
ստեղծական ժիւ հանդէսին նուամած թիրախին:
Ահա թէ ինչու Վլյափոխումները կը գոռոյ
թերթը ո՛չ թէ բանաստեղծներու, այլ՝ ամպիտը
ընդգիճազիր գերթուութեան: Ամպիտային,
յանմեառու, պահպանողական եւ ոչ-բանաստեղ-
ծական նպատակներու ծառայիչուած, ջաղաքա-
կանացուած գերթուանին հակադրուելով՝ այս
հանդէսը կ'արձակուի նորարարական զայանդ-
ներէ, հեռապնդելով իր յատակ եւ փոստայի նը-
պատակը, — յազմահարչ աւանգապաշտ, Փուշ-
լորիկ, յանմեառու կամ սպառողական արտա-
դրութեան վերածուած միապաղաղ բանաստեղ-
ծութեան շարագած ու ծանօթ ժամանակները
եւ հաստատել մաքրամաքուր բանաստեղծութեան
սմառուանը ու անհանդարտ, զապրուած եւ սպա-
րեցնող յարափոփոջ ժամանակը:

Այլ խօսքով՝ բանաստեղծութեան յազմանա-
կը:

Եւ Վլյափոխումներուն առաջին համարը,
իր ճոխ բովանդակութեամբ, բազմերանց եւ ինք-
նատիպ ստեղծումներով, թիւը հասարակչուած
բաժիններով ու յակապէս ի մէջ խմբած ուշա-
գրուած անուններով՝ կու տայ փաստը իր կարգա-
կանութեան եւ շահեկանութեան:

ՄԱՐԳԻՍ ԿՐԻՍՏՈՍԵԱՆ



ԵԱՓԱՀԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՐԺՈՂ ԲԱՏՐՈՆԸ

Աւստրիոյ կառավարութիւնը ընկած է 200 տարուան կենսոյ ունեցող աւանդութիւն մը, որուն համաձայն՝ Վիեննայի պետական Վուլֆ-Քեաթրը Յատրնին մէջ, զերասաններուն արդիւնատէն էր բնագորութեան աւարտին եւս զարգացրիները բանալ աւ ընծ գալ, հանրութեան ծափողջնաններուն արժանանալու համար: Արգելքը եկած էր ժողով Ռ. կայսրին, որ 1776ին՝ Յատրնին հիմնադրութեան տարին կը շայտարարէր, թէ միայն արթայական ընտանիքը արժանի է ծափահարութիւններու, եւ զերասանները, պետութեան պաշտօնեաներ ըլլալով, իրենցմէ աւարտադաս են:

Աւստրիոյ անբարպետութեան հռչակումէն 85 տարի ետք, պահպանողական ըմբռումներու եւ նաշակներու այս ամբողջին մէջ տակաւին կը յարգրէր յիշեալ օրէնքը: Աւստրիոյ մշակոյցի նախարարը Հիլմուս Զիլք, այս աւարտան Քատեռական եղանակին սկիզբը, պաշտանական հրամանագրով մը վերջ կը դնէր այս օրէնք-սովորութեան: Սակայն, նախքան այդ որոշումը, տեղի ունեցած էին բազմաթիւ վիճարարութիւններ, որովհետեւ շատեր կողմնակից չէին նոր օրէնքին:

Քատեռարանը կը գտնուի Վիեննայի ամենէն բանուկ մէջ լըշանին մէջ եւ միայն քանի մը մեթր հեռու է Հայպարտիներու արթայական պալատին: Իր անմիջական շրջապատին մէջ կը գտնուին նաեւ ցաղաքին պետական օֆիսան, խորհրդարանը եւ համալսարանը:

Երկրորդ Ալեքսանտրոսի ընթացքին, ամերիկեան ուսանողները մը հետեւանքով՝ անկէա շրիթէ ամբողջութեամբ կը գանդուէր: Քատեռարանը կրնայ ընդունել 1-100 անձեր: Անոր հանդիսանանները ընդհանրապէս միջին տարեկի եւ պահպանողական մասնագութեան տէր ցաղաքացիներ են: Հետեւարար, շատեր կը խորհին, թէ անեան կրնան դժգոհել նոր որոշումէն:

ՎԻՐՃԻՆԻԱ ՎՈՒՆԻ «ԹԱՐՄ ԶՈՒՐ»ԻՆ ԲԵՄԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Հնգանդերի ընթացքին, Նիւ Եորք համալսարանին մէջ բնագորուեցան Վիրճինիա Վուլֆի միակ Քատեռարանը՝ «Թարմ լուրքը» (Fresh water):



Քատեռարանը արտատվող էր մէկէ անկէ պատճառներով:

Նախ՝ երկօրեայ զերակատարներու շարքին էին աւանկարտ դրուշ, նոր վէպի սակփրաններէն Ալին Ռուպ-Կրիշ, անհիթիթի Յատրնին կեդրոնական զէմքերէն իսէն իսնէնքո, Նաթալի Սարթ եւ ուրիշներ: Ապա՝ Վիրճինիա Վուլֆի Յատերադութիւնը կը ներկայացուէր... Քրանտիլենով:

Հետագորականօրէն, անդիպելի նշանաւոր վրայասնուհիին զօրքը գրուած չէ լըշօրէն թեմականացուելու միտումով, այլ՝ Վուլֆի նշանաւոր Պրումպլըրի լըշանակը զուարճացնելու համար:

«Թարմ լուրքը կը ներկայացնէ հեղինակին ազգականուհիներէն Փիլիս Մարկարէթ Գամերոնի, Ալֆրէտ Քեննիքտի եւ Ճորճ Տրեմերիթ Ուտթի կենսոյն ամուսան իրական եւ երեւակայան զրուակներ:

Քուպրին տասնին պատճէնը գրուած է 1928ին, անկէ քան տասնամեակ մը ընացած զբաղտուհիին դարակին մէջ, ապա անոր մէկ անկէ սեղմ տարբերակը բնագորուած է 1936ին, քարկանաներու լըշանակի մը մէջ, Վանկաս Պէլի ի պատիւ տրուած հաւաքոյթի մը ընթացքին: Անուանը եւս զերէր վերջուցան են մասնորականներ կամ արեւտապէսներ, ինչպէս Քատեռարուհիին անուանելը՝ Լէտարա Վուլֆ, Տանքըն Կրանթ, Վանէտա եւ Փիլիան Պէլ եւ ուրիշներ:

Քուպրը, որ անցեալ տարի Քարգմանուած է փարիզեան իւլիթի մը համար, գարձան է այս տարուան Նիւ Եորքեան Քատեռական եղանակի ամենաշահեկան ձեռնարկներէն մէկը: մա՛նաւանդ՝ երբ իսնէնքո ընծ կու գալ... Ալֆրէտ Քեննիքտի զերով:

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԳՐԻԳՈՐ ՊԸԼՏԵԱՆ

Վ Ա Յ Ր Ե Ր

— Բանաստեղծութիւններ —

- Փարիզ, 1983, 157 էջ, գիմ չէ մշտում:

Վ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

Յ. Յ. Դ. ԳԱՂԱՓԱՐԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ

- «Ազգայն Շարաֆորեակ-Դրօշակ»ի մատենաշար — քիւ 11, Պէյրութ, 1983, Համազգայինի «Վահէ Արքեան» տպարան, 151 էջ, գիմ՝ 15 լ. սակի, այլ երկիրներ՝ 4 տոլար:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ԱՏԱՑԱՆՔ

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ ԿԱՄՔՈՎ — յօդուածներ —
Արամ Եպս. Քէշիշեան, Պէյրութ, 1983, տպարան «Արագ», 236 էջ:

ԱՆՀԱՆԳՐՈՒԱՆ ՏԱՐԱԳԻՐՆԵՐ — պատմութիւններ —
Թորգոմ Փոստամեան, Լոս Անձելոս, 1982, «Ալֆօ» հրատարակչատուն, 243 էջ:


ՇԱՐԺՈՒՄ — քանաստեղծութիւններ —
Գեորգ Թեմիզեան, Հայէպ, 1983, 84 էջ:

ՋՐՈՒՅՈՂ ԵՒ ԵՐԳՈՂ ԻՆՎԻԿՆԵՐ — քանաստեղծութիւններ —
Անուշ Գրիգորեան, Նիւ Եորք, 1983, «Ոսկետառ» հրատարակչատուն, 272 էջ:

ՆԱՀԱՏԱԿ ՑԵՂԻ ԱՆՄԱՀՆԵՐ — պատմագրութիւն —
Տիգրան Քիմյ. Խոյեան, Պէյրութ, 1983, տպարան «Ալթափրէս», 222 էջ:

ԿԵԱՆՔԻՆ ԼԵՈՒՊԱՏԿԵՐՈՎ... Բայրոզներ
Մեարայ Հայուցի, Պէյրութ, 1983, «Կ. Տօնիկեան» հրատարակչատուն, 108 էջ:

ՍԻՐՈՅ ՄԱՀԸ — Բարոզներ —
Մեարայ Հայուցի, Պէյրութ, 1983, «Կ. Տօնիկեան» հրատարակչատուն, 79 էջ:



پاڪين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 المدير المسؤول
 السيد ارتين كارنيك قرانجيان

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

ԲԱԿԻՆ
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐՈՒՆԵՍԻ

Խմբագիր
 ԳՕՂՈՍ ՍՆԱԳԵԱՆ

Խմբագրության անդամներ
 ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԵՐԵԱՆ
 ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Վարչական պատասխանատու
 ՎԱՉԷ ԲՐՈՒՆՅԱՆ

B. P. 11 - 8404 - Beyrouth - LIBAN
 Tel. 296898

تشرين الثاني ١٩٨٣